№ 5 (223) XXII ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1912

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՏԱՐԲԱԼՈՒԾՈՒՄ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ ՃԻԳ

„Սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան այդ կազմալոյծ վիճակի մէջ ես տեսնում եմ գլխաւոր պատճառը այն իրողութեան, որ բանւորական շարժումը Ռուսաստանում այնքան դանդաղ է կազդուրւում ռէակսիօնի հարուածներից։ Յեղափոխութեան պարտութիւնը խլել է պրոլետարիատից նրա ինքնավստահութիւնը, նրա հաւատը դէպի իր դատը, իր կուսակցութիւնը, սոցիալ-դեմոկրատիան։ Եւ ո՞րտեղից առնէ նա այդ հաւատն ու վստահութիւնը, երբ ս.-դ. կուսակցութիւնը պառակտուել է, բաժանուել բազմաթիւ հատուածների, որոնցից իւրաքանչիւրը ուրիշ ոչինչ չի քարոզում պրոլետարիատին, բայց եթէ միայն անվստահութիւն դէպի միւս հատուածները։ Ինչպէ՞ս կարող է այդ պրոլետարիատը ձեռնարկել որևէ գործի, որևէ քայլի, երբ ամեն մի ֆրակսիօնի հաւանած քայլը պէտք է հանդիպի միւս հատուածների մերժումին ու արգելքներին։

„Քանի դեռ սոցիալ-դեմոկրատիան կը գտնւի ներքին տարրալուծման և թշնամութեան այդ վիճակում—նա ուղղակի խոչընդոտ է աշխատաւորական զանգուածների գործունէութեան. և այդ խոչընդոտը այնքան աւելի մեծ կը լինի, որքան աւելի ուժով է պահպանել կուսակցութեան ազդեցութիւնը։

Զանազան հատուածների միութիւնը ընդհանուր ձեռնարկների համար՝ նախնական պայմանն է ամեն մի աջող քայլի և նահանջիսանում է մեր ռուս ընկերների գործնական ամենածանրակշիռ խնդիրը *)։

„Ռուսական սոցիալիզմի հատուածների ժամանակակից վիճակում, „ի՞նչ անելու" հարցը շատ աւելի նւազ կարևորութիւն ունի, քան թէ այն, որ անելիք գործողութիւնները կատարւէին ընդհանուր, միացած ուժերով։ Որքան ես ինքս կարող եմ հետևել, իսկական տարաձայնութիւնները, որ բաժանում են ռուսական սոցիալիստների ահագին մեծամասնութիւնը, այնքան մեծ չեն, որպէս զի արդարացնեն կազմակերպական պառակտումը և փոխադարձ հակամարտութիւնները։ Բաժանողը աւելի շուտ անցեալի յիշողութիւններն են, քան թէ այժմեան աշխատանքի հակասութիւնները։ Թող ամեն մի հատուած ունենայ իր ձեղքերը, բայց ամենագեղեցիկ գործն անգամ ոչինչ չ'արժէ, եթէ յարուցանում է հատուածային գժտութիւններ։ Միւս կողմից. նոյնիսկ մի քայլ, մի ձեռնարկ, որ գոհացում չի տալիս ամեն մի քննադատող աչքի, կարող է այնուամենայնիւ մեծ ազդեցութիւն գործել և կենդանութիւն մտցնել պրոլետարիատի մէջ, եթէ այդ քայլը կատարւում է բոլոր հատուածների ընդհանուր ճիգերով...

„Եթէ աջողւի այդ մեծ գործը (ուժերի միութիւնը)՝ այն ժամանակ Ռուսաստանի պրոլետարիատն էլ վերստին կ'արթնանայ ու կը բարձրանայ, — և նրա ապագայ ըմբոստացումները, տարբեր ձևերով, արժանի կը լինին իր հերոսական անցեալին—նրանք կը լինին աւելի բեղուն և աւելի ուժեղ"...

Այս հմայիչ, զօրաւոր, փոքր ինչ ցասկոտ յորդորները չեն գալիս „Դաշնակցութիւնից", այլ մարքսիստական ուղղափառութեան քրմապետից—Կարլ Կաուցկուց *)։

Այդ յորդորները բնաւ չեն հնանում. ընդհակառակը։ Եւ քանի աւելի են սաստկանում նրանք, քանի աւելի է աճում Եւրոպայի և Ռուսաստանի մէջ ցասումն ու զզւանքը ռուս սոցիալ-դեմոկրատների ներքին պառակտման և անվերջ ու թունոտ բանակռիւների առթիւ՝ այնքան աւելի են կարծրանում այդ կուսակցութեան վարիչները, այնքան աւելի է սաստկանում նրանց աղանդական տենդը։ Ստորև զետեղած շրջաբերականը մի նոր ապացոյց է այդ ախտաւոր տրամադրութեան։

„Դաշնակցութիւնը", խոստովանում ենք, բաւական միամիտ էր, երբ, Վառնայի համագումարի մէջ, հրահանգում էր իր պատշաճ մարմիններին՝ աշխատել միութիւն կամ համերաշխութիւն առաջ բերելու ռուս յեղափոխական հատուածների մէջ։ Այդ վեհափառ օրթոդոքսները, որ մարքսեան ֆորմուլների անվերջ որոճալը գերադասում են—և միշտ էլ գերադասել են — կենդանի յեղափոխական աշխատանքից՝ արհամարհում են անգամ Կաուց-

*) Ընդգծումները մերն են։ ԽՄԲ.։

*) Տ. Վիեննայի ռուսական „Պրավդա" թերթը, No 23։

կիների և Ժօռէսների յորդորները, ո՞ւր մնաց՝ մ ե ր ը...

Միութիւնը անհնարին է առաջ բերել՝ անգամ ամենամեծ, ամենաընդհանուր կէտերի շուրջը, ռուս սոցիալիստներին անկարելի է լինում համաձայնեցնել՝ անգամ վայրագ բռնութեան դէմ կռիւ մղելու ստիպողական գործի մէջ։ Կաուցկու հետ ամենքը գիտեն, որ սկզբունքի տարբերութիւնները բաւարար չեն, որ „ռուս սոցիալիստների ահագին մեծամասնութիւնը բաժանող տարաձայնութիւնները այնքան մեծ չեն“, որպէս զի խաթարեն միութեան գործը, կամ գէթ ժամանակաւոր համաձայնութիւնն ու գործակցութիւնը՝ դժբախտ երկրի ամենադժբախտ դատի շուրջը...

Այդ իրողութիւնը շեշտում էին „Դաշնակցութեան“ պատւիրակները Կոպենհագի համառուսական միջկուսակցային խորհրդաժողովում։

Այդ իրողութեան վրայ ակնարկում էր և Ժօռէս, նոյն Կոպենհագի Ինտերնացիոնալի համագումար նիստի մէջ. այդ նոյն հրաւէրներն ու յորդորները մի քանի անգամ արել է նա և իր թերթում... յենւած Ամստերդամի համագումարի հանդիսաւոր որոշման վրայ— մի որոշում, որ ռուսները բւէարկել էին միաձայն։ Նոյն բաղձանքը—մասնաւորապէս Ռուսաստանի սոցիալիստական հատւածների միութեան առթիւ — բւէարկեցին ռուս ս.-ր.-ներն ու ս.-դ.-ները Կոպենհագում, քւէարկեցին դարձեալ միաձայն, առանց կուսակցական խտրութեան, Պլէխանովից մինչև Նատանսօն և Լէնինից մինչև Զերնով։

Բոլո՞ր ապարդիւն։ Եւ ահա միանգամայն իրաւացի ցասումով Կաուցկին է, որ գանգատւում է, բողոքում։ Նա կուզէր միացած տեսնել սոցիալիստական ամբողջ բանակը Ռուսաստանում։ Եւ նա անողոք ապտակներ է ուղղում իր համախոհ սոցիալ-դեմոկրատիային։ Որովհետև այդ կողմն է չարիքը։ Որովհետև այդ կողմն է գլխաւորապէս պառակտիչ ոգին, հատւածամոլ և դաւամոլ ոգին...

„Դրօշակ“ի նախանցեալ համարի մէջ հրատարակեցինք Միջազգային Սոց. Բիւրօի կողմից մեզ ուղղւած շրջաբերականը, ուր, որպէս պայծառ մի հայելու մէջ, երևան էր գալիս Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի այդ ախտաւոր պատկերը, նրա ներքին անմաքուր մրրցումներն ու կռիւները։ Ահա դարձեալ մի փաստագիր, որ նոյն Բիւրօն խնդրում է հրատարակել „Դրօշակ“ում։ Ծանր, սպանիչ տպաւորութիւն են գործում այդ փոխադարձ մտրակումները մի մեծ երկրի յեղափոխական բանակի մէջ, այդ փոխադարձ և մահացու ամբաստանութիւնները... և այն ե՞րբ... Լէնայի կատաստրոֆի վաղորդայնին և Զորրորդ Դումայի նախօրեակին, երբ ահագին կայսրութիւնը դեռ տնքում է մեծ ու փոքր Դումբաձէների մտրակի տակ, երբ պատասխանատու մինիստրները — Մակարովից մինչև Շչեգլովիտով — ցինիկօրէն հեգնում են ու ոտնահարում ժողովրդի արիւնն ու արդարութեան հիմքերը, երբ թագաւորը ընդունելով Սև Դումայի աշխատաւորա անդամներին՝ յայտնում է նրանց, թէ „գոհ չէ նրանց աշխատանքից“ և թէ յուսով է, որ գալ Դուման, Զորրորդ Դուման աւելի ևս սև կը լինի, աւելի „հնազանդ“, քան նախորդը...

„Դրօշակ“ի խմբագրութեան

Սիրելի քաղաքացի,

Միջազգային Ընկերվարական Բիւրօն ստացել է Լէնինից, ի պատասխան մեր հրատարակած շրջաբերականի, սոյն փաստագիրը, որ կը խնդրենք յանձնել Ձեր մամուլին։

Եղբայրական ողջոյններով՝

Քարտուղար ԿԱՄԻԼԼ ՀԱՑՍՄԱՆՍ

Բրիւսսէլ։

Սիրելի քաղաքացի,

Մի քանի արտասահմանեան խմբերի և երկու թերթի խմբագրութիւնների ընդունած որոշման առթիւ — որ յաւակնութիւն ունին պատկանել Ռուսաստանի Ս.-Դ. Բ. կուսակցութեան — ես, այդ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչս, հաստատում եմ հետևեալը.

1. Մի քանի տարի շարունակ չեն կարողացել ոչ գումարել որևէ խորհրդաժողով ռուսական կազմակերպութիւնների, ոչ էլ ստեղծել կամ վերահաստատել մի կենտրոնական կոմիտէ, որ կանողանար կապել այդ կազմակերպութիւնները.—իսկ կուսակցութեան այն խորհրդաժողովը, որ նոր տեղի ունեցաւ, աջողեց համախմբել կուսակցութեան 23 կազմակերպութիւններ, որ գործում են Ռուսաստանում։ Նրանց մեծամասնութեանը զրկւած տեղեկագիրը խորհրդաժողովի մասին՝ ամենուրեք շատ ջերմ ընդունելութիւն է գտել և այդ բոլոր կազմակերպութիւնները յայտնել են, որ պէտք է թեւտան խորհրդաժողովի ընտրած կենտրոնական կոմիտէին... Հետևապէս, մենք չենք կարող որևէ կարևորութիւն տալ արտասահմանեան փոքրիկ խմբերի բողոքին, որոնք չեն յենւած ոչ մի կազմակերպութեան վրայ, Ռուսաստանում գտնւող։

2. Ռուսաստանում գործող կուսակցութեան մարտիկների այդ խորհրդաժողովը, որի դէմ բողոքում են արտասահմանի այդ փոքրիկ խմբակները, զբաղւել է առանձին ուշադրութեամբ վերջինների կազմալուծող գործունէութեամբ և այն շփոթ ու քաոսով, որ նրանք յաճախ մտցնում են կուսակցութեան աշխատանքի մէջ, Ռուսաստանում։ Այդ խմբերը, որ կապ չունին երկրի ոչ մի կազմակերպութեան հետ, օգտւում են իրենց կատարեալ անպատասխանատուութիւնից և թոյլ են տալիս իրենց՝ խօսելու կուսակցութեան անունից։ Դա մի չարիք է, որ կրծում է մեր կուսակցութիւնը վաղուց ի վեր, շնորհիւ Ռուսաստանի քաղաքական ռէժիմի, որը մի կողմից ստիպում է մեզ գաղտնի գոյութիւն պահ-

պանել, և միւս կողմից ստիպում է մեծաքանակ մարտիկների՝ դուրս գաղթել և ապրել արտասահմանում։ Խորհրդաժողովը խստիւ դատապարտել է այդ խմբերի տարրալուծող աշխատանքը... Ուստի և կուսակցութիւնը չի կարող զարմանալ, այն հայհոյանքների վրայ, որոնցով այդ բոլոր խմբերը ձգտում են վարկաբեկել խորհրդաժողովը։

3. Բողոքի Ռեզոլիւսիօնն ստորագրողների շարքում մենք տեսնում ենք „Գոլոս Սոց.-Դեմոկրատա"ի խումբը։ Այդ ստորագրութիւնն արդէն շատ բան է ասում. նա մեզ պարզում է ճշմարիտ իմաստը այն ատելութեան արշաւանքի, որ մղւում է խորհրդաժողովի դէմ, թէ երկրում, լիկվիդատօրների ամուլի մէջ, թէ բուրժուական թերթերի և թէ նոյնիսկ արտասահմանեան մամուլի յայտնի օրգանների մէջ։ Իրողութիւնն այն է, որ կոնֆէրանսը (խորհրդաժողովը) մի ռեզոլիւսիօնի մէջ— ուր ամփոփած է մեր կուսակցական ներքին ուղղութիւնների ամբողջ պայքարը վերջին 4 տարուայ ընթացքում—առանձնապէս շեշտել և դատապարտել է վերոյիշեալ թերթի պաշտպանած ուղղութիւնը...

Այս բոլորից յետոյ միանգամայն պարզ է, որ այստեղ խօսք չի կարող լինել „յափշտակման" *) (usurpation) կամ „պառակտման" մասին։ Ռուսաստանի Ս. Դ. Բ. Կուսակցութիւնը դատապարտել է մի ուղղութիւն, որը իր՛ք և վաղուց արդէն խզել էր կատարելապէս իր կապերը կուսակցութեան աշխատանքի հետ, որը բոլոր ուժով ընդդիմանում էր կենտրոնական կոմիտէի վերաստեղծման և որը դարձնում է կուսակցութեան մէջ մնացած վերջին հաստատութիւնը (կենտրոնական կոմիտէի արտասահմանեան Բիւրոն) մի զէնք այն մարդկանց ձեռքում, որոնք կուզէին վերջ տալ կուսակցութեանը, լիկվիտացիայի ենթարկել այն" (խօսքերն են Պլեխանովի, որ կողմնակից չէ խորհրդաժողովի)։

4. Ինչ վերաբերում է ազգային կազմակերպութիւններին, ես պէտք է հաստատեմ, որ Ռուսաստանի Ս. Դ. Բ. Կուսակցութիւնը, իբրև այդպիսին, գոյութիւն է ունեցել դեռ 1906-ից, աւելի ճիշտ՝ 1907 թուից առաջ,—մի թուական, երբ ազգային կազմակերպութիւնները մտել են մեր կուսակցութեան մէջ։ „Բունդը" հեռացել էր կուսակցութիւնից 1903-ին և նորէն մտել էր նրա շարքերը 1907-ին։ Ուստի նրանք բացակայ լինելով խորհրդաժողովից, կուսակցութիւնը յանձնարարել է իր կենտրոնական կոմիտէին՝ սկսել բանակցութիւնները ազգային կազմակերպութիւնների հետ, վերահաստատելու համար նրանց հետ նորմալ յարաբերութիւններ։

Ն. ԼԷՆԻՆ

*) „Մենշեվիկները", ինչպէս յայտնի է, մեղադրում են Լենինի հատուածը՝ կուսակցութեան դրօշը և դրամները յափշտակելու մէջ։ ԽՄԲ.։

ՆՈՐ „ՀԵՐՁԻԱԾ"

Դարձեալ ռուս յեղափոխական բանակի մէջ... „Ամեն բան հոսում է"—հոսում է նաև Ռուսաստանի կուսակցական „իդէոլոգիան", գաղափարները, նշանաբանները, կազմակերպութիւնը, տակտիկը... Ոչինչ չի մնում կայուն, յարատև. երէկ „այնպէս էր", այսօր՝ „այսպէս"։ Դաւանանքի և տակտիկի ամենահիմնական կէտերն իսկ ենթարկւում են անողոք խոշտանգումների։ Եւ... այդ բոլորի համար պատասխանատու են հռչակում սովորաբար „նզովեալ իրականութիւնը", ցարիզմը... Ակներև է, սակայն, որ գլխաւոր պատասխանատուն, ամենագլխաւոր պատճառը այդ յաւերժական շփոթի, այդ անվերջ ծրագրային այլափոխումների՝ ինքը յեղափոխական բանակն է, նրա ներքին անբուժելի տկարութիւնը, նրա կորովի ու դիմացկունութեան անդարմանելի պակասը...

Կուսակցութիւնների անդամահատումը շարունակւում է։ Եւ նրա հետ զուգընթացաբար — պայքարը, բանակռիւը՝ միշտ պառակտիչ և տարրալուծող։ Բանակուի արւեստի մէջ՝ ռուս յեղափոխականները խփել են արդէն համաշխարհային record-ը, այդ ասպարէզում՝ ոչ մի ուրիշ երկիր չի կարող գերազանցել նրանց։ Եւ— ուշագրաւ է—բանակուի այդ յարաճուն ալիքների մէջ միշտ աւելի հարստանում է ռուս սոցիալիստ-դեմոկրատների և սոցիալիստ-յեղափոխականների առանձնայատուկ ժարգօնը, նա յօրինում է միշտ նոր բառեր ու ինքնատիպ դարձուածներ—բոլշեվիզմ, մենշեվիզմ, օտզովիզմ, մաքսիմալիզմ, լիկվիդատօր և այլն։ Եւ դրա հետ միասին՝ մի անսպառ պաշար ամեն տեսակ ընդհանրացումների, վերացական դատողութիւնների և կնճռաւոր ու թեւաւոր ֆրազների, „դիագնոզների" ու „պրոգնոզների", „ուժերի ռէալ յարաբերութիւնների", „պոտենցիալ և կինետիկ էներգիաների"... Համեմուած սրախօսութիւններով ու բարձրաթռիչ ոտանաւորներով, որոնք շատ լաւ ապացուցանում են գրողների ուժն ու գիտունութիւնը, սակայն, աւա՜ղ, չեն համոզում ընթերցողին, չեն սասանեցնում այն կարծիքը՝ որ այդ հմուտ վիճաբանները, այդ գեղեցիկ և թեւաւոր պատճառաբանումները, այդ ահագին և հրաբխային բառավիժուածքը բնաւ չեն կարող շարժել տեղից ռուսական Յեղափոխութեան կտրտուած, անդամալոյծ սայլը և որ այդ բոլոր սքանչելի պոլեմիստներն ու գիտուն հրապարակագիրները այնքա՜ն յիշեցնում են Կրիլովեան Կվարտէտի անճար երաժիշտներին...

Ապահովաբար, ոչ մի ուրիշ երկրի մէջ, ոչ մի սոցիալիստ կամ պարզապէս յեղափոխական կուսակցութիւն չի մշակել վիճաբանութեան (էրիստիկ) այդքան նուրբ ու պերճ ձևեր, չի հասցրել արտայայտութեան եղանակը այդ աստիճան վերացականութեան, սեթևեթութեան ու այլաղանութեան... Ռուս սոցիալիստը, օրինակ, չի ասի

երբէք պարզ, անպաճոյճ, մատչելի ձևով, թէ Ռուսաստանի յեղափոխական բանակի մէջ չկայ ոչ զէնք, ոչ զինավարժ մարդիկ ու խմբեր, ոչ էլ կուսակցու տրամադրութիւն, որ այդ պատճառով ռուս ժողովուրդը անընդունակ է ապստամբելու և ազատագրուելու... Այդ բոլորը նա կ'ասէ ձեզ՝ մի գերաբստրակտ, ամպային ընդհանրացումով. նա կը փաստէ, որ „ներկայ ծանր վիճակի հիմնապատճառը գտնուում է քաղաքական կամքի ճնշուածութեան և փոշիացման մէջ", կամ որ „մասսաների պատէնցեալ կորովը" չի վերածուում „կինետիքական կորովի"...

Ի՞նչ անել, որպէս զի՝ „վերածի"... Ի՞նչ միջոցներով կարելի է սթափեցնել մեծ Դիակը, ապստամբական ոգի և ուժ ներշնչել նրան, կամ—ռուս սոցիալիստի բառբառով—ինչպէ՞ս „կազմակերպել մասսաների և մտաւորականութեան քաղաքական կամեցողութիւնը"...

Ահա այդ հիմնական, ամենահիմնական և ամենատանջալի խնդրի շուրջն է, որ շարունակ աղմկում է ռուս կուսակցութիւնների տխուր մթնոլորտը, նրա շուրջն է, որ յեղափոխական բանակը կտրատուում է, կուսակցութիւնները պառակտուում են և աղանդները սրում իրենց ամբարշտութեան սրերը։

Ահա դարձեալ մի օրգան—որ թարգման է մի նոր ֆրակցիոնի, հատուածի։ Անունը—„Պոչին", „նախաձեռնութիւն"։ Շուրջը համախմբուած են սոց.-յեղափոխական կուսակցութեան մի շարք կարևոր ուժեր — Ավկսենտիեվ, Բունակով, Նէչեսոնի և այլն։ Օրգան բանակուի—ընդդէմ „Զնամեա Տրուդա"ի, կուսակցութեան պաշտօնաթերթի։ „Կարծիքների բազմութիւնից դուրս է ժայթքում ճշմարտութիւնը" — ասում է ֆրանսիական առածը։ Սակայն, այստեղ, այս դժբախտ միջավայրում, ճշմարտութիւնը երբէք էլ չի ժայթքում, կարծիքները այնքա՜ն են տարբեր և հաւատամքներն ու խառնուածքները այնքա՜ն այլազան։ Ճշմարտութեան տեղ... ժայթքում է շփոթ, մի անվերջանալի և այլանդակ քաոս։ Ոչ մի մերձեցում, ոչ մի հաշտութիւն, ոչ մի սինթեզ։ Բանակը անդամալուծուում է, փոշիանում. ամենակենսական ցաւերը ի վերջոյ մարում են, խլանում բանակուների և վիճաբանութեան մշտաբորբոք հնոցի մէջ... Եւ բռնապետութիւնը ուրախութեան ու յաղթանակի ծափ է զարկում։

„Պոչինը" գալիս է իր նոր „լուծումը" առաջադրելու։ Նա գալիս է ազդարարելու, որ սխալ է տրուած կուսակցութեան քաղաքականութիւնը և որ պէտք է հիմնականապէս յեղաշրջել այն։ Նա էլ իր հերթին վերսկսում է ինքնամտրակումը։ Նա էլ դառնապէս խոստովանում է, որ ռուսական կուսակցութիւնները մոտիկ անցեալում անփորձ են եղել, չեն գտնուել յեղափոխիչ գործօնի բարձրութեան վրայ, չեն կարողացել օգտուել իրենց ժամանակաւոր յաղթանակներից, չեն եղել յարձակողական, այլ եղել են գրեթէ միշտ պաշտպանողական դիրքի մէջ, չեն կարողացել քանդելուց յետոյ վերաշինել, ստեղծագործել...

Քննադատութեան ու ինքնամտրակման մէջ՝ նոր օրգանը գրեթէ համաձայնուում է հոչակաւոր „Վէխի"ի խմբագիրների հետ, որոնք գրեթէ նոյն պատճառներին էին վերագրում ռուսական յեղափոխութեան վիժումը, խօսում էին ռուս սոցիալիստների ու սոցիալ-դեմոկրատների անփորձութեան, անկիրթութեան և ցնորականութեան (ուտոպիզմի) մասին։

Ո՞րն է առաջադրուած „լուծումը"։ Պէտք է ձեռք վերցնել դաւադրական գործունէութիւնից—ասում են նրանք—կուսակցութիւնը արդէն իսկ կազմալուծուած է, լիկվիդացիայի ենթարկուած.. Պէտք է հրաժարուել տերրօրական ձեռնարկներից ևս, պէտք է նետուել մեծ ճանապարհը, լայն աշխատաւոր մասսաների մէջ, կազմակերպել կոօպերատիվներ, արհեստակցական միութիւններ, պէտք է մասնակցել և բազմատեսակ կրթական հիմնարկութիւնների մէջ, վերջապէս—նաև Պետական Դումայի մէջ։ Պէտք է, մի խօսքով,—ասենք դարձեալ ռուս սոցիալիստի տերմինոլոգիայով — „պէտք է օգտագործել բոլոր լէգալ հնարաւորութիւնները"...

Դաւադրութիւններով ու տերրօրներով չպիտի տապալուի բռնապետութիւնը—ասում են էսէրիզմի „կուլտուրականները"—անհրաժեշտ է ձուլուել մեծ զանգուածների հետ, զբաղուել բացառապէս օրինական ձեռնարկներով, թէպէտ և ռէակցիայի ալիքը տրորում է առհասարակ յաճախ նոյնիսկ ամենաանմեղ ձեռնարկները... Այդպիսի գործունէութեամբ է՝ որ ս.-ր.-ական հերձուածողները երազում են մի օր — ե՞րբ, Ալլահը գիտէ—բռնկեցնել ընդհանուր զինուած ապստամբութեան հրդեհը...

Երկարաձիգ և „գիտնական" յօդուածների մէջ նոր օրգանը փաստում է իր տեսակէտներն ու թեզիսները, որոնց մասին դեռ կը խօսենք առաջիկայ համարի մէջ։

Ցխուր է և չափազանց վհատեցուցիչ...

Ցիրալի է ոչ թէ կուլտուրական և օրինական ձեռնարկների անհրաժեշտութեան գիտակցութիւնը — այդ մենք ևս խորապէս գիտակցում ենք, „մասսային" խաղաղ ձեռնարկների այդ հրատապ անհրաժեշտութիւնը մեր կովկասեան հորիզոններում ևս շեշտուում է հրամայօրէն — տխրալի է այդ յուսահատ հրաժարումը գաղտնի, „ստորերկրեայ" գործունէութեան ձևերից, վհատեցուցիչ է այդ անօրինակ լքումը նախկին կատաղի ըմբոստների շարքերում, որոնք ի տեղի վերակազմելու ստուերի մէջ յեղափոխական կազմակերպութեան ճարակած շրջանակները, հոչակում են այն՝ անդարմանելիօրէն կազմալուծուած և ապաւինում են լէգալիզմին, օրինականութեան...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՏԻՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

(«ՀԱՅՐԻԿ»)

—

Հեռագիրները օրը օրին գուժում են մեր լայնարձակ հայրենիքի այս ու այն ծայրից մահերը մեր թանկագին ընկերների...

„Հայրիկն" էլ մեռաւ... Այդ անուան հետ կապուած չէ մեր կուսակցական տերմինոլոգիայի ոչէ ածական. Տիրանը զօրավար չէ, խմբապետ չէ, կոմիտէի անդամ էլ չէ... Նա մի սոսկ զինուոր էր — զինուոր տառապանքի, լռութեան, անյայտութեան, կարօտութեան և անաղարտ անձնուիրութեան։

Տիրան Մինասեան

Խե՜ղճ Տիրան. քո մահն էս գուցէ անյայտ կը մնայ, ինչպէս քո կեանքն ու գործը։ Իմ աչքի առջև է նա, այդ բարի ու հեզ դէմքով, բաբախուն սրտով ընկերը, երբ նա առաջին անգամ էր ոտք կոխում Հայաստան, Վան, իր երազների աշխարհը, տեսնում նրա ժպտուն երեսը. այնքա՜ն գոհ, այնքան երջանիկ, ինչպէս փոքրիկ երեխան հարսանիքի մէջ...

— Վերջապէս, հասա՜նք։ Տասը տարի է, երազել եմ, յուզուել, լացել, փախել, տառապել. վերջապէս, հասանք. ալ մեռնելը հոգ չէ, ասանկ չէ՞, Կարօ...

— Տօ ի՞նչ մեռնել, մինչև „Հայաստանը չ'ազատենք ո՞վ կը մեռնի"...

Խե՜ղճ Կարօ, „Հայաստանը ազատուեց" առանց հայ ժողովրդի տառապանքը վերջանալու և առանց քեզ գոհ թողնելու, ահա և հեռագիրը գուժում է.

„Տիրանը մեռաւ"... Չ'ասենք մեռաւ, Տիրանը մի վառուած մոմ էր մեր ազատութեան մեհեանին մէջ, նա վառուեց և մարեց։

Բայց ո՞վ էր նա։ Մեր կուսակցութեան միշտ ծածանուող դրօշին տակ շատ ու անյայտ ընկնողներից մէկը...

Նրա կենսագրութիւնը կարճ է և անպաճոյճ, ինչպէս կարճ եղաւ նրա կեանքը։

Բուլգարիայում ծնուած, այնտեղ մեծցած և այնտեղ կրթուած։

Մէկը այն դէմքերից, որոնք հայրենիքի և իր սիրած ժողովրդի սահմաններից սարեր ու ձորեր հեռու լինելով հանդերձ, ապրել են նրա հետ և լացել ու խնդացել նրա հետ։

Բուլգարիոյ մէջ նրա կուսակցական կեանքը յայտնի է։ խմբեր կազմակերպել, ամսավճարներ հաւաքել, ներկայացումներ տալ և այլն։

Բայց այդ բոլորը չէր կարող նրան գոհացնում տալ... այն ժամանակ՝ երբ հայրենիքի սահմանագլուխներում ժողովուրդը հնչեցնում էր իր ռազմերգը.

«Դաշնակցական խո՛ւմբ, գնանք մենք Սասուն»...

Եւ ահա միացած երկու այլ ընկերների, Սարգսի և Կարօյի հետ (առաջինը նոյնպէս բուլգարացի, վերջերս Վանի մէջ մի փօլիս զարնելով, փախստական եղաւ. երկրորդը՝ Ամերիկայէն)—ուղևորուեց Կովկաս՝ Սասուն երթալու համար...

Ուշ էր... Հայրենի երկրի արծիւները ընկճուել էին հերոսական դիմադրութիւնից յետոյ։ Օգնութեան դացողները ընկել էին սահմանագլուխներում։

Բայց Կովկասի մէջ գործ կար, նզովեալ թիւրքական ընդհարումները, կենդանի և արիւնալի գործ. և ահա երրորդութիւնը՝ Հայրիկ, Կարօ և Սարգիս՝ Շուշի են. ամենակարևոր դերի մէջ։ Ռմբագործութիւն, բակետային գործ, ուժանակային, դաւադրական ձեռնարկներ և այլն։ Իրենց միացել էին և ուրիշները, որոնցից մէկը միայն մինչև վերջ մնաց իրենց հետ — Զոհրապը, որ այժմ Պարսկաստանի կռիւների մէջ է։

Բայց սրանք միայն պատրաստող չեն, այլ և գործադրող։ Շուշում և Ղարաբաղի բազմաթիւ ընդհարումների մէջ այդ խմբակը մասնակից է եղել, բայց կռիւները ղեկավարող խմբապետը երբէք չի մոռանում սրանց՝ մանաւանդ Տիքսանգուրիի յայտնի դիրքը գրաւելու ժամին, երբ խմբակը մահուան հետ խաղալով, հսկայ դինամիտն էր պայթեցնում...

Կառավարական հալածանքից ազատուելու համար փոխադրում են արհեստանոցը Վարանդա, Շուշայ գաւառը. և ահա զրկանքների, խոնաւութեան և խաւարի մէջ Տիրանը պէտք է ածուխ ծեծէ, ուժանակ կտրատէ, ապագայ ձեռնարկների համար... Եւ այդ բոլորը՝ իր թոյլ, թոքախտաւոր կրծքով։

Հայ թրքական ընդհարումները վերջացան. Տիրանը հանդիստանալու մասին չի մտածում։

Դէպի երկի՜ր... դէպի Վան... հակառակ նոյնիսկ Վանի մարմնի կամքին, որ չէր ուզում նոր մարդ ընդունել։

Խումբը Վան է, նորէն արհեստանոց, նորէն խարտոց, նորէն ածուխ ծեծել. աւելի սոսկալի պայմաններում, քան Շուշի։

Զեմ մոռանայ Վանի Աղուէսաձորի արհեստանոցը. մի համեստ ընտանիք իր սենեակներից մէկը տրամադրել է մեզ իբրև արհեստանոց. այնտեղ է թագցրուում հարիւրաւոր ռումբեր, այնտեղ են նորոգուում հազարաւոր զէնքեր... և

այս բոլորը ամիսներ շարունակ. կառավարութիւնը անգիտակ, ժողովուրդը բէխաբար. և օրին մէկը, արհեստանոցի մի այլ վարպետ ընկերոջ սեղանին դրած ռումբը պայթում է... զոհ են գնում տան երեխան և մեր զինուոր Ռուբէնը։

Տիրանը և ընկերները ազատւում են, դուրսը գտնելով խումբը, այնուամենայնիւ, չի կորցնում իր պաղարիւնութիւնը. հարիւրաւոր զէնքեր, գործիքներ, ռումբեր պահելով գաղտնի պահարանի մէջ, վիրաւոր և մահացած ընկերների հետ օրը ցերեկով քաշւում է Այգեստանի մի այլ թաղ։

Այդտեղ ևս աղմուկ է ընկնում։ Կառավարութիւնը լսում է։ Ամենքը գիտէին, որ ռումբ է պայթել, բայց թէ ո՞ւր՝ ոչ ոք գիտեր, որովհետև ոչ ոք կը կասկածէր „ՃՕՃ Աղայի" տանը արհեստանոց լինելը. վերջապէս, տանը մնացած միակ պառաւ կինը միամտաբար խոստովանում է դրացի հայ փօլիսին, խուզարկում են և հետքեր գտնում, առանց մեծ բան տանելու։ Մի քանի օրից՝ փօլիսը գետին է դլորւում։ Մի քանի ամիս դադար։ Նոր արհեստանոցի համար տեղ պէտք է գտնել. սարսափը ընկել է քաղաքը. ամենամտերիմ և հաւատարիմ տներն անդամ մերժում են տեղ տալու ռումբի գործարանի համար... Խնդիրը ձգձգւում է և ահա յանկարծ Դաւօի սև դաւաճանութեան օրը։

Անբաժան ընկերները իրար հետ են, խուզարկւում է դրացու տունը. մեզնից թոյլտուութիւն են խնդրում, աղաչում, պաղատում, որ թոյլ տանք կրակելու. իրողութիւնը ինձ անյայտ է, չեմ գիտեր ի՞նչ է անցնում մեր շուրջը. խումբը ոտքի հանելուց և հարկաւոր կարգադրութիւնը կարօին անելուց յետոյ, մեկնում եմ ընկերները գտնելու և հաւաքական խորհրդակցութեամբ մի բան անելու։ Իրողութիւնը հասկանում ենք կէսօրին։ Վճռում ենք, որ մի խմբակ թափանցի զօրքի մէջ և Դաւօին տերրօրի ենթարկի։ Ո՞վ կարող է առաջ գալ մի այդպիսի դերի համար. ամենքն են ուզում, բայց նախապատուութիւնը այդպիսի քայլերի համար տրւում է փոքրիկ խմբակին։ Տիրան և ընկերներ չեն յայտնում այն օրը։

Գիշերը վրայ է հասնում, զինուորական ընդհանուր ժողովխորհուրդ ունինք, ի՞նչ անենքը ցցած մեր առաջ. ամբողջ գիշերւայ խորհրդակցութիւնից յետոյ որոշւում է յայտնի օրը խմբերը տեղաւորել այն դիրքերում, ո՛ւր որ զէնք կայ, մի քանի կասկածելի տեղերից արդէն զէնքերը հանել էինք, խումբը պիտի սպասէր, որ Դաւօն զօրքերի հետ խուզարկութեան գար, տեղնուտեղը սպանելու համար։

Մեր հաշիւների մէջ սխալւում ենք. բոլորովին հակառակ կողմն է խուզարկւում, յուսահատութիւնը պաշարում է ժողովրդին. զէնքերը օր ցերեկով տանում են, հարկ է դիմադրել։

Խմբերը ցերեկով տեղերնին փոխում են և բռնում են այն ճամբան, որով Դաւօն պիտի անցներ։ Կարևոր ընկերները բռնում են Սահակ-բէյի յայտնի դիրքը. հոն է խմբակը, որի մէջ և „Հայրիկը"։ Պայմանը այս է. երբ Դաւօն փողոց ելնի, լաւ նշան զարկողները պէտք է կրակեն։ Զօրքը ելնում է. ընկերները նշան են առնում, սակայն մոլորւում են, որովհետև դաւաճանը աչքի ցաւ ունենալով, աչքը կապած էր։ Մեր նշանն այդ էր։ Զարագործը մեր բոլոր ձևերին ծանօթ լինելով, հագել էր զինուորի հագուստ և իր ձևով շատերի աչքը կապել տուել։ Անհամբերներէն մէկը տեսնելով առաջին աչքը կապած մի զինուոր, զարկում է։ Զինուորն ընկնում է, իսկ Դաւօն ճողոպրում, քաշւելով փողոցի տներից մէկը։ Կռիւը պայթում է. ամեն կողմից թափւում են կռւող խմբերը և տեղական կամաւորները կռւի վայրը. Դաւօն զօրքով շրջապատւած է. իրենից առաջ մի կառք լի զէնքերով, ռումբերով, դինամիտի մեծ արկղներով և 20,000-ի չափ փամփուշտով, թողնում ու փախչում են։ Մեր և նրանց շղթայի հեռաւորութիւնը 30—40 քայլ է. թիւրքերը փորձում են կառքը քշել, մերոնք կրակում են կառքի ձիերի վրայ, կառքը անշարժեցնելու համար։ Թիւրքերը և զօրքը տեղի չեն տալիս, հարկ է լինում իջնել ուղղակի փողոց։

Ցիշում եմ հազարաւոր կրակներ մեր և թշնամու կողմից, փողոցը դատարկ՝ մի կիլօմետր երկարութեամբ. Տիրանը չոքած է կառքի մի ծայրը, Զոհրաբը միւս, մնացածները գնդակների տակ զէնքերը և փամփուշտներն են կրում։ Այսպէս 1—2 ժամ գնդակի կարկուտը չի թուլացնում անտէր, անապաւէն կռւողներին. Հայրիկը գոռում է.—„գէթ մերոնց յայտնեցէք, որ մեզ վրայ չկրակեն, հեռու են, չեն ճանաչում մեզ"։ Մերոնց գնդակէն մի ընկեր թեւից վիրաւորւում է։ Կառքը համարեա դատարկ է, տղաները յոգնել են, վերևից կանչում են. քրտինքի, ցեխի և վառօդի մուրի մէջ խեղդւած... ոտի վրայ կանգնել չի լինում... Թիւրքերը նորից փորձում են մօտենալ կառքին, մերոնց համազարկը նորից կանգնեցնում է նրանց։ Համազարկի որոտը դեռ չմարած՝ լսւում է մի հսկայական պայթում։ Մենք կարծում ենք, թէ թնդանօթ են արձակում. մեր գլխաւոր դիրքը—Սահակ-բէյի տան մի պատը խորտակւում է, փողոցի բոլոր պատուհանները ջարդւում։

Ահագին պայթումից յետոյ՝ խեղդող լռութիւն... Մենք սպասում ենք երկրորդ պայթումին, բայց չկայ։ Ցանկարծ նկատում ենք, որ թշնամին դիմացի դիրքերը—փողոցը—մաքրում ու փախչում է դէպի թիւրքական թաղերի խորքերը։ Ցետոյ հասկանում ենք, որ կառքի մէջ եղած ուժանակի ցինկի տուպն է պայթել և սոսկումն առաջացրել ամբողջ քաղաքի մէջ։

Զօրքերը խսկոյն քաշւում են զօրանոցները։ Մնում է մեր շղթայի մէջ եղած վաշտը, Դաւիթի հետ։ Պաշարւած զօրքը օգնութիւն է աղաղակում տուրուբաներով, բայց պատասխանը զօրանոցներից բացասական է, իրենց էլ հրաւիրում են վերադառնալ... Վերջապէս, մութը վրայ գալով, զօրքը կարողանում է խուսափել, օգտւելով նրանից, որ պայթումի պատճառով Սահակ-բէյի դիրքից մեր ընկերները քաշւել էին արդէն։

Վրայ է հասնում ճնշող գիշերը. երկու ժամ չ'անցած՝ իմաց են տալիս, որ հրդեհ է սկսել Սահակ-բէյի տնից. յետոյ իմացանք, որ կառավարութիւնը դիտմամբ վառել էր տուել այդ ահագին տունը, որ 1896-ին ևս դիրք էր ծառայել և վառուել։ Վերաշինուել էր, նորէն վառեցին և տերը մեզ հետ բանտ նստեցրին, տան ամբողջ հարստութիւնն էլ վրայ տալով։

Այս անակնկալ դիմադրութիւնը կառավարութեան յանկարծակիի բերաւ։ Նա հասկացաւ, որ դեռ պէտք է դիմադրենք. արդէն Դաւօի դաւաճանութեամբ մեր ուժերի մասին գաղափար ունէր, այժմ՝ իրենց տւած 40—45 զոհը սարսափեցրեց։ Որոշում են—անբաւարար համարելով քաղաքում եղած 5000 զօրքը—նոր զօրք պահանջել Կարինէն։

Զինադադար 40 օր։ Հայկական թաղերը մերն են. ոստիկաններ, պաշտօնեաներ, թիւրք ժողովուրդ քշւած այնտեղից։ Շուկան գոց է։

Հետևանքը յայտնի է. մի անյայտ պատանի, որի գոյութեան մասին շատերը գաղափար չունէին — Տ ա ճ ա տ ը,

օրը ցերեկով, զօրքի քթի տակ, գետին է գլորում դաւաճանին։

Մատնութիւններն ու դաւաճանութիւնները սկսում են մասսայական բնոյթ ստանալ. խմբերը քաշւում են լեռնային գաւառները։

Նոր զօրքը հասնում է Կարինէն ու Մուշէն. ասում էին, որ 20,000 էր հաւաքւել։ Սկսւում է Վանի յայտնի դրաման. ամենքը լքւում են. մնում է քաջերի մի խմբակ, որ թափառում է լեռների մէջ անօթի և անապատան։

Ընկերներից մէկը պատմում է, որ մի անգամ լեռը ելնելիս, Հայրիկը ուշացել էր խմբից. ամենքը կարծում էին, որ կրծքի թուլութեան պատճառով էր. խումբը նստում է հանգստանալու և Հայրիկին սպասելու։ Նա գալիս է. պատմող ընկերը նկատում է, որ Տիրանը չի կարող ոտքերը դետին դնել։ Երբ նա նստում է, ամեն ինչ պարզւում է. կօշիկները և գուլբանները պատռտւել են, Տիրանը քարշ է գալիս ամբողջ օրեր, բոբիկ ոտներով փշերի ու մացառների վրայով, անտրտունջ և անվհատ։

Սահմանադրութիւնը հռչակւում է. Տիրանը Վան է, կարկտնած սօլերով, պատառոտած շորերով և կարմրած թշերով. անողոք հիւանդութիւնը արդէն բոյն էր դրել...

Դրամ չունինք, չենք կարող ամենքի համար զգեստ գնել. զինւորներին տուն ենք ղրկում։

Տիրանը հեռացաւ Վանէն — չարաբախտ Վանէն—նոյն կարկատուն սօլերով, նոյն ծւատուած շորերով, գրպանը դատարկ։ Խմբակը գնաց Պարսկաստան։ Յետոյ լսեցինք, որ Տիրանը այնտեղի կուիւների մէջ է։

Բայց թոյնը լափում էր ներսից։ Ընկերները սարսափում են նրան տուն դառնալ։ Մնացածը յայտնի է։

Երիտասարդ, վառվռուն զաւակը վերադառնում է հայրենի աղքատ տնակը, արդէն մէջքը ծռած, անընդունակ աշխատանքի։

Ընկերոջ մասնաւոր աջակցութեամբ Տիրանը գնում է բժշկելու մի կլինիկ, ուսկից մահւան գոյժը տւին մեզ։

Այժմ էլ դեռ լաւ յիշում եմ այդ սիրելի դէմքը. յիշում եմ, թէ ինչպէս երեկոները, երբ հանգիստ քաղաքացիները իրենց զգեստները հանելով անկողին կը մտնէին, մեր դժբախտ ընկերները պէտք է պատրաստները ամրացնէին՝ տեղափոխւելու կամ գիշերւայ անակնկալներին դիմագրաւելու համար։

Յիշում եմ, թէ ինչպէ՞ս մեր Տիրանը, որպէս զի ողատի պատրաստի սոսկալի ճնշումից իր թոյլ կուրծքը, իր հնամաշ ու կեղտից սեւցած երեսսրբիչը խնամքով ծալած դնում էր կրծքի վրայ շապիկի տակ, պաղ և մայրական գուրգուրանքի կարօտ սիրտը տաքացնելու համար։

Յիշում եմ, թէ ինչպէս գիշերները, երբ պահապան էր, ճրագը վար դրած, լոյսը վար իջեցրած և ինքը երեսի վրայ ընկած, կարդում էր „Ցառաջ"ի գրադարանի գրքերը։

Յիշում եմ, թէ որպիսի ջերմեռանդութեամբ պաշտպանում էր նա ընկերվարական սկզբունքները ընդդէմ մոլեռանդ և բորբոնած „ազգասիրութեան"...

Ես միշտ զարմանում էի, թէ ինչպէս է այդ վտիտ մարմինը կարողացել այդքան գիտելիքներ հաւաքել, այդքան դառն օրերի մէջ և այդ գործնական ու տաժանելի աշխատանքների ընթացքում։

Մի անգամ իմ կատակ-հարցումին.

— Տիրա՛ն, Դաշնակցութեան մէջ ի՞նչը կը սիրես.—

Պատասխանում է.

— Նախ անոր գաղափարները կը սիրեմ, ապա Քրիստաֆորը։

Մեռաւ և թաղւեց ո՛չ հեռու իր երկրպագութեան առարկայից...

Թո՞ղ Քրիստաֆորը իր մեծ, իր տաք սրտի մէջ ջերմայնէ քեզ, իմ խեղճ, իմ բազմատանջ Տիրան... մինչև որ կը ծնւի և հայերի մէջ այն մեծ արձանագործը, որը կը կերտէ „անյայտներիդ" արձանը, այս տողերով.

„Այստեղ կանգնի՛ր ու խոնարհւի՛ր, ո՞վ անցորդ, որովհետև այստեղ են բոլոր նրանք, որ հիւսեցին ձեր սիրուն երազները"...

Իսկ մինչ այդ՝ դու և բոլոր անյայտներդ կ'ապրէք այն սրտերի մէջ, որոնց հետ ապրել էք և տառապել էք։

Անյա՛յտ զինւորներ ժողովրդական ազատութեան, դուք մեր փառքն էք և անմահ էք...

ԱՐԱՄ

ՆԻԿՕԼ

Սպանւեց Եփրեմի հետ։ Ղարաբաղի Վարանդա գաւառի Աշան գիւղից է, 27—30 տարեկան։ Հայ-թիւրքական ընդհարումների ժամանակ գործել է Բագւում, Հիւսիսային Կովկասում և Ղարաբաղում։ Եփրեմի զօրաբաժնի մէջ, նրա խմբապետներից մէկն էր։

Ն Ի Կ Օ

Այսքանը։ Այս հակիրճ տողերն են գրում մեզ երկրի ընկերները „Դաշնակցութեան" այդ նոր նահատակի մասին։ Քի՛չ բան է... Ոչ իսկ ազգանունը գիտենք այդ պարզ, համեստ զինւորի, որ ընկաւ զօրավարի հետ իր փառաւոր դիրքի վրայ, պարտականութեան դաշտի մէջ։ Ճա՞տ քիչ է... Ընկերների պարտքն է՝ փոքր ինչ աւելի ուշադիր վերաբերմունք ցոյց տալ դէպի մեր կտրիճ մարտիկները, որ մնում են „երկիր", իբրև „վաղօրօք զոհւածներ", իբրև մահւան առաջնակարգ թեկնածուներ... Փոքր ինչ աւելի ուշադրութիւն՝ որ-

պէս զի կատարած լինենք ընկերական մեր պարտքը, տուած լինենք իւրաքանչիւրին իր արժանի տեղը՝ յեղափոխական արժէքների երկայնաձիգ սանդուխի վրայ... Փոքր ինչ աւելի ուշադրութիւն՝ որպէս զի այդ խիզախ դէմքերի — և անգամ ամենապարզ, ամենաանշուք նահատակների — գործերը, նրանց առաջին քայլերն իսկ, նրանց ըմբոստ, երիտասարդական խոհերը արձանագրուին խնամքով, ընծայուին սերունդներին, հարստացնեն Հայկական Վերածնունդի թանգարանը, յուշերի և ապրումների յեղափոխական մատեանները...



Եփրեմի վերջին նկարը (մահից մէկ ամիս առաջ)

ԱՆՅԵԱԼԻ ԱՐՇԻՎՆԵՐՈՒՄ

ԳՈՒՐԳԷՆԻ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Տարօնէն)

Գուրգէն և իր 6 ընկերները, ծնած այլևայլ միջավայրեր—Ռուսաստան, Տարօն, Պուլանըք—սակայն համախմբուած հայ ժողովրդի դատը պաշտպանող Դաշնակցութեան դրօշին շուրջը, իբր հաւատարիմ առաքեալներ կը պտտէին Տարօն, Սասուն, Պիթլիս՝ տարածելու համար Գաղափարը և խտացնելու կուսակցութեան շարքերը։

1898-ի ապրիլ 17-ին, Գուրգէն՝ Մուշէն 6 ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Ցրօնք գիւղ կուգայ խմբով։ Խումբը կանցնի Օղուանքի մէջէն։ Տեղւոյն յեղափոխական գործիչ Մխիթարի ընկերներէն (?) կը տեսնէ ու անմիջապէս լուր կուտայ Երանեան Մկրտիչ անուն դաւաճանին, որի հետ վաղուց այսպիսի մատնութեան մը համար խորհրդակցած էին։ Մկրտիչը առանց վայրկեան մը կորսնցնելու, իրողութիւնը կուսակալին կը հաղորդէ հեռագրով մը։ Վերջինս խմբի հետապնդութիւնը կ'արտօնէ Ալայի բէկին ու մշեցի Հաճի Ալիեան Տալիպին, որ այդ ատեն կուսակալութեան գնացած էր, պաշտօն մը ձեռք բերելու։ Տալիպը աւելի մեծ հացի մը (պաշտօնի) տէր դառնալու նպատակաւ հետն առած Ալայի բէկն ու ժանտարմաների խումբ մը և 1000-ի չափ զօրք, կը պաշարէ Տարօնի Ցրօնք գիւղը. կը հաւաքէ գիւղապետն ու իշխանները, կէս ժամ ժամանակամիջոց կուտայ, որ ստուգեն ֆէդայիների տեղն ու իրենց յայտնեն. գիւղապետ Սլօն ու իշխանները կարճ ժողովէ մը վերջ, կուգան ու կը յայտնեն Համիդի զօրամներին Գուրգէնի տեղը։

Խումբը կը պաշարուի զօրքերով ու հոդ հասած աշիրների մեծ բազմութիւնովը։ Մինչ այդ, տեղի ընկերները իրողութիւնը կը հաղորդեն խմբապետին, որը անվրդով կրսէ. „գիւղ կամ հեռերնին նաւթ ունի՞ն թէ ոչ“. ոչ կ'ըսեն. „ուրեմն քանի մը ժամուայ կուէ վերջ կանցնինք կերթանք“, կ'ըսէ։ Խուժանը որս գըտնելուն չափազանց ուրախ, կը յարձակի, բայց առաջին առթիւ իրենց յարձակումն ապարդիւն կը լինի, թիւրք ղեկավարներն հաւատացած լինելով, որ առանց նաւթի, իրենք ոչինչ ընելու բախտ չպիտի ունենան ու բէնաժուս պիտի վերադառնան։ Մօտակայ Շէյխուսուֆ գիւղէն նաւթ կը բերեն կը վառեն մարագը ու կրսկսին կռիւը։ Սակայն յեղափոխականները կրակի ու ծուխի մէջէն կրսկսին պատասխանել թշնամու հազարաւոր գնդակներին. „Կեցցէ՛ Դաշնակցութիւն, կեցցէ՛ Գաղափարը աղաղակելով“, յետ 4—5 ժամուայ կուէ մը, նահատակ կ'իյնան, թշնամւոյն թողլով հետևեալ կորուստը. կրսպանեն Տալիպ էֆէնտին, անոր քրոջ տղան և 13—15-ի չափ զօրք և քիւրդեր։ Այս դէպքին նահատակ կ'իյնան ռուսաստանցի Գուրգէն, Պարսանդ, տարօնցի Ռուբէն, աղջանցի, Մշոյ Ս. Մարինէ թաղեցի Տիգրան, Կարապետ, Նշան և պուլանըքցի Մկրտիչ, որը կը յաջողի վառած մարագէն դուրս գալ, կը կուի մինչև վերջին փամփուշտը և կը նահատակի չարաչար։

Թիւրք խուժանը չափազանց տմարդաբար վարուած էր անշնչացած դիակների հետը, անոնցմէ ոմանց (Գուրգէնի) գլուխը կտրած ու մարմինը յօշոտած էին։ Մէկ օրէ վերջ նահատակները Մուշ փոխադրուեցան. կառավարութիւնը յանձնեց հայ առաջնորդարանին ասոնց թաղումը, բայց անշուք ու անպատանք։ Թաղման հետևեալ գիշերը Տիգրանի մայրը կերթայ մոմ մը վա-

ռելու իր յեղափոխական տղուն ու անոր ընկերներու անշուք գերեզմանին վրայ, կ'երթայ՝ հոն թափելու իր դարան, հոն յայտնելու իր զայրոյթն ու կսկիծը... Դաւթեան (կառավարական գիշերապահներէն) ու ժողովուրդը կը նկատեն պլպլացող այդ լոյսը ու կը սկսին ենթադրել, թէ լոյս է իջած ֆէդայիների վրայ, կամ հայերը զանոնք հանած, պատանդած ու թաղած են։ Առաւօտուն կառավարութիւնը կը բանայ գերեզմանները ու կը տեսնէ, որ իր յանձնարարութիւնը անպատանք թաղելու, ճշտութեամբ կատարուած է և դիակները իրենց տեղն են, նորէն կը ծածկէ։

Այսպէս անշուք կը հանգչին այդ նահատակները, Մշոյ Սուրբ Մարինէի գերեզմանոցի արևմուտքը ու այս սահմանադրութեան մէջ իսկ հայերը ապերախտաբար կը վարուին անոնց շիրիմներու հետ ու արժանի չեն տեսներ գէթ մէկ-մէկ քարով ծածկել անոնց շիրիմները...

ԳԵՂՋՈՒԿ

1912 թ. մարտ 26.

ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ԼԱՎՐՕՎԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

II

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՀԱՏԸ ԵՒ ԴԵՏԵՐՄԻՆԻԶՄԸ

(Շարունակ. Nr 4-ի)

Մարդու բոլոր գործողութիւնները, որ նրա կամային ժողովների հետևանքներն են ըստ ինքեան, սակայն նրա սուբ'եկտիվ աշխարհին են պատկանում։ Նպատակներ դնող, մտածող և զգացող անհատի համար այնչափ ազատութիւն կարող է լինել, որքան որ նա գործում է իր ներքին մղումներով և որքան որ նա իր սեփական իդէալների ու գաղափարների իրականացմանն է ձգտում։ Այդ ազատութիւնը պատկանում է, ուրեմն, մարդու գիտակցութեան շրջանին, այդ պատճառով էլ սուբ'եկտիվ է, ենթակայական է։ Մարդանհատը իր զգացողութիւններով, գործողութիւններով և մտքերով ոչ միայն մի ներքին, ազատ աշխարհ է կազմում դրսի, օբ'եկտիվ աշխարհի մէջ, այլ և մի աշխարհ, որ կանգնած է օբ'եկտիվ աշխարհի (բնութեան, տիեզերքի) կոյր դետերմինիզմի դէմ։ Քանի որ մարդանհատը՝ ուր էլ որ լինի, միշտ մոտիվներով, շարժառիթներով է ղեկավարուում, ապա պարզ է, որ եթէ մերժենք իսկ այդ մոտիվների ազատ ընտրութեան հնարաւորութիւնը, ինչպէս որ անում են ծայրայեղ դետերմինիստները, դա դեռ չի նշանակի, թէ այդ մոտիվների մէջ անկարող է լինել մի որոշ տենդենց, կանոնաչափութիւն, մի որոշ ուղղութիւն։

Լավրովը այդ կանոնաչափութեան համար մի խոշոր հիմք է գտնում, մատնանշելով, որ մարդկային գործողութիւնները նպատակաւոր և նպատակայարմար բնոյթ ունին։ Նպատակայարմար, գիտակցական գործողութիւնը, ասում է նա մի տեղ, կազմում է այն կենտրոնակէտը, որի շուրջը դասաւորում են մարդկային գործունէութեան մնացած երևոյթները։ Ամէն մտածողութիւն, ամէն գործողութիւն ի նկատի ունի որոշ նպատակներ և այդ նպատակներին հասնելու համար միջոցների ընտրութիւն—միշտ „հաճելի“ և „օգտակարի“ չափանիշների համեմատ։ Այդպիսով բնականօրէն մարդկային գործողութեան և մտածողութեան պայմաններից մէկն է դառնում պատճառականութիւնը։ Մի սերտ շաղկապում կամեցածի և հետևածի, ձգտածի և վաստակածի միջև։ Սակայն այդ պատճառականութիւնը նման չէ բնագիտութեան մեքանիկ պատճառականութեան, քանի որ նպատակների և միջոցների աշխարհում երբէք միևնոյն երևոյթը չէ գտնուում միևնոյն պայմանների մէջ։ Միւս կողմից, թէ ինքը նպատակադրութիւնը և թէ միջոցների ընտրութիւնը սուբ'եկտիվ, ենթակայական աղբիւրից են ծագում. և հէնց այդ պատճառով էլ երկուսը իրենց արժէքն ու գոյութիւնն ունին ոչ թէ իրենց համար, այլ մեզ, մարդանհատներիս համար։

Պատճառականութիւնն էս, ուրեմն, իրայատուկ նշանակութիւն է ստանում գործողութիւնների և մտածումների աշխարհում։ Սեփական կամքի նախաձեռնութեամբ, կամային շարժառիթներով գործող մարդը՝ իր աչքում անհրաժեշտ գործողութիւնը կատարելուց յետոյ, ստեղծում է մի որոշ անհրաժեշտականութեան նպատակայարմարութիւնը։ Գործելու այդ անհրաժեշտութեանը—ժառանգուած անասնական նախատիպարներից—մարդը տուել է մի ուրոյն գոյն նրանով, որ կապել է այն՝ ոչ թէ սոսկ բնազդների ու սովորութիւնների, այլ միջոցների և նպատակների միջավայրի հետ։ Նպատակաւոր և նպատակայարմար գործողութիւնը, կամքի որոշ, յարաբերական ազատութեամբ կատարուելուց յետոյ՝ մարդը ինքն է ենթարկուում այդ գործողութեան հետևանքին, նրա ազդեցութեան։ Նա կը լինէր իր կատարածի, ուրեմն և ամբողջ պատմութեան ստրուկը, եթէ այդ գործողութիւնները չբղխէին անհրաժեշտաբար նրա բնութիւնից, եթէ նրանք չլինէին կամային մղումների հետևանք։ Եթէ ասենք իսկ, թէ մարդը իր գործողութեան, իր արարքների „ստրուկն“ է, ապա յամենայն դէպս, նա յօժարակամ ստրուկ է, նպատակայարմարութեան ստրուկ է, քանի որ գործողութեան նախապայմանը—նպատակը—կրկին իրենից է սկզբնաւորուում։

Ցայտնի է ականաւոր մտածողներից մէկի արտայայտութիւնը, թէ մենք նաճում ենք բնութիւնը, նրան հպատակեցնելով։ Լավրովի մտքով կը խօսէինք, կարծում ենք, եթէ ասէինք՝ „մենք տիրապետում ենք մեր նպա-

տակաւոր և նպատակայարմար գործողութիւնների հետևանքներին, կամովին նրանց ենթարկուելով", որովհետև այդ գործողութիւնները իրենք, ինչպէս քանիցս շեշտուեց, մեր իսկ հարազատ մարդկային բնութեան արտայայտութիւններն են։

Լավրովի մտքերի այս ոչ մանրամասն ցուցադրումից ընթերցողը կարող է դիւրաւ նկատել այն խոշոր վաստակը, որ մտցնում է ռուս մտածողը պատմափիլիսոփայութեան մէջ։ Նրանից առաջ եղած հասարակագիտական գրականութեան մէջ դժուար է մատնանշել մի երկ, իսկ նրանից յետոյ շատ քչերը, որ այնքան խոր և արգասաւոր կերպով արծարծած և լուծած լինէին այդ մեծ կնճիռները։ Լավրով գծեց պատմափիլիսոփայութեան հիմնական վէճի սահմանները, գծեց նաև այն ճանապարհը, որի վրայ ոտք պիտի դնէ պատմափիլիսոփայական ամեն մի լուրջ փորձ։ Եւ այսօր շատերն են գնում այդ ճանապարհով, թէև անկախ Լավրովից։ Հարկաւոր է միայն թերթել գերմանական ներկայ մի շարք մտածողների պատմագիտական և պատմափիլիսոփայական երկերը — Գէորգ Զիմմելի, Թէօդոր Լինտների, Բերնհայմի և այլն։

Տասնեակ տարիներ առաջ Լավրով յայտարարում և փայլուն կերպով հիմնաւորում է այն բեղուն ճշմարտութիւնը, որ կամքի ազատութեան պրոբլեմը այնպէս, ինչպէս փիլիսոփայութեան մէջ է ունեցել և գուցէ դեռ կունենայ իր գոյութիւնը — իբրև ընդհանուր փիլիսոփայական մի խնդիր—ոչ մի անմիջական արժէք չունի մտածող և կամեցող մարդ-անհատի գերագոյն հարցերի լուծման շրջանում, որոնք իրենց տեսական ձևի մէջ անգամ, ամենից առաջ գործնական նշանակութիւն ունին. որ այդ պրոբլեմը, եթէ անգամ անլուծելի մնայ, պատմափիլիսոփայութեան լինել-չլինելու խնդիրը չէ։ Այստեղ ևս, ինչպէս և զուտ փիլիսոփայական ըմբռնողութեան հարցերում, Լավրով հաւատարիմ է մնում իր այն սկզբունքին, որ մեզ համար անհրաժեշտ է ոչ թէ մի „անպայման ճշմարիտ" ելակէտ, այլ մի այնպիսին, որ աւելի է համապատասխանում մեր մտածողութեան և ճանաչողութեան կազմին։

Տասնեակ տարիներ առաջ ռուսական պոզիտիվիստ փիլիսոփան իրապաշտ մտածողութեամբ ցոյց է տալիս, որ տիեզերական բացարձակ դետերմինիզմի և անհատական կամեցողութեան ինիցիատիվի ռիթմը անհեթեթութիւն չէ, որ կարելի է և անհրաժեշտ, տիեզերական պրոցէսի դետերմինիստական ըմբռնողութիւնը հաշտեցնել սովորութիւնների, յոյզերի, շահերի և համոզումների ժողովների հետ, նպատակների և միջոցների աշխարհի հետ։

Որ Լավրով այստեղ ևս առանց նախորդների չէ — ինչպէս որ այդ նախորդներն էլ առանց իրենց նախորդների չեն—դա ինքնին հասկանալի է։ Բաւական է միայն մտաբերել Կանտի „նպատակների աշխարհը"։ Բայց այստեղ, ինչպէս և առաջ, ինչպէս և յետոյ, մեր նպատակից դուրս ենք համարում խնդրի այդ կողմը։ Գուցէ այդպիսով ամենից աւելի արդար կը լինինք դէպի Լավրովը։ Չէ՞ որ նա է, որ „Պատմութեան ըմբռնողութեան խնդիրները" վերնագրով նշանակալից աշխատութեան նախաբանի մէջ գրել է. „ինձ համար ամենից քիչ կարևոր էր այստեղ նորը և օրիգինալը զատել նրանից, ինչ որ ես պարտ եմ իմ նախորդներին։ Աւելի կարևոր էր ջոկել այն, ինչ որ ես ճիշտ եմ համարում, նրանից, ինչ որ ինձ համար կասկածելի կամ սխալ է"։ Մենք տալիս ենք այն, ինչ որ ճիշտ է համարել Լավրովի կողմից և ինչ որ նրա ուսմունքի անբաժանելի մասը, այդ պատճառով էլ սեփականութիւնն է կազմում։ Որ ուրիշներն ևս Լավրովից առաջ կամ նրա ժամանակ այդ ճշմարտութիւններից արտայայտած կը լինին, դա չի արգելում, որ Լավրով այդ ճշմարտութիւնները իրայատուկ ըմբռնողութեամբ ձուլէր իր սիստեմի մէջ և իր սեփականութիւնը դարձնէր։

Մտքերը ում էլ որ պատկանեն՝ սիստեմը նրանն է. և այսօր մեր խօսքը այդ սիստեմի մասին է առաւելապէս։

III

ՍՈՒԲԵԿՏԻՎ ՄԵԹՕԴԸ

Այդ մեթոդի հիմնաւորումը եւ կիրարկումը պատմութեան մէջ. — Երեք կարգի փաստեր՝ պատմական կեանքում. — Փաստերի դասաւորման կարեւորութիւնը եւ դրանցից ծագած պանանջը.—Առարկայական (օբ'եկտիվ) վերաբերումի արժէքը եւ սահմանները. — Հեռազօսողի ընդհանուր զարգացումը եւ բարեխղճութիւնը՝ իբրեւ պայման. — Ենթակայական (սուբ'եկտիվ) վերաբերումը անխուսափելի. — Մտածողութեան սուբ'եկտիվ ձեւերի անհրաժեշտութիւնը՝ պատմական ըմբռնողութեան երեք խնդիրներում. — Երեւոյթների համեմատական գնահատման հարց. — Օրինակներ.—Առողջի եւ ախտաբանականի ջոկման հարց.—Օրինակներ. — Մէկից աւելի հնարաւորութեան հարց. — Օրինակներ. —

Պատճառների և հետևանքների կարգը նպատակների և միջոցների փոխելով—աւելի ճիշտ՝ պատճառակցութեան կարգի կողքին նպատակաբանութեան կարգը զարգացնելով և դետերմինիզմի հարցը պատմափիլիսոփայութեան համար այդ հողի վրայ լուծելով, Լավրովը ոչ միայն դիւրացնում է պատմական անձնաւորութեան դերի պրոբլեմը, այլ և մի խոշոր մասով սպառում նաև այդ պրոբլեմը, թէև միայն ձևական (ֆորմէլ) կողմից։

Այդ վերլուծումների ընթացքում, սակայն, յաճախ շփումներ է ունենում նա մի մտագաւառի հետ, որ անբաժանելիօրէն կապուած է մեր մտածողի գիտական անուան հետ։ Այդտեղ արած գրաւումներն ևս նպաստում են անհատի պրոբլեմի ամբողջական ըմբռնումին։

Դա սուբ'եկտիվ մեթոդի մտաշրջանն է՝ թէ՛ սոցիոլոգիայի և թէ՛ պատմագիտութեան մէջ։ Որքան որ այդ մեթոդը զուտ սոցիոլոգիային է վերաբերում, չենք շոշափի մենք այստեղ։ Իսկ պատմութեան մէջ այդ մեթոդի կիրարկմանը անհրաժեշտ է ծանօթանալ գոնէ այնչափ,

ինչ չափ որ դա անհատի պրոբլէմի անմիջական սահմաններն է եզրում։

„Պատմութեան ըմբռնողութեան խնդիրները“ գրքի մէջ Լավրով հետևեալ կերպով է հիմնաւորում սուբ'եկտիվ մեթոդի անխուսափելիութիւնն ու իրաւացիութիւնը՝ պատմութեան մէջ։

Պատմութեան միջոցով մեզ հաղորդուող իրողութիւնների հսկայական շարքերը հանդէս են գալիս մասամբ, որպէս կուլտուրայի կրկնուող փաստեր, որ ուսումնասիրելի երևոյթների հողն են կազմում, մասամբ որպէս չկրկնուող երևոյթներ, որոնք մտքի այս կամ այն շրջանում ծագելով, գործում են այդ հողի վրայ և նրան փոփոխումների ենթարկում։

Այդ իրողութիւնները կամ անցեալի կենսական տարրերն են կազմում, կամ անցեալի վնասակար մնացորդները և կամ ապագայի սաղմերը։ Դրանք բոլորը ամեն մի բարեխիղճ և գիտակցող հետազօտողից կողմից կարող են իրացուել՝ որպէս պատմական ճանաչողութեան տարրեր։ Բայց անկարելի է և աննպատակ այդ բոլորը փաստերը առանց ընտրութեան մի գիտական դիսցիպլինի մէջ առնել. դրանով նրա գիտակցութիւնը կը տուժէր և անհնարին կը դառնար։ Պատմական պրոցէսի գիտական ճանաչողութեան համար անհրաժեշտ է, որ այդ փաստերը դասաւորուին էական և պատահական, գլխաւորի և երկրորդական, առողջի և ախտաբանականի կատեգորիաների համեմատ։ Այդպիսով է, որ հնարաւոր կը դառնար պատմական կտոր-կտոր ճանաչողութիւնների մշակումը՝ դէպի պատմութեան գիտական և ամբողջական ըմբռնողութիւնը։

Եւ հէնց այստեղ հետազօտողից արուած և իրագործելի օբ'եկտիվ պահանջներին միանում են սուբ'եկտիվ պահանջները. այդ կարգի պահանջներին լիովին գոհացում տալը կախուած է պատմաբանի ընդհանուր զարգացումից. դրանք նոյնքան գիտական են, որքան և առաջինները։

Օբ'եկտիվ են առհասարակ մտածողութեան այն բոլոր ձևերը, որոնք բաւականաչափ ճանաչողութեան և բարեխղճութեան դէպքում ամեն մի հետազօտողի կողմից կարող են իրացուել։ Սա գիտական անպայման պահանջ է։ Մտքի այս շրջանում չկայ ոևէ վտանգ ո՛չ անձնական աֆէկտի, ո՛չ պատահական և քմահաճ կարծիքի տրամաբանական սուբ'եկտիվիզմից և ո՛չ էլ այն սուբ'եկտիվիզմից, որ ճանաչողութեան ու ճիշտ մտածողութեան պակասութեամբն է պայմանաւորուած։ Այս վերջին վերաբերումները գիտական չեն ոչ թէ այն պատճառով, որ սուբեկտիվ են, այլ որովհետև այդ սուբ'եկտիվիզմից կարող է խուսափել ամեն հետազօտող. հարկաւոր է միայն, որ նա բոլորին մատչելի մի որոշ քննադատութիւն և փաստերի մի որոշ տիրապետութիւն ձեռք բերած լինի. հարկաւոր է, որ նա հետազօտողի բարեխղճութիւնը պահպանէ։

Բայց որտեղ հարցը պատմական երևոյթների գնահատման, արժէքներին է վերաբերում, այնտեղ արդէն հետազօտողի բարեխղճութիւնը բաւական չէ։ Հետազօտողի զարգացումը այստեղ գերակշռող է։ Այլևս պէտք չէ փաստերի քննադատական հաստատում կամ մերժում. այստեղ պատմաբանին անհրաժեշտ է մի յատուկ աշխատանք՝ իր անձնական, ընդհանուր զարգացման վրայ. հարկաւոր է անհատական մի պարփակուն և կուռ աշխարհայեացքի մշակում. հարկաւոր է կենսական բարձր նպատակների իրացում։ Միայն սուբ'եկտիվ այս տարրերն են, որ պատմաբանին հնարաւորութիւն են ընծայում՝ տեսալ դարեշրջանը ամբողջական կերպով ըմբռնելու։ Սուբ'եկտիվ վերաբերումը այս դէպքում այնքան անխուսափելի է, որ նրանից չի կարող և չպիտի հեռանայ ո՛չ պատմական-գեղարուեստագէտը, ո՛չ պատմաբան-մտածողը, ո՛չ քաղաքական պատմաբանը։ Օբ'եկտիվիզմը, յաճախ պարտաւորեցուցիչ պատմագիտական երկի մի բաժնում, փոխարինւում է նոյնքան ևս անխուսափելի սուբ'եկտիվիզմով միւս բաժնի մէջ։

Գիտնականի կոչմանը անպատեաբեր կը լինէր՝ Մարքսի գրուածները աղաւաղել, կամ „արիւնոտ շաբթի“ բարբարոսութիւնները եղծել, կամ լռել դրանց մասին՝ փաստերը աղաւաղելու դիտաւորութեամբ։ Բայց անկողմնապահ լինելու ոչ մի ջանք չի կարող արգիլել, որ պատմաբանը իրողութիւնների համեմատական կարևորութեան սուբ'եկտիվ գնահատումով առաջնորդուի։ Դա անխուսափելիութիւնն է։

Պատմութեան մէջ սուբ'եկտիվ մատնելակերպի կիրարկման անհրաժեշտութիւնը առանձնապէս պատմական ըմբռնողութեան երեք խնդիրներում՝ ակնբաղխ է։ Նախ՝ երբ կուլտուրայի, կամ որոշ դարեշրջանում մտքի աշխատանքի կամ միւս տարրի համեմատական գնահատման հարցն է դրուած։ Ապա՝ երբ մի որոշ դարեշրջանում մի շարք տարրերի առողջ կամ հիւանդական լինելու հարցը պիտի որոշել։ Երրորդ՝ երբ կարելի է ընդունել, որ եղելութիւնների և երևոյթների այս կամ այն խմբակցութիւնը ընդհանուր հնարաւորութիւն է ունեցել՝ տուած էպոխայում երևան գալու, չնայած որ հասարակական և ինտելեկտուել ուժերի պատահական-իրական դասաւորութիւնը պոկել է եղած հնարաւորութիւնը։

Առաջին դէպքում մենք ունինք անհրաժեշտաբար մտածողութեան սուբ'եկտիվ պահանջներ։ Եթէ այստեղ կամենանք օբ'եկտիվ տեսակէտի վրայ մնալ և կարևոր սեպել այն երևոյթները, որոնք աւելի անձնաւորութիւններ և սահմաններ են ընդգրկում, այն ժամանակ ստիպուած կը լինէինք մի տարափոխիկ հիւանդութեան

պատմական աւելի մեծ նշանակութիւն տալ, քան, օրինակ՝ Վիկլէֆի և Հուսի քարոզներին. բմանտիզմին աւելի, քան Սպենսերի սիստեմին։ Եթէ առաջնորդուէինք ժամանակակիցների կարծիքներով, այն ժամանակ կը հարկադրուէր Օգիւստ Կոնտի փիլիսոփայութիւնը աննշան երևոյթ համարել էկլէկտիզմի (ընտրականութեան) հետ համեմատած. Լիւդովիկոս 17-ի արշաւանքները Աֆրիկայում անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն կըստանային, քան նոյն էպոխայում խաչակիրների ձեռքով Պրովանսի քաղաքակրթութեան ոչնչացումը։

Ակներև է, որ այստեղ զուտ սուբ՝եկտիվ չափն է գիտական, անխուսափելի և իրաւացի. և դա պիտի որոնել հետազօտողի անձնական զարգացման մէջ, նրա՝ մտքի, ճանաչողութեան և հաւատալիքների, նրա՝ անձնական և դասակարգային շահերի, նրա՝ կենսական պահանջների և բարոյական համոզումների շրջանում։

Պետական և կրօնական խորհրդապաշտը, քաղաքական ինդիֆերենդիստը (անտարբերը), ժողովրդական ֆանատիկոսը, գեղարուեստագէտը և մտածողը,—սրանք բոլորը կարող են հաւասարաչափ գիտակցութիւն և բարեխղճութիւն ունենալ. բայց չնայած դրան, փաստերը ամեն մէկի ուղղում տարբեր կերպով են դասաւորում, տարբեր կերպով ձուլում՝ անցեալի ընդհանուր պատկերի մէջ, տարբեր կերպով իրենց աստիճանաւորումների և համախմբումների մէջ մտնում։

Էականի և պատահականի, կարևորի և երկրորդականի ջոկումը, մտքի աշխատանքի հետևանքները այս շրջանում նոյնքան աւելի գիտական են, որքան աւելի բարձր է հետազօտողի սուբ՝եկտիվ զարգացումը։

Սուբ՝եկտիվիզմի այդ պահանջը կայ նաև մտային ու կամային այն պրոցէսներում, ուր հարցը վերաբերում է երևոյթների առողջ կամ ախտաբանական լինելուն։ Մի շարք հետազօտողներ առողջ են համարում միայն այն երևոյթները, որոնք հասարակական համերաշխութիւնն են ուժեղացնում։ Ուրիշները նշանակութիւն են տալիս միայն անհատական մտքի և եռանդի ուժեղ արտայայտութիւններին։ Սոցիալիզմի հակառակորդը փառաբանում է կապիտալիզմը։ Սոցիալիստներից շատերը թէև դրամատիրական հասարակակարգը համարում են հիւանդոտ, սակայն ապագայ հասարակաշէնքի կառուցման համար անհրաժեշտ մի նախապատրաստութիւն։ Ուրիշները սոցիալիստ մտածողներից կապիտալիզմի տիրապետութիւնը սոցիալիզմի իրականացման անհրաժեշտ փուլը չեն համարում։ Կրօնական նախկին համոզումներին դաւաճանելը մէկի կողմից դիտւում է որպէս հիւանդագին, միւսի կողմից, որպէս բնականոն և առողջ պրոցէսի հետևանք։ Հարցրէք ֆրանսիացիներին՝ ո՞րտեղ է նորմալ Ֆրանսիան. ո՞ր Ֆրանսիայի մէջ է ժողովրդական իսկական ոգին արտայայտւում։ Մէկը կը մատնանշէ ձեզ *ancien régime*-ի վրայ և ամենավառ գոյներով ձեր առջև կը հանէ Լուդովիկոս XIV-ը իր մոլի կաթոլիկականութեամբ իր Դասիններով և Բուալօներով։ Միւսը ցոյց կը տայ 1789-ի Ֆրանսիան՝ իր „Մարդկային իրաւունքներով“։ Երրորդը հաշւի կառնէր միայն Ռոբէսպիէրին կամ Բաբեօֆին. չորրորդը Ֆրանսիական կապրալին կը փառաբանէր. մի ուրիշը — Լուի Ֆիլիպի պարլամենտարիզմի աղմկայոյզ շրջանը. իսկ մի վեցերորդը չէր քաշւի նոյնիսկ երկրորդ կայսրութեան հովանու տակ եղած „հանգստութեան, հարստութեան և փառքի“ էպոխան մատնացոյց անելու։ Բայց կը գտնուէին և այնպիսիները, որ կը հանէին մինչև Ս. Լուդովիկոսի և հաւատաքննութեան դարեշրջանը։

Նոյն հարցը տուէք ռուսներին, և Իվան Դաժանի Մոսկուան, Պետրոս Մեծի էպոխան, Եկատերինա, Սպերանսկի, 61, 63, 89 թուականներ և այլն և այլն, տարբեր գնահատողների կողմից մի խայտաբղետ կայէդոսկոպի մէջ ձեր առջև կը քաշւին փոխ առ փոխ։

Ո՞ւր է այստեղ օբե՞կտիվիզմը։ Ի՞նչպէս կարող է այստեղ մտածողութեան օբ՝եկտիվ հետևանքը գիտական արժէք ունենալ։ Այս շրջանում ևս անթիւ են դէպքերը, երբ վճռականը գնահատողի սուբ՝եկտիվ չափն է, նրա մտաւոր հորիզոնների սահմանը, նրա անձնական զարգացման որակն ու քանակը։ Այստեղ ևս վերաբերումը դառնում է գիտակցական այնչափ, ինչչափ որ հետազօտողը ընդառաջում է իր անձնական զարգացումից անհրաժեշտօրէն հրամայւող զուտ սուբ՝եկտիվիստական պահանջներին. և անելով այդ, աշխատում է փիլիսոփայական դետերմինիզմի ընդհանուր հողի վրայ տեղի ունեցող պատմական եղելութիւնների և էպոխաների մասնակի երևոյթները այդ դետերմինիզմից անկախ գնահատել։

Նոյնն է և՝ երրորդ խնդրում։

Անշուշտ, այս շրջանում, ինչպէս և նախորդներում, կարող են լինել նաև մտքի օբ՝եկտիվ հետևանքների գործադրումներ։ Բայց պատմական դէպքերի և էպոխաների գնահատման հարցը, նրանց գիտական ըմբռնողութիւնը այստեղ ևս անհնարին է, եթէ այս կամ այն տարրի բացակայութեան ժամանակ հրաժարւինք սուբ՝եկտիվ վերաբերումից։

Հնարաւո՞ր էր յունական աշխարհում քաղաքական դէպքերի տարբեր դասաւորում, քան բերաւ նախ մակեդոնացիների և ապա Հռոմի տիրապետութիւնը։ Պլատոնի և Արիստոտելի մտքի անձնական կորովից անկախ, հնարաւո՞ր էր յունական փիլիսոփայական մտքի էուդիւսիոնի տարբեր ընթացում, քան այն, որ առաջ քաշեց այդ երկու մտածողների փիլիսոփայութիւնը, յետ մղելով Դեմոկրիտի և Էպիկուրի ինտելեկտուէլ աւանդութիւնները։ Կարլոս Մեծի դարաշրջանում բիւրոկրատական և ոստիկանական պետութեան խնդիրները կարո՞ղ

էին բանական կերպով գոհացուցիչ լուծում ստանալ։ Հնարաւո՞ր էր բանւոր դասակարգի կազմակերպութեան հարցի լուծումը հին աշխարհի մէջ։ Կապիտալի և աշխատանքի կռւի հողի վրայ կարո՞ղ է մարդկային հաշտարարութիւնը վերջնականօրէն հաստատուել. կարելի՞ է այս դէպքում առաջացնել մի հասարակութիւն, որտեղ նիւթական-տնտեսական ցածր շահերը տեղի տային բարոյական բարձր շահերին։

Այս և նման տասնեակ ուրիշ հարցերի լուծման մօտենալու համար շատ բան կարող է տալ այն բոլորի օբ'եկտիվ հետազօտութիւնը, ինչ որ տրամաբանական անհրաժեշտութիւն է եղել. անհրաժեշտօրէն կատարւածը, որ եղել է տւած էպօխայի հասարակութեան մէջ, տնտեսական, քաղաքական և մտաւոր ուժերի իրական դասաւորման հասկանալուն կարող է նպաստել։ Բայց մտքի այդ գործադրումները այս շրջանում, երբ ուրիշ հնարաւորութիւնների հարց կայ, մեծագոյն մասով անբաւարար են. և այն պատմաբանը, որ իր ընդհանուր զարգացման մէջ աւելի կամ պակաս չափով բարձր է կանգնած, այդ հարցերի այս կամ այն լուծմանը կը մօտենայ իր սուբ'եկտիվ ըմբռնողութեան չափանիշներով, չնայած ճանաչողութեան իր փաստական վիճակին և բարեխղճութեան չափին։ Ցաւախ միայն այդ սուբ'եկտիվ ըմբռնողութիւնը նրան կ'ասէր՝ ա՛յս էր հնարաւորը անցեալի մէջ, թէև տեղի չունեցաւ. ա՛յս է հնարաւորը մօտիկ ապագայում. ա՛յս պիտի ոչնչացնել պատմական հնարաւորութեան սահմաններից։

Սուբ'եկտիվիստական ըմբռնողութեան պրօբլեմը յաճախակի և ընդարձակօրէն վերլուծելով (մենք ուրւագիծը տւինք միայն, գլխաւորապէս հեղինակի արտայայտութիւններով), Լավրովը յանգում է հետևեալ վերջեզրակացութեան։ Ամեն անգամ, երբ փաստերի ճանաչողութիւնն ու բարեխղճութիւնը բաւական է պատմական երևոյթները հասկանալու կամ նրանց ամբողջական պատկերը ստանալու համար, սուբ'եկտիվ վերաբերումները ոչ միայն աւելորդ են, այլ և անգիտական։ Բայց չկրկնուող երևոյթների հասարակական էւոլիւսիոնի մէջ օբ'եկտիվ միջոցներով մենք չենք կարող լուծել ո՛չ երևոյթների կարևորութեան հարցը, ո՛չ առողջի և խոտաւորի հարցը և ո՛չ էլ այն, թէ տւած էպօխայում զարգացման ի՛նչ հնարաւորութիւններ են եղել։ Այն ինչ՝ այդ հարցերի լուծման փորձից հրաժարւել, կը նշանակէր պատմական պրոցէսի գիտական, ամբողջական ըմբռնողութիւնից հրաժարւել։

ՍՆԱՐ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐՐԸ ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

I

ՔԱՌԱՍՆԱԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐ

Խաչատուր Աբովեան

(Շարունակ.)

Ազդեցութիւններ։ Բացի հասարակական այդ հինգ համախմբումներից — հոգևորականութիւնից, մելիքութիւնից, վաճառականութիւնից, արհեստաւորութիւնից և գիւղացիութիւնից — որոնք, ինչպէս փորձեցինք ցոյց տալ, տարբեր կերպով էին ենթակայ պարսկական ռէժիմին — այնտեղ չկար ուրիշ, շատ թէ քիչ կարևոր, շատ թէ քիչ աչքի ընկնող խմբակցութիւն։ Պարսկաստանի տիրապետութեան ներքոյ գոյութիւն չունէր մտաւորականութիւն այնպէս, ինչպէս այժմ ենք հասկանում։ Այդտեղ մտաւորականութեան գաղափարը և էութիւնը լուծւած էր գլխաւորապէս հոգևորականութեան մէջ։ Մեր գրականութիւնը, մեր դպրոցները գրեթէ ամբողջովին պատկանում էին հոգևորականութեան։ Ժողովրդի մտայնութեան ներկայացուցիչը, ազգի մտաւոր կեանքի արտայայտիչը հոգևորականութիւնն էր։ Նա էր ղեկավարում հասարակութեան տրամադրութիւնները, նա էր ուղղութիւն տալիս մեր ճակատագրին։

Այս երևոյթը ինքնայատուկ չէ միայն մեր կեանքին։ Համաշխարհային պատմութեան մէջ չափազանց յստակ կերպով և բաւական երկար ժամանակ գործել է այդ իրողութիւնը։ Հոգևորականութեան և մտաւորականութեան նոյնութիւնը դարերի փաստ է, հնագոյն ժամանակների ժառանգութիւն է, որի մէջ այսօրւայ Եւրոպան ապրել է իր կարգին։

Կրօնական աշխարհայեացքի, կրօնական դարաշրջանի հասարակական արտայայտութիւնն է դա։ Ինչպէս կրօնը — գիտական անկախ մտքից, քննադատական աշխարհայեացողութիւնից առաջ — եղել է հասարակական մտքի կաղապարը, այնպէս էլ կրօնաւորը, հոգևորականը եղել է հասարակական կեանքի և հասարակական գաղափարների արտայայտիչը։ Մեզանում գործում էր համաշխարհային երևոյթի արձագանքը։ Միայն թէ մեր պայմանները, մեր քաղաքական, սօցիալական միջավայրը այնպէս էին, որ այդ երևոյթը շա՞տ երկար ժամանակ կարողացաւ շարժւել և ազդել։ Նա ապրում էր մեզանում դեռ ևս 19-րդ դարի առաջին քառորդում և բնաւ չէր կամենում պատմական արխիվն ընկնել։ Եւրոպայում վաղուց արդէն տեղի էր ունեցել հոգևորա-

կանութեան և մտաւորականութեան անջատումը։ Սկիզբն էր առել և բաւական առաջ էր գնացել աշխարհիկ մտաւորական խմբակցութիւնը, մինչդեռ հայ աշխարհը, հայ ժողովրդի միտքը գանուում էր տակաւին հոգևորականութեան բացառիկ տիրապետութեան ներքոյ։

Պարսկական ռէժիմի համար յատկանշական գիծ է այս իրողութիւնը։ Այնտեղ, որտեղ գիւղացիութիւնը իբրև հասարակական իրական դասակարգ ոչ մի գործառնութիւն չունէր, որտեղ գիւղացիութիւնը արտադրում էր, մշակում էր միայն՝ առանց իրաւունքի ու առանց ազատութեան—չէր կարող իր միջից մտաւորական սերունդ արտադրել, չէր կարող իր մէջ մտաւորական հոսանք առաջացնել։ Գիւղացիութեան հաւաքական եռանդը, նրա ներքին ուժերը մտաւորապէս արտայայտելու, դրսևորելու համար պէտք է հոգևորականի զգեստ հագնէին, պէտք է ձուլուէին հոգևորականութեան մէջ։ Այդպէս էր դարը, այդպէս էր միջավայրը։

Աշխարհիկ մտաւորականութիւնը պիտի կազմաւորուէր կեանքի ընդհանուր փոփոխութիւնից յետոյ։ Կրթական, դպրոցական գործը մէկ կողմից, դասակարգային յարաբերութիւնների զարգացումը միւս կողմից պիտի արտադրէին այսօրուայ մտաւորականութիւնը...

Ցարաբախտաբար, աւելի ընդարձակ և մանրամասն չենք կարող կանգ առնել պարսկական ռէժիմի նկարագրութեան վրայ։ Մեր աշխատութեան նպատակը չէ փաստերի վերլուծումը, իրողութիւնների գնահատութիւնը։ Մենք պիտի խօսենք հասարակական մտքի զարգացման մասին, այնպէս, ինչպէս նա արտայայտուել է ռուսահայ գրականութեան մէջ։ Բացի այդ՝ մտքի հիմքերը շօշափելի կերպով և յստակօրէն պատկերացնելու համար՝ կարևոր էր տեսնել կեանքի ընդհանուր ուղղութիւնը։ Մեզ թւում է թէ նախընթաց էջերի մէջ այդ ուղղութեան մասին կարողացանք ասել այն, ինչ էական է և անհրաժեշտ։

Եւ այսպէս։ Ամենից առաջ երևաց, որ հայերը պարսկական ռէժիմի մէջ՝ ենթակայ էին մի անքաղաքակիրթ, անիրաւական պետութեան ճնշումին և կիսավայրենի ու բարբարոս դրացիների հարուածներին։ Երևաց, որ կրօնական գործօնը և կրօնական ատելութիւնը արդիւնք է մեծ մասամբ տիրող դասերի դիտակցական ու սիստեմատիկ գործունէութեան։ Երևաց, որ հայ ժողովրդի բոլոր դասերը հաւասարապէս չէին տուժում Պարսկաստանի տիրապետութեան ներքոյ։ Երևաց, որ մեր հոգևորականութիւնը, մելիքութիւնը, վաճառականութիւնը յաճախ կարողանում էին խուսափել խանական ու սարդարական ռէժիմի հարուածներից։ Երևաց, որ այդ հարուածները—մինչև անգամ յաճախ մեր վերին դասերի աջակցութեամբ—ընկնում էին գիւղացիների և մանր արհեստաւորների վրայ։ Երևաց, որ պարսկական հարստահարութեան առաջին զոհը հայ գիւղացիութիւնն էր։ Երևաց նաև, որ այդ շրջանում գոյութիւն չունէր աշխարհիկ մտաւորականութիւն և որ այս վերջինս ամբողջապէս ձուլուած էր հոգևորականութեան մէջ։

Այսպէս էր մեր կացութիւնը պարսկական տիրապետութեան ներքոյ։

Ի՞նչ փոփոխութիւն մտցրեց Ռուսաստանի տիրապետութիւնը...

—

Հայերի հոգեբանութեան մէջ երկար ժամանակ մեխուած էր այն գաղափարը, որ Ռուսաստանը քրիստոնեայ պետութիւն է և որ ուրեմն նրա իշխանութիւնն ու կառավարութիւնը ամեն կերպ ցանկալի է։ Խաչապաշտ տէրութիւնից նրանք սպասում էին ամեն բարիք. իրենց դարաւոր թշուառութեան վախճանը, իրենց հալածանքների ու հարստահարութեան վերջին կէտը։

Նրանց կարծիքով՝ խաբէութեան, խորամանկութեան, շահագործումի քաղաքականութիւնը կապուած էր միայն մահմեդական տիրապետութեան հետ։ Ռուսական կառավարութիւնը—իբրև քրիստոնէական վարդապետութեան հետևող—նրանց վերաբերմամբ գործ պիտի դնէր անկեղծ, անշահասէր, արդար քաղաքականութիւն։ Այս հաւատով և այս մտքուր, միամիտ գիտակցութեամբ լեցուն՝ հայ ժողովուրդը ոչինչ չխնայեց Ռուսաստանի տիրապետութիւնը յաջողեցնելու համար...

Ժողովրդական այս բուռն, այս անվերապահ, այս ինքնաբուխ անձնազոհութիւնը երբէք չպիտի մոռանալ։ Մի ամբողջ ժողովուրդ իր լաւագոյն ոյժերն էր նուիրաբերում ռուսական տիրապետութեան յաղթանակի համար։ Նա դնում էր իր կեանքը Մօսկվեան իշխանութեան տրամադրութեան տակ. նա իր գոյութեամբ, իր պայքարով, իր անօրինակ անձնազոհութեամբ պատմական խոշոր ծառայութիւն էր մատուցանում Ռուսաստանին և բարոյական իրաւունք ունէր—անբռնաբարելի իրաւունք — իր գործերի փոխարինութիւնը պահանջելու։ Ռուսաստանի տուած օգուտների մասին խօսողները ամենից առաջ այս հանգամանքը չպիտի աչքաթող անեն։ Ինչ որ մեր երկիրը, մեր ժողովուրդը պահանջում էր հիւսիսային պետութիւնից՝ սոսկ մարդասիրութիւն չէր, այլ պարզապէս փոխարինութիւն։ Եւ այսօր, տարիներ յետոյ, հարկադրուած ենք չմեղանչել պատմական ճշմարտութեան դէմ և արձանագրել, որ հայ ժողովուրդը իր սպասումների, իր ենթակայական ակնկալումների մէջ յուսախաբ եղաւ։ Թող սխալ մեկնաբանութեան առիթ չդառնայ մեր ասածը։ Մենք առ այժմ չենք խօսում ռուսական տիրապետութեան հետևանքների մասին։ Մենք միայն շեշտում ենք այն, որ իր բարոյական

վերաբերմունքի մէջ ռուսաց կառավարութիւնը դեռ առաջին օրերից անբարեացակամ տարբ մտցրեց։ Նա չկատարեց իր խոստումները „Հայկական աշխարհի“ վերաբերեալ։ Նա անվստահութեամբ և չարամտութեամբ նայեց հայ ժողովրդի կենսական, քաղաքակրթական պահանջների վրայ։ Նա աքսորեց Ներսէս Աշտարակեցուն, որ այն ժամանակ աչքի էր ընկած իբրև հայկական ներքին ինքնուրոյնութեան ներկայացուցիչ։ Նա կոտրեց Ներսիսեան բանակը, հալածեց նրա կողմնակիցներին, յարձակուեց մինչև անգամ դպրոցական հաստատութիւնների դէմ, աղաւաղեց Ներսիսեան վարժարանի ժողովրդական ոգին։ Նա սարսափի մատնեց մեր միջի դեմոկրատ, հայրենասէր տարրերը և խրախուսեց մեր անարժան տարրերին։ Հայ ժողովրդի հակառակորդ Յովհաննէս Կարբեցուն ամեն աջակցութիւն չխնայեց և աշխատեց մինչև կաթողիկոսութեան աթոռը բարձրացնել այդ տխրահռչակ հոգևորականին։ Այս բոլոր փաստերը ապացուցանում են այն, որ ռուս քաղաքականութիւնը հայերի սպասած „քրիստոնէական“, անկեղծ, արդարամիտ քաղաքականութիւնը չէր։ Ապացուցանում են այն, որ ռուսաց պետութիւնը չկամեցաւ յարգել հայերի պատմական ծառայութիւնը, չկամեցաւ գնահատել մեր դերը իր աշխարհակալական առաջխաղացումների մէջ, չկամեցաւ փոխարինել և հատուցանել այն, ինչ խոստացել էր և ինչ մեր բարոյական իրաւունքն էր...

Ռուս քաղաքականութեան այս բարոյական վրիպումներից անկախ՝ ի՞նչ տուեց մեզ Ռուսաստանի տիրապետութիւնը։ Հայ հասարակական միտքը, սկսած Աբովեանի ժամանակից մինչև մեր օրերը, ընդհանրապէս չափազանցրել է ռուսական ռէժիմի դրական կողմերը, գունաւորել է նրա նպաստաւոր հետևանքները։ Այս տեսակէտը, եթէ ոչ ամբողջովին, գէթ մեծ մասամբ բղխում էր մահմեդականութեան նկատմամբ ունեցած թերահաւատութիւնից ու ատելութիւնից։ Որքան իսլամ ռէժիմը ատելի էր, այնքան ռուսական տիրապետութիւնը թւում էր հրապուրիչ... Այդ պատրանքը երկար շարունակուեց։

Այստեղ կը կամենայինք լուսաբանել մի իրողութիւն, որ կարևոր դեր է խաղում վերոյիշեալ պատրանքի մէջ։ Կովկասահայերի այժմեան բաբեկեցութիւնը համեմատութեան է դրուում թիւրքահայերի այժմեան կացութեան հետ։ Զենք ուզում վիճել այդ համեմատութեան եզրակացութեան դէմ և դիւրութեամբ համաձայնւում ենք, որ այսօր, ընդհանուր առմամբ, կովկասահայերի բարեկեցութիւնը աւելի է, քան թիւրքաց հայերի բարեկեցութիւնը։ Բայց կուզէինք մեկնաբանել, բացատրել այդ երևոյթը։ Ինչո՞ւ է այդպէս։ Ինչո՞ւ թիւրքահայերի հաւաքական երջանկութիւնը կաղում է այսօր։ Պատասխանը պարզ է։ Օսմանեան դարաւոր ռէժիմը և մասնաւորապէս Համիդի երեսուներեքամեայ բռնակալութիւնը աւերել, հարուածել են մեր մտաւոր ու անտեսական բովանդակ շինուածքը։ Իսկ այդ բռնակալութիւնը խստասիրտ է եղել դէպի մեր ժողովրդի ճակատագիրը՝ մասամբ ռուսական „քրիստոնեայ“ դիւանագիտութեան աջակցութեամբ ու մեղսակցութեամբ։ Պատմական փաստ է, որ ռուս կառավարութիւնն ուզում էր ունենալ „Հայաստանը առանց հայերի“։ Ու հասկանալի է, որ այսպիսի չարաշուք պայմաններում, այսպիսի եղերական թշնամութեան հանդէպ դժուար կարող էր բարձրանալ թիւրքահայերի տնտեսական բարեկեցութիւնը։

Պատմութիւնը, դէպքերի անաչառ ու առարկայական լուսաբանութիւնը ոչինչ չեն շահի, եթէ մենք մոռանանք ռուսական քաղաքականութեան այդ մեղսակցութիւնը վերջին 20 տարուայ ընթացքում և թիւրքահայերի թշուառութիւնից եզրակացնենք նոյն այդ քաղաքականութեան օգտակարութիւնը։

Ռուսական ռէժիմը ծանրացել է նաև տնտեսական զարգացման պրոցէսի վրայ. կաշկանդել է—որքան այդ հնարաւոր է եղել—հայ արդիւնաբերութիւնն ու առևտուրը։ Իսկ 1905 չարաշուք թուականին, թաթարական արշաւը գիտակցաբար շղթայազերծելով՝ ուզեց ոչնչացնել հայ արդիւնաբերութեան մեծագոյն կենտրոնը — Բագուի նաւթաշրջանը—որի գոյութիւնը այնքան զգալի դեր է խաղացել մեր հաւաքական զարգացման նորագոյն պատմութեան մէջ։

Կովկասահայերի տնտեսական յարաբերական բարեկեցութիւնը արդիւնք չէ ռուս քաղաքականութեան մարդասիրական տրամադրութիւնների։ Ընդհակառակը. այս տրամադրութիւնը—սկսած արևելեան Հայաստանի նուաճման հետևեալ օրից իսկ—տարիների երկարատև ընթացքում եղել է հակահայկական՝ մերթ զսպած ու խորամանկ շարժումներով, մերթ ուժգին ու բացարձակ ժեստերով։ Ռուս քաղաքականութեան հոգեբանական հիմքերը նման են եղել պարսկական քաղաքականութեան հոգեբանական հիմքերին։ Այդ քաղաքականութիւնների ենթակայական կողմերը միմեանցից գրեթէ չեն տարբերուիր։

Անկախ ռուս քաղաքականութեան հոգեբանութիւնից՝ իրականութեան մէջ տարբերութիւն անշուշտ կար։ Հայութեան ճակատագիրը երկու տիրապետութիւնների ներքոյ անշուշտ միևնոյնը չէր։ Թէ ի՞նչ ապագայ կունենար արևելեան Հայաստանը, եթէ ապրէր մինչև օրս պարսկական իշխանութեան տակ՝ այդ մասին դժուար է հաստատապէս որևէ բան պնդել։ Աբովեանի կարծիքով՝ հայութիւնը կ'ուժասպառուէր, կ'անհետանար աշխարհի երեսից։ Բաֆֆիի կարծիքով, ընդհակառակը։ Վերջինս մեծ հաւատ ունէր Պարսկաստանի վերանորոգութեան

նկատմամբ։ Նա հավոզված էր, որ Շահերի երկիրը ներքնապես պիտի բարեփոխուէր և հայերը այնտեղ պիտի ունենային աւելի ուրոյն ճակատագիր, աւելի ուժեղ ազգային կազմակերպութիւն, աւելի հաստատ ու աւելի ապահով բաղաքակրթութիւն։

„... Արժանայիշատակ Ֆաթալի և Մուհամեդ Շահերի տիրապետութեան ժամանակներում՝ եւրոպական լուսաւորութեան ճառագայթները, թէև դժուարութեամբ, բայց կամաց-կամաց ցոլանալ սկսան Պարսկաստանի սեաթոյր վարագոյրի նեղ ծակերից. քաղաքակրթութեան թոյլ և գունաթափ լոյսը մի փոքր հալածեց նախնի բռնակալութեան սև խաւարը։ Բայց հայերի համար տակաւին շուտ էր ժտածել լուսաւորութեան վրայ։ Խաների բռնակալութիւնը իսպառ վերջացած չէին։ Եւ հայերը մի փոքր հանգստութիւն միայն գտանելով, յառաջագոյն սկսան բարւոքել իրենց նիւթական դրութիւնը։ Երկրագործութիւնը և խաշնարածութիւնը շուտով ծաղկեցան նոցա մէջ, և բաղաքաբնակները սկսան ձեռք զարնել վաճառականութեան և զանազան արհեստներին։ Եւ շուտով հայոց աշխատասիրութեան ոգին երևան հանեց իր վառվռուն վաստակները։ Բայց երկար չտևեց այդ բարեբախտութիւնը։ 1827 թուականը թողեց պարսկահայոց համար մի յաւիտենական ափսոսանաց արժանի անցք, երբ պարսկահայոց մեծ մասը գաղթեցին դէպի Արաքսի միւս ափը, անվախթար սուգի մէջ թողնելով իրենց հայրենակիցքը։ Հայոց պատմութեան ատեանում չեն կարող պարզ երեսներով երևել երկու հայազգի անձինք.—մինը մի հոյակապ և արժանի յիշատակի եկեղեցականն է, որ շատ ուշ հասկացաւ իր սխալը... միւսը մի փառասէր հայ աստիճանաւոր ռուսաց զօրքի մէջ, որ խաբեելով շքանշաններից՝ հազարաւոր գերդաստաններ ձգեց ռուսաց խորամանկ քաղաքականութեան շղթաների մէջ և թողեց նրանց մաշել՝ քսելով մի հզօր պետութեան երկանաքարի տակ“...

Այսպիսի խիստ լեզուով էր խօսում հայերի մեծ վիպասանը, հայ ժողովրդական իդէալների երգիչը 1867 թուականին, „Սալբի“ի յառաջաբանում, Ռուսաստանի տիրապետութեան դէմ։ Ներսէս Աշտարակեցին և նրա քաղաքական գործը այդտեղ անվերապահ կերպով քննադատութեան են ենթարկուում, Այդ տողերի մէջ լսւում է յուսախաբուած ժողովրդի բողոքը, հասարակական թագնուած վիշտը։ Մի ժողովուրդ, որ զոհաբերել է իր ամենաթանկագին ստացուածքը Ռուսաստանի փառքի համար, մի ազգ, որ ամենաբուռն ոգևորութեամբ և ամենաանկեղծ անձնուիրութեամբ նահատակուել է Ռուսաստանի յաքթանակի համար—արժանի էր լաւագոյն վերաբերմունքի։ Ռուս կառավարութիւնը զլացաւ մեզ այս վերաբերմունքը։ Ռուս կառավարութիւնը ուրացաւ մինչև իսկ իր խոստումները։ Բաֆֆիի չափազանցութիւնների հիմքը այստեղ պէտք է որոնել։ Այստեղ նրանք դիւրութեամբ բացատրելի են...

Բայց հայ վիպասանից բացի՝ եւրոպական գիտուն ճանապարհորդներն էլ նման բան են ասել։ Թող ներողամիտ լինի ընթերցողը, եթէ մի քիչ ընդարձակ հատուածներ մէջ բերենք այդ ճանապարհորդներից։ Հարցի կարևորութիւնը, պրօբլեմի նրբութիւնը քաղաքական-հասարակական տեսակէտով՝ մեզ վրայ պարտք են դնում խօսեցնելու նաև հեղինակաւոր անձանց։

Մորից Վագներ 1840—1844 թուականներին ճանապարհորդեց ռուսական և տաճկական Հայաստանում և իր ուսումնասիրութիւնը ամփոփեց մի գեղեցիկ հատորի մէջ։ Հայերի տնտեսական, հասարակական կացութեան մասին շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում գիտնական ճանապարհորդը։ Բազարջուկ գիւղի հայ բնակիչները, որ 1829 թուին Բայազէդի կուսակալութիւնից ռուսական սահմանն էին անցել՝ այսպէս են խօսում Վագներին. „... Ռուս հարկահանը մեր աղքատութիւնը չի հասկնար և մեր վրայ այնչափ բեռ կը դնէ, որչափ Երասխի քով դաշտաբնակ գիւղացոց վրայ։ Մենք անխոնջ աշխատելէն և սակաւապէտ կեանք անցնելէն ետքը՝ ան բարձր տուրքերը վճարելու կարողութիւն չունինք։ Թէպէտ կամաք և ուզելով Ռուսաստանի մեծ կայսեր հպատակ ենք, որովհետև ինք քրիստոնեայ իշխան է, մեր կրօնը, մեր եկեղեցիները կը յարգէ, մեր եկեղեցականները կը պաշտպանէ, և թէպէտ քիւրդերէն այնքան կը վախենանք—այնուամենայնիւ աւելի յօժարութեամբ կուզենք մեր առաջին բնակչութեան տեղեանքն ըլլալ՝ ուր անօթութիւն չէինք զգար և հարկահանները կրնային գոհացնել, ուր ծեծ ուտելէն վախ չունէինք, ինչպէս հոս ռուսաց մէջ ունինք, և ընդհանրապէս անանկ դառն թշուառութեան մէջ չէինք, ինչպէս հոս“։

Ցայտնի է, որ ռուս կառավարութիւնը, գլխաւորապէս իր սահմանները ամրացնելու ժամհոգութեամբ, Տաճկաստանից 100,000 հայ գաղթեցրեց և բնակեցրեց մեծ մասամբ Երևանեան նահանգում։ Այս գաղթականութիւնը, ինչպէս և Պարսկաստանի մօտ 60,000 հայերի գաղթականութիւնը անհնարին դժուարութիւններով տեղի ունեցաւ։ Հիւանդութիւն, անօթութիւն, կոտորած, մահ—կապուած էին ժողովրդական այդ զանգուածային տեղափոխութեան հետ։ Ռուս կառավարութիւնը խոստացել էր ամեն կերպ թեթևացնել նրանց վիճակի դառնութիւնը։ Բայց ահա ինչ է գրում Վագներ. „... Տարբախտաբար ռուսաց պաշտօնեաները գաղթականների թշուառութիւնը մեղմելու համար ոչինչ չարին։ Մանաւանդ նրանցից շատերը այն աստիճան անամօթացան, որ քիչ շարժական կայք ունեցող գաղթականների ձեռքից՝ այդ փոքր մնացորդն էլ կողոպտեցին, առան։ Այս բարի, անմեղ և գործասէր հայազգի գիւղացիները 14 տարի Արագածի վրայ բնակուելուց յետոյ՝ չկարողացան քիչ

շունչ առնել։ Ծանր տուրքերի տակ հեծում են և ողբալի վիճակի մէջ են“...

Երևանեան նահանգին տիրելով՝ ռուս կառավարութիւնը չթողեց այլ ևս, որ բնակիչները առևտրական յարաբերութիւն ունենան Պարսկաստանի հետ։ Ելևմտական նախարարութեան դժբախտ կարգադրութեան հաւանաձայն՝ հսկայական մաքսեր դրուեցան Թաւրիզից մտնող ապրանքների վրայ։ Այս պարագան ուղղակի թշուառացրեց թէ քաղաքի և թէ շրջակայքի ազգաբնակութիւնը։ „Սրա համար էլ զարմանք չէ, որ բնակիչները պարսից բռնութիւնները գիտնալով հանդերձ՝ դարձեալ շատ տեղ նրանց իշխանութիւնը բաղձալի են համարում“։ („Ճանապարհորդութիւն ի Հայաստան“. թարգմ. Փ. Ճամճեան, Վիեննա, 1851 թ. էջ 30)։

Հայկական նահանգները ռուս կառավարութեան համար շահագործումի և հարստահարութեան առարկայ էին։ Այստեղից վանելով պարսիկ իշխողներին՝ նա տարբախտաբար պահպանեց նոյն հոգեբանութիւնը, նոյն տրամաբանութիւնը հանդէպ տեղական ազգաբնակութեան։ Հիւսիսային պետութեան այդ չարաշուք տեսակէտը որոշակի փայլում է Էջմիածնի կուսակալ պարոն Իվանովի խօսքերի մէջ.—„Այստեղ մարդ շատ սքանչելի կապրի։ Այնուամենայնիւ մեր, ռուսաց մէջ անմիտ և ապուշ մարդիկ կան, որոնք կովկասեան նահանգները աւազակների բուն են կարծում և այս կողմերը եկող կուսակալի վրայ ցաւում են։ Մարդ այստեղ շատ պատուական կեանք է անցկացնում, և ով տրտնջում է՝ յիմար է կամ ստախօս։ Ցեսնում էք, որ տունս ամեն դիւրութիւն ունի, սեղանս լաւ զարդարուած է, տխոռի մէջ 24 հեծնելու ձի ունիմ, որոնք ամենն էլ գեղեցիկ, պերճ ու արքայական ասպատանի արժանի կենդանիներ են։ Սրանից զատ՝ 20,000 հոգի ինձ սիրում և պատուում են“։

Այս հետաքրքրական ու նշանակալի պատմութիւններից յետոյ՝ Վագնէր նոյն ոգով խօսում է ծանր ու կործանարար հարկերի մասին, ռուս պաշտօնեաների անազնուութեան ու կաշառակերութեան մասին, ժողովրդի նիւթական տագնապների մասին։ Եւ այսպէս խօսում է մի մարդ, որ ճանապարհորդում է ռուս կառավարական շրջանների աջակցութեամբ և որ վայելում է նրանց վստահութիւնը...

Մենք քիչ աւելի երկար կանգ առանք ռուս քաղաքականութեան բացասական կողմերի վրայ, որովհետև մեր հրապարակագիրները, Կովկասում թէ Թիւրքիայում, գիտակցաբար թէ անգիտակցաբար, ծածկում են այդ քաղաքականութեան արատաւոր, յոռի, ցաւագար էջերը։ Հասարակական գիտակցութիւնը չպէտք է պատել մառախուղով։ Ժողովրդական խիղճը պէտք ունի պատմական ճշմարտութեան և ոչ թէ մեր քաղաքագէտների միտումաւոր ներբողներին։

ԲԵՐՈՒՆԻ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԵՓՐԵՄԻ ՀԱՒԱՏԱՄՓԸ

Նա ընկաւ իր սկսած, բայց չ'աւարտած գործի փշոտ ճանապարհին, ալևոր Պարսկաստանի անմխիթար իրականութեան մէջ, թողնելով մեծ մարդու, մեծ հերոսի նուիրական յիշատակը։

Հայ և օտար մամուլը—անշուշտ, „պատշաճ“ բացառութիւններով—արձանագրեց մեր անզուգական ընկերոջ թափառական կեանքի զանազան դրւագները և վստահ ենք, որ ասելիքներ ու պատմելիքներ դեռ շատ կան՝ լրացնելու համար մի պատմական կեանքի բովանդակ պատկերը և այդ պարտքը ծանրանում է բոլոր լաւատեղեակ ընկերների վրայ։

Իսկ մի քանի ազատամիտ օրգաններ — մանաւանդ ռուսական—յանձին իրենց „մտերիմ ու ամենագէտ“ թղթակիցների միանգամայն սխալ ու հակասական կարծիքների արտայայտիչն եղան՝ Եփրեմի աշխարհայեացքի ու մտածելակերպի նկատմամբ մի պարագայ, որ մեզ հարկադրում է իրողութիւնը ճշտել։

1910-ի յունուարին էր, երբ Ղարադաղից վերադարձող յաղթական բանակը՝ ժամանեց Թաւրիզ։

„Թաւրիզը չէ տեսել նման ընդունելութիւն“ — մրմնջում էին անգամ հակասահմանադրականները։

Ժողովրդական տօն էր, ինքնաբերաբար կազմակերպուած, զերծ պաշտօնական ձևականութիւններից, դրդումներից ու հսկողութիւններից։

Ալեզարդ Իրանի համար խորթ, նրա հօրիզոններից դարերով հալածուած նոր գաղափարների—ազատութեան ու եղբայրութեան տօն էր, յուզիչ՝ իր պարզութեամբ, յարգելի՝ իր բովանդակութեամբ։

Եւ տարօրինակ երևոյթ։ Մինչ բազմահազար հետաքրքրուողների ու յարգողների շարքերը անհամբեր սպասում էին՝ նախօրօք որոշուած փողոցներում ու հրապարակներում, Եփրեմ և Սարդար-Բըհատուր իրենց ընընկերներով արդէն իջևանել էին իրենց բնակարանի մէջ, քաղաք մտնելով մի անյայտ փողոցով։

— „Նախ յոգնած եմ և յետոյ ձանձրացել եմ այդ ձևականութիւններից ու ցոյցերից“—պատասխանում էր Եփրեմ մեր հարցումին։

Ո՞վ էր նա, Պարսկաստանի այդ „խորհրդաւոր“, „առեղծուածային“ *) դէմքը, որ դարձաւ նրա վերածնունդի կորովի երկրպագուն, ազգերի համերաշխութեան սիրահար պաշտպանը, նոր սերունդների ոգևորութեան ու պաշտամունքի աղբիւրը։

Եփրեմ աշխատաւոր ընտանիքի համեստ զաւակն էր, լուռ ու մունջ, սակաւախօս ու մտածող, վերլուծող։ Իր համոզմունքների մէջ անխախտ, բնաւորութեամբ՝ արագաշարժ ու կտրուկ, ծրագիրների յղացման մի անսպառ

*) Այդ ածականով էր որակել Եփրեմին Մոսկուայի „Ռուսսկոյէ Սլովո“-ն։

աղբիւր և անձամբ գործադրող։ Երիտասարդ հասակին իսկ ենթակայ ցարական, Համիդեան ու Շահական բռնութիւնների՝ նա չէր կարող հանդուրժել բռնապետութիւնը, ո՞ւր էլ որ լինէր, ինչ անուան տակ էլ արտայայտուէր։

Եփրեմ արդիւնքն էր իր ապրած կեանքի ու միջավայրի։

Նա հմտուած սոցիալիստ էր և 1907-ի Ատրպատականի շրջանային ժողովում — որպէս Ռաշտի պատգամաւոր—եղել է արհեստակցական միութիւնների ու դասակարգային պայքարի անհրաժեշտութեան տեսակէտը ջերմապէս պաշտպանողներից մէկը։

Եւ եթէ Եփրեմ ունեցել է երբեմն սխալներ —որոնք անխուսափելի են այդքան հարուստ ու արդիւնաւէտ մի կեանքի մէջ — այդ պէտք է բացատրել իր հմտուններ և Իրանի նախապատմական հասարակակարգի ճակատագրական հակասութեամբ։

Եփրեմ միշտ էլ անմոռաց կը մնայ, որպէս մի տիպիկ ինտերնացիոնալիստ — միջազգայնական՝ իր պատկանած կուսակցութեան հետ միասին, որպէս դարաւոր հակառակորդ ազգերը գործնականապէս եղբայրութեան, համերաշխութեան դրօշի տակ համախմբող անձնաւորութիւն։

Եւ դա կը լինի մեր պատմութեան ամենագեղեցիկ էջերից մէկը։

Զմոռանանք, որ Պարսկաստանում ենք, ուր կրօնամոլութեան արդիւնք՝ օտարատեացութիւնն է ժողովրդի վաղեմի սեփականութիւնը։

—

Ի՞նչպէս և ի՞նչ էր մտածում Եփրեմը—Պարսկաստանի ապագայի և բուն պարսիկ ժողովրդի մասին։

Ի՞նչպէս էր ըմբռնում նա այդ խնդիրները, որոնցով այնքան ոգևորուած էր և ուրիշներին էլ համոզել կ'աշխատէր։

Ուշագրաւ են Եփրեմի հեռաւոր մտքերը — արտայայտուած մի ընկերական խնջոյքում, ներկայութեամբ հայ մարտիկների, Սարդար Բըհատուրի, պարսիկ և բախտիար հրամանատարների ու Թաւրիզի հայ երիտասարդութեան։ Վերջինիս խնդրանքը էր, որ Եփրեմ մտածուած ու համոզիչ շեշտով դիմեց ներկաներին.

— „Ընկերնե՛ր, դուք պահանջում էք, որ անպայման խօսեմ։ Ահա ամբողջ 2—3 տարի է, բաժանուել եմ ձեզնից և այդ ժամանակամիջոցում քանի՞ քանի հին կուռքեր են ջարդուել, որքա՞ն համոզումներ փոխուել։ Դուք իմ կարծիքն էք ուզում իմանալ Պարսկաստանի ապագայի ու ժողովրդի մասին։

Ձեր հետաքրքրութեան ամենաէական պատճառը ես համարում եմ անորոշութիւնը։ Համամիտ եմ ձեզ հետ, որ կուից առաջ նախ պիտի ճշտել, թէ ի՞նչի ենք ձգտում։

Ինձ ասում են և բազմաթիւ նամակներ ունիմ ստացած, որ մեր յաղթանակները մնում են և պիտի մնան ապարդիւն, քանի որ ինքը—պարսիկ ժողովուրդը և մասնաւորապէս նրա գիտակից տարրերը իդեալազուրկ են և անընդունակ այն հսկայական շինարար աշխատանքին, որպիսին պահանջում է նոր Իրանը։ Եւ այդպէս մի շարք կասկածներ, ենթադրութիւններ։

Դժբախտաբար, մենք քիչ ենք ճանաչում մեր դրացիներին, ինչպէս և պարսիկներին։ Ձեմ ժխտում, որ արևելքի մեծ բռնապետներն ու գերիշխող կղերականութիւնը ստեղծել են մարդկային կամազուրկ ու ստրուկ մի զանգուած—արդի պարսիկ ժողովուրդը։

Ձեմ էլ զարմանում, որ նոյն այդ ժողովուրդը անընդունակ է ինքնաբերաբար ապստամբելու, բողոքելու, զէնքով իր իրաւունքները պաշտպանելու։

Նոր գաղափարներ ու նոր միջոցներ են դրանք — անծանօթ ստրկութեան մէջ ապրող ժողովրդին։

Երբ նոր էր խմորուում սահմանադրական շարժումը, սակաւաթիւ անհատներ կային միայն, որոնք գիտակցաբար գործելու, պայքարելու տրամադրութիւն էին արտայայտում։ Ո՞վ կարող է ժխտել, որ դրանց թիւը այսօր հասնում է հարիւրների, հազարների, որ դրանք կազմում են արդէն նոր Իրանի թարմ ծաղիկները և նոյնիսկ հրապարակ են գալիս, որպէս կուսակցութիւններ՝ իրենց օրգաններով հանդերձ։ Եւ իւրաքանչիւր մի նոր յաղթանակ ստեղծում է մեր ցանկացած ուժերի մի համեստ քանակ։

Քսան տարի առաջ ճիշտ նոյն նուաստեցուցիչ կարծիքն էր տիրում մեր—հայերի մասին։ Իսկ այսօր մեզ համարում են աւելի քան յեղափոխական, զէնքի ու կուի սիրահար։

Ես աւելի քան վստահ եմ, որ պարսիկ ժողովուրդը նոյն ժամանակամիջոցում աւելի մեծ թւով պիտի ունենայ պայքարող խմբակներ ու կուսակցութիւններ, իրենց հայրենիքի ազատութիւնն ու սահմանադրութիւնը զէնքով պաշտպանող լեգէոններ։

Բաւական է յիշել միայն վերջին 4 — 5 տարիների արդիւնքը։

Առարկողներ էլ կան, որ օտար պետութիւնները չեն կարող հանդուրժել Պարսկաստանի անկախութիւնը՝ ներկայ պայմաններում։ Գուցէ այդպէս է. մենք դրա դէմ էլ կը կուենք բոլոր հնարաւոր միջոցներով։ Սակայն չմոռանանք, որ պետութիւնները կարող են ոչնչացնել սահմանները, բայց ոչ երբէք պարսիկ ժողովուրդը։ Մենք միշտ պիտի մնանք իրար մօտ, կողք-կողքի,—սա մի ճակատագրական անհրաժեշտութիւն է։ Նրանց զարգացումը մասամբ և մերն է։

Ինձ ոգևորողը այդ նոր սերնդի հրապարակ գալն է, մեր և պարսիկների եղբայրութեան ու համերաշխութեան հեռանկարը և բռնապետութեան, աղայական ու կղերական հարստահարիչ լուծի իսպառ ոչնչացումը։

Բոլոր ուժով ու հնարաւոր միջոցներով պէտք է մաս-

նակցել այդ շարժման։ Դա մեր իսկ կուսակցութեան նշանաբանն է"։

Ապա Եփրեմ առաջարկեց Նոր Իրանի և Նոր սերնդի կենացը՝ յանձին պարսիկ ու բախտիար ընկերների։

Խօսքը այնքան համոզիչ էր, շեշտը այնքան խոր և հաւատը՝ անկեղծ, որ առարկութիւն իսկ աւելորդ նկատուեց։

Ահա թէ ի՞նչ և ինչպէս էր մտածում Եփրեմ, ահա թէ ում է կորցնում խե՜ղճ Իրանը։

Այո, պաշտամունքի անխառն զգացումով է, որ պիտի խոնարհենք մեր պատմութիւնը զարդարող թարմ շիրմի առաջ—յաջողութիւն մաղթելով հանդերձ պատերազմի դաշտում գտնուող մարտիկներին, որոնց վրայ ծանրանում է այսօր՝ դժուարին գործի պատուաւոր շարունակութիւնը։

Ս. ԱՐ-ԵԱՆ

ՅՈՒՇԵՐ ԵՓՐԵՄԻ ԿԵԱՆՔԻՑ

1908-ի յուլիսին էր։ Պարսկական նորաբողբոջ պարլամենտի ոմբակոծումը բռնակալ Մեհմեդ-Ալիի ձեռքով, առաջին անգամը զարթեցրեց մորֆէան քնի մէջ խորասուզուած պարսիկ ժողովրդի ոգին։ Ազդանշանը տուեց Ատրպատականի Նահանգից. Թաւրիզում ըմբոստների մի փոքրիկ խումբ շեփորել էր ստրկութեան ենթուած մթնոլորտի մէջ ապստամբութեան քաջագրահնչիւն փողը.

Բռնակալութիւնը չէր կարող իր՝ թէկուզ ամենաբուռ կոպտութեամբ ճնշել ըմբոստներին։ Ապստամբութեան ազդանշանը տուած էր յանուն ժողովրդի ազատագրութեան և հեշտ չէր խեղդել այն։ Փաստը ակներև է. Թաւրիզը իր մի բուռն ըմբոստներով ամբողջ 6 ամիս դիմադրեց բռնակալական զինուած բանակին, որին գլուխ էր կանգնած Մեհմեդ-Ալիի ամենահաւատարիմ ու հլու սպասաւորը, Էյնէ-Դօվլէն։

Երկունքի օրեր էին Ատրպատականի համար։ Կարճ ժամանակում նրանք փոխուեցին արեան օրերի և առաջին անգամը իսլամի հողը ողողուեց իսլամ զաւակի արիւնով, յանուն սահմանադրութեան։ Սակայն, այդ արիւնոտ օրերն անգամ չ՝ազդեցին երկրի միւս վայրերի վրայ։ Դարաւոր շղթաները այնպէս էին կաշկանդել այդ գերի ժողովուրդը, որ նա քար կտրած այդ բոլորի հանդէպ սոսկ ականատեսի դեր էր կատարում։ Լուռ էր անգամ Գիլանի Նահանգը, որ Ատրպատականին կից է և սերտ կապուած նրա հետ։ Զկար նախաձեռնութեան ոգի, չկար կենդանի գործ։

Անտարբեր չէր նոյն շրջանում Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Հաւատարիմ իր V-րդ Համագումարի որոշման և հետևելով Ատրպատականի օրինակին (ուր սկզբից իսկ Դաշնակցական ճիւղը ձեռք-ձեռքի տուած պարսիկ ըմբոստների հետ՝ պարզել էր ապստամբութեան դրօշը). այստեղ ևս առաջին շարժման խթանն եղաւ։ Եփրեմը խմորումի և կազմակերպման հոգին էր Գիլանի շրջանում։ Յեղափոխականի բովից անցած և ամբողջ էութեամբ յեղափոխական՝ նա չէր կարող համբերել, տանել սառնութեամբ Թաւրիզի շարժումները։ Արդէն մինչ այդ՝ նա շատ ծանր օրեր էր ապրել, համբերութեան բաժակը լեցուել էր... Այդ ժամանակ նա գտնուում էր Գիլանի Էնզելի քաղաքում, ուր ռուսական մի ընկերութիւն (Կասպից ծովի) Էնզելիի նաւամատոյցն էր կառուցանում ու զբաղուած էր այդ ընկերութեանը փայտ մատակարարելու գործով։

1908-ի հոկտեմբեր 2-ն է, յիշատակելի, անմոռանալի օր։ Եփրեմը մտենում է ինձ և ասում իր սովորական սառնութեամբ. „Յո՜, մեռանք անգործութիւնից այս վերան քաղաքում, այսպէս շարունակել չի կարող. մի քանի թուրք զարտաշների (եղբայրներ) հետ տեսնուել եմ, տրամադրութիւնները պատրաստել. խոստացել են հաւաքուել երեկոյեան, գնանք տեսնենք, գուցէ հնարաւոր լինի մի բան անել" (ուզում է խօսել պարսիկներին կազմակերպելու առթիւ)։ Նոյն երեկոյեան ժամի 10-ն է, Էնզելիի եղէգնապատ նեղլիկ ու ծուռ փողոցներով, հեռուից հեռու մթութեան մէջ մի պարսիկ առաջնորդում է մեզ դէպի իր տունը և ամեն քայլափոխում չորս կողմը նայում, մի գուցէ որևէ մէկի ուշքը գրաւէ։ Վերջապէս, մենք առանց նկատուելու, նրա տանն ենք, մի փոքրիկ սենեակում և շրջապատուած 6 պարսիկ ազատականներով, որոնցից մէկը միայն Գիլանից, միւս հինգը Թաւրիզցիներ են։

Խօսակցութեան նիւթը օրւայ հրատապ հարցն է։ Եփրեմը բացատրում է հաւաքման նպատակը և բացատրում է ոգևորիչ խօսքերով օրւայ մեծ նշանակութիւնը և բոլոր իրանցիների կատարելիք ազգային ու հայրենասիրական պարտականութիւնները արիւնոտ օրերում. կոչ է անում յանուն հայրենիքի ազատութեան կազմակերպուիլ թէկուզ ամենահամեստ ուժերով, վայրկեան առաջ արձագանք տալու երկունքի մէջ ապրող և ապստամբ Թաւրիզի եղբայրներին։ Եփրեմը այդ օրերից արդէն ցոյց էր տալիս յեղափոխական քարոզչի իր անսովոր ընդունակութիւնները։ Նա ծանօթ է իրեն շրջապատող ժողովրդի հոգեբանութեան և գիտէ, ինչպէս մտենալ նրան. իր համոզիչ տօնով ազդում է ներկայ եղողների վրայ և սրանք վրէժխնդրութեան երդումն են անում՝ գործելու։ Եփրեմը, հաւատարիմ իր տակտիկին, յարմար բոպէն ձեռքից չէ տալիս և առաջին անգամը կազմակերպում է Գիլանում պարսկահայ խառն կոմիտէ, հիմք դնում Գիլանի յեղափոխական շարժումներին, որոնք արձագանք են տալիս Ատրպատականի ապստամբութեան և այնքան նշանակալից դեր են կատարում Իրանի յեղափոխական պատմութեան մէջ։

Եփրեմի տրամաբանութիւնը զուտ յեղափոխական է.

համեստ ուժերով անգամ կարելի է յանդուգն ծրագիրներ մշակել ու գործադրելուն ձեռնարկել։ Կազմակերպված խմբակը մեծ խրախոյս էր նրա համար և նա այդ բոպէից այլ ևս հանգիստ ու դադար չունի մի օր Ռաշտ է, միւս օր Էնզելի, ամեն տեղ անհատական, յեղափոխական ուժեր է հաւաքում, դաշնակցական ընկերների հետ միասին, խօսում, խրախուսում, համոզում, ծրագիրներ է յօրինում և վերջապէս կազմակերպում է նման խմբակ նաև Ռաշտի մէջ ու անմիջապէս երկու վայրերը կցում իրար հետ։ Ուժերի հաւաքման, տրամադրութիւններ պատրաստելու գործը պրօպագանդայի շնորհիւ առաջ է գնում, բայց Եփրեմը գործի յեղափոխական է և դրանցով նա չի գոհանում։ Հազիւ 2 ամիս այդ խմբերը կազմակերպելուց յետոյ՝ մի օր նա առնում է հետը զինուած 2 դաշնակցական ու 2 պարսիկ մարտիկներ և մեկնում քաղաքից։ Մեր հարցին՝ թէ ո՞ւր է գնում այդ 4 մարտիկներով, նա իրեն յատուկ պաղարիւնութեամբ պատասխանում է. „Պէտք է ճահիճը խառնել, ջուրը պղտորել մինչև լաւ պարզի“...

Մի գեղեցիկ ծրագիր. Թալիշի լեռնաբնակ, արի ժողովուրդը, որ մեր հարևանութեամբ, մեզ պէս 30 տարուց ի վեր ամենասոսկալի բռնութիւնների ենթարկուած, տառապում է իր յայտնի ցեղապետ Ամիդը-Սալթանէի ճանկերում—այդ զինուած լեռնաբնակները անպայման օգտակար կը լինին մօտալուտ շարժումներին. պէտք է միայն նրանց տրամադրել դէպի սահմանադրական ըէժիմը։ Բաւական է, որ մեզ յաջողւի այդ ցեղի մի քանի ներկայացուցիչներին համոզել միանալու և ապստամբելու տիրող կարգերի դէմ, արձագանք տալու Ատրպատականի շարժումներին և վերականգնելու Մաշրութան (Սահմանադրութիւնը), որը պիտի տայ իրենց գոնէ մարդավայել ապրելու իրաւունքը և թօթափելու դարաւոր սարկութեան լուծը։

Մեծ էր մեր զարմանքը այդ յանդուգն ծրագրի հանդէպ... քանի որ ծանօթ էինք յիշեալ ցեղապետների սարկական տրամադրութեանը, թերահաւատ էինք դէպի նրա իրագործումը... Բայց Եփրեմը գնում է իր 4 մարտիկներով, համոզուած իր ունենալիք յաջողութեան մէջ և մի քանի օրից վերադառնում մասամբ իր նպատակին հասած. արդիւնքը տեսնում ենք շուտով. Ռաշտի շարժումները սկսելուց յետոյ, նոյն խաներից 2-ը իրենց զինուած ուժերով գալիս են միանում Եփրեմի հետ, սահմանադրական բանակին։

Ահա և 1909-ի փետրուարը, Ռաշտի յանկարծակի բռնկումը։ Կովկասից եկած մի քանի վրացի յեղափոխականներ միացած տեղացիների հետ, 10—12 հոգուց մի խումբ կազմած, և այդ չնչին ուժն էլ 2 մասի բաժանած, մի կողմից յարձակւում են կառավարական դատարանի վրայ, միւս կողմից յայտնի բռնակալ Սարդար Ասֆխամի, Գիլանի նահանգապետի, տերրօրն են կատարում, խրախճանքի բոպէին։ Տերրօրիստը վրացի յեղափոխական Վելիկօն է, որ կառավարում է յանդուգն ձեռնարկը. իսկ Եփրեմը դաշնակցական մի քանի մարտիկներով շրջապատուած դատարանի դիրքերում՝ մի կողմից կռւում է, միւս կողմից խրախուսում կամաւորներին և դատարանի խորքը մտնում։ Ժողովուրդը յանկարծակիի եկած, գլուխը կորցրել էր և չգիտէր, թէ ի՞նչ է կատարւում. հազիւ 2 ժամ անցած, դատարանը իրենց ձեռքին, նահանգապետը սպանուած և սահմանադրականները քաղաքի տէրն են։

„Կորչի՛ բռնապետութիւնը կեցցէ՛ սահմանադրութիւնը“ գոռալով, տրւում է ապստամբութեան ազդանշանը։ Սկսուած ոգևորութիւնը աննկարագրելի էր։ Եփրեմի համար բերկրանքի օրեր էին. նրա մռայլ դէմքը փոխուել էր, ուրախութեան ժպիտը շողշողում էր վրան։ Խմբերի կազմակերպում, զէնքերի հաւաքում, զինավարժութիւն, տրամադրութիւնների հրահրում, հսկողութիւն քաղաքի կարգ ու կանոնի վրայ՝ այդ բոլորը Եփրեմի և իր ընկերների գործն էր։ Եւ շնորհիւ իր ընկերական տակտիկի ու կառավարելու խոշոր ընդունակութեան՝ նա համակրելի էր թէ մարտիկներին և թէ ժողովրդին։ Երկու օրւայ մէջ կարգի դնելով ալէկոծուած քաղաքը, նա գալիս է Էնզելի իր զինուած մարտիկներով. ընդունւում է ամբողջ ազգաբնակութեան կողմից մեծ խանդավառութեամբ. թնդում են մարտիկների զալպերը քաղաքային այգում, ի նշան սահմանադրութեան վերականգնման. ամբոխը „կեցցէ՛ սահմանադրութիւնը, կորչի՛ բռնապետութիւնը“ աղաղակելով, յայտարարում է քաղաքը սահմանադրական և նոյնպէս ապստամբութեան դրօշը պարզում։ Եփրեմը իր մի ոգևորիչ ճառով ողջունում է սահմանադրութիւնը և կոչ անում ժողովրդին մասնակցելու, ինչպէս որ կարող է, սահմանադրական ըէժիմի վերականգնելուն. քանի որ միայն նրանից է, որ կը գտնէ իր դարերից ի վեր ոտնակոխ իրաւունքները։

Եփրեմը հանճար էր ծրագիրներ յղանալու մէջ։ Ծրագիրներ — մինը միւսից համարձակ, յանդուգն — որոնց գործադրութեանը ձեռնարկում էր ամենայն սառնասրտութեամբ և անձամբ մասնակցում էր, միշտ վստահ իր յաղթանակին։ Դժբախտաբար, պայմանները չեն թոյլ տալիս ինձ ներկայումս պատմելու մանրամասները, թողնում եմ նրանց՝ ապագայի պատմութեան։ Յեղափոխական էր, կազմակերպող և վարիչի արտակարգ ընդունակութիւններով օժտուած և նա ապացուցեց այդ՝ բազմաթիւ ու բազմապիսի օրինակներով, իր 4-ամեայ պարսկական յեղափոխական գործունէութեամբ. նա մնաց այդպիսին և յեղափոխականին վայել մահով, պատերազմի դաշտի վրայ, կնքեց իր մահկանացուն...

Քո յիշատակը, սիրելի ընկեր, յաւիտեան թարմ կը

մեայ նոյնիսկ հեռուէն հեռու քեզ ծանօթ մարդկանց սրտում, ո՞ւր մնաց քո մտերիմների, որոնք առիթ են ունեցել քեզ հետ լինել, քո գաղափարական գործերի ու ձեռնարկների մէջ, ներշնչուել քո երկաթէ կամքից ու կորովից, հետևել քո գծած ճանապարհին...

Ծունր չոքած շիրմիդ առջև, հանգիստ եմ մաղթում տանջուած ոսկորներիդ, սիրելի ընկեր։

Թ Փ Ի Կ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱԼԱԾԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ԴԱՏԸ

Նա միշտ էլ կայ—այդ չարաբաստիկ, համամարդկային և կնճռալի դատը։ Եւրոպայի հանրային կարծիքի մէջ նորէն մի տեսակ շրջումն է կատարուում. մտաւորականութեան աչքի ընկնող ներկայացուցիչներ սկսում են դարձեալ զբաղուել մանր, ճնշուած ազգերի խնդրով։ Կազմուում են խմբակցութիւններ, հրապարակ են նետուում շրջաբերականներ ու կոչեր, որոնք հրաւիրում են ձայն բարձրացնել յանուն ազգային ոտնահարուած իրաւունքների։

Մի այդպիսին կազմուած է վերջերս Պարիզի մէջ և կոչուում է „Ազգերի միութիւն“ (*Union des nationalités*) և որ մտադիր է կազմակերպել միջազգային մի համագումար։ Ցեղի ունեցաւ այդ նպատակով նախնական մի ժողով։

Այդ նոր կազմակերպութեան դիտաւորութիւնները պարզուած են ժողովի նախագահ և ֆրանսիական կաճառի անդամ Պ ա ն լ ե վ է ի ճառի մէջ.

„Բոլոր ազգերի մէջ կայ մի ընտիր տարր, պատրաստ պաշտպանելու միջազգային արդարութեան դատը։ Բայց դա միայն ընտիրներն են, մի փոքրամասնութիւն։ Նոր կազմակերպութիւնը, պրօպագանդի բոլոր միջոցներով պիտի դիմէ ժողովրդային զանգուածներին։ Նա կուզէ ստեղծել բոլոր ճնշուած, հարստահարուած ժողովուրդների մէջ մի տեսակ ընդհանրական գիտակցութիւն (*conscience commune*), եղբայրական մի համերաշխութիւն, որ զգան նրանց ամենանուաստ զաւակներն անգամ։ Նա կուզէ ստեղծել ճշմարիտ և հզօր հ ա ն ր ա յ ի ն կ՛ ա ր ծ ի ք, համաեւրոպական և համաշխարհային։

„Ամեն օր աշխարհի որևէ անկիւնում տեղի են ունենում եղեռնափորձեր ժողովուրդների իրաւունքի դէմ, բայց նրանք տեղի են ունենում ն կ ո ւ զ ի մ է ջ։ Նրանք անհնարին կը լինէին, եթէ դուրս բերուէին լոյս աշխարհ։

„Նոր կազմակերպութիւնը—շարունակում է նշանաւոր ֆրանսիացին—փափագում է, հարկաւ, տիեզերական խաղաղութիւն։ Սակայն այդ խաղաղութիւնը չպիտի նիւթի յաղթուածների լռութիւնից և սարկութիւնից. նա պէտք է յենուած լինի իրաւունքի, արդարութեան վրայ։ Նա երբէք չպիտի թուլացնէ հարստահարուած ժողովուրդների դիմադրական ուժերը, երբէք չպիտի մոռնայ նրանց դէպի սարկական համակերպութիւն...

Պարիզում կազմուած „ազգութիւնների կենտրոնը“ պէտք է, ընդհակառակը, բարձրացնէ, խթանէ այդ ժողովուրդների արիութիւնը, հաղորդէ նրանց յոյս ու կորով“...

Ահա մի կազդուրիչ երևոյթ և մի ուշագրաւ յայտարարութիւն։ Խ ա ղ ա ղ ա ս է ր ն ե ր ի մի նոր ընկերութիւն է դա, բայց ոչ այն ծոյլ և ցնորական խաղաղասէրների, որոնք շարունակ կոչ են անում մարդկանց—նաև հզօրների, աշխարհի հրամանատարների—մարդասիրական զգացումներին և որոնք սովորաբար շատ քիչ են ազդում դիւանագիտական կշիռքի վրայ։ Պատերազմի համաձայնակը շարունակում է, չնայած նրանց տենդային քարոզներին։ Եւ իրաքանչիւր պատերազմ մի նոր ու դառնագոյն հիասթափութիւն է բերում այդ ազնիւ ուտոպիստներին...

Այսօր տակաւին փչում են Արևմուտքի և Արևելքի վրայ չարաշուք հողմեր։ „Եղեռնափորձերը“ շարունակուում են մանր ազգերի իրաւունքների դէմ։ Լեհաստանը, Ֆինլանդիան, Էյզաս-Լոտարինգիան — իրաքանչիւրը հնչեցնում է իր յատուկ ցաւերն ու գանգատները քաղաքակիրթ մարդկութեան ականջին։ Վիլհելմ II հրապարակով սպառնաց խլել նաև այն չնչին ինքնավարութիւնը, որ տուել է Էլզասին։

Իսկ Արևելքո՞ւմ... Այնտեղ ազգայնութեան դատը շարունակում է կարմիր գետեր հոսեցնել...

Մինանգամայն, ուրեմն, այժմէական է, Պանլեվէի և պարիզեան „կենտրոնի“ կոչը։ Հանրային կարծիքի խլրտումները ապարդիւն չեն կարող անցնել։ Նրանք աջողում են երբեմն կանխել ժողովուրդների և առանձին համախմբումների դէմ նիւթող ոճիրները։ Նրանք ազդում են անգամ Պետերբուրգի և Կ. Պոլսի կառավարութիւնների վրայ։ Երեք տարի առաջ Պարիզի մէջ յարուցուած լրագրական աղմուկը Զ ա գ ր ե բ ո ւ մ տեղի ունեցող դատավարութեան առթիւ՝ ազդեց Նանաւստրիական կառավարութեան վրայ և փրկեց մահուադատավճռից յիսունի չափ խօրվատ-սերբեր։ Բռնապետական և կիսաբռնապետական երկրների կառավարութիւնները սովորաբար զգոյշ են վարուում, երբ իրենց գաղտնի դաւերը յայտնագործուում են մեծ մամուլի մէջ

***

Հանրային կարծիքը Եւրոպայի մէջ սկսում է խլրտալ՝ նաև Թիւրքիոյ կացութեան պատճառով։ Եւրոպացոց նախկին խանդավառութիւնը „Երիտասարդ Թիւրքիոյ“ ազատարար թռիչքների առթիւ տեղի է տուել մի տխուր հիասթափութեան, որ մերթ ընդ մերթ փոխարկուում է արդարացի զայրոյթի։ Լոնդոնի „Բալկանեան կոմիտէն“ արդէն իսկ մի քանի անգամ ազդարարութիւններ ու սպառնալիքներ արեց Մակեդոնիայի անմխիթար վիճակի առթիւ։ Իսկ Ալբանիայի կոպիտ ճնշումները և կառավարութեան շարունակական խաբէութիւնները ցասումն են յարուցանում ամենուրեք։

Հայաստանը հեռու է... Բայց նրա ցասման ու բողոքի ձայնն ևս չպիտի յապաղի աղմկելու եւրոպական մամուլն ու հրապարակը։ Այդտեղ է մղում ճակատագրապէս թիւրք կառավարութեան և տիրապետող կուսակցութեան բռնած ընթացքը։ Հայաստանի մէջ գործուած ոճիրների շարանը քանի գնում սաւարանում է։ Անձի,

գոյքի ու պատի դէմ տեղի ունեցող շարունակական եղեռնափորձերը այնքա՞ն յիշեցնում են վաղեմի, նախայեղափոխական շրջանը... Ի տեղի խրատելու անցեալի փորձերից և բռնելու շիտակօրէն բարենորոգման ճանապարհը—Նոր Թիւրքիան միշտ աւելի և աւելի սահում է դէպի հնի աւազանները, ուր նրան սպասում է թերևս վերջնական անկում։ Արդէն իսկ կարծէք երևում են փոթորկի նշանները։ Ահա խորհրդաւոր շշուկներ ինչ որ համաձայնութիւնների ու դաւերի մասին, ահա և նոյնքան խորհրդաւոր տեսակցութիւններ, նախ Ռակոնիջի, ապա և այսօր՝ ֆինլանդական ջրերի մէջ, ուր խօսակցութեան գլխաւոր նիւթն է Արևելքի յաւիտենական „հիւանդը“...

***

Մի այլ Ընկերութիւն, աւելի „արմատական“ ծրագրով, հիմնուել է Նորերս Իտալիայի Տ օ ր ի ն օ քաղաքի մէջ։ Այդ մէկի շարժառիթն արդէն իտալօ-թիւրք պատերազմն է։ Նա յարուցել է Ապենինեան թերակղզու մէջ մարտական, փոքր ինչ թթու, հայրենասիրութեան մի մեծ հոսանք։ Նոր Ընկերութիւնը դիմում է մի շրջաբերական-կոչով ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան, հրաւիրելով այն մի տեսակ խաչակրաց արշաւանքի՝ ընդդէմ Թիւրքիոյ։ Թիւրքիան—ասում է նա—չնայեած իր յեղափոխութեան, շարունակում է մնալ բարբարոս, ազգահալած և անբուժելի մի պետութիւն։ Իտալիոյ հրատարակած պատերազմը—կռիւ է յանուն քաղաքակրթութեան, և բոլոր պետութիւնները պէտք է միանան՝ բաժանելու համար այդ պետութիւնը, ազատելու Կրետէն, Կղզիները, Ալբանիան, Մակեդոնիան, Հայաստանը...

Այդ Ընկերութիւնը ունի ճիւղաւորութիւններ և Իտալիայից դուրս։ Նրա նախագահն է Տօրինօի պրոֆէսոր Միքել Անջելօ Բիլլիա—*Michelangelo Billia*։ Նա ուղղում է իր դիմումները—„Դրօշակ“ի խմբագրութեան միջոցով—նաև Հ. Յ. Դաշնակցութեան։

Նրա դիմումների և լրագրական յօդուածների ոճը այնքան ծայրայեղ է, այնքան մոլեգնոտ, որ անպատեհ ենք համարում առաջ բերել մանրամասնօրէն։

Ահա թէ ինչ արդիւնքներ է տալիս Նոր Թիւրքիոյ կարճատես և կարճամիտ ներքին քաղաքականութիւնը...

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ՀԱՅ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ

Ահա Նորից հնչեց փողը պատերազմի և մենք նորից գնում ենք մարտի դաշտը։

Մի անգամ էլ գնում ենք հարուածելու այն մարդկանցից մէկին, որ մի ժամանակ սահմանադրութեան պաշտպան ձևացնելով իրեն, այսօր նոյն այդ սահմանադրութեան դէմ է բարձրացրել իր գէնքը։

Ընկերնե՞ր, պէտք է խորը գիտակցենք, որ գնում ենք պաշտպանելու նրա դէմ այն կարգերը, որոնք պէտք է համապատասխանեն աշխատաւոր ժողովրդի շահերին, գնում ենք պաշտպանելու այն գիւղացիութիւնը, որ մինչև օրս զանազան խաների, արբաբների ձեռքից տանջուելուց յետոյ, այժմ էլ Սալար-Դօվլէներից, Ամիր Մուֆախամներից և նման բորենիներից է հեծում։

Մենք եկած ենք նոյն այդ աշխատաւոր ժողովրդի ծոցից։ Թողած մեր մաճը, մեր սեփական համեստ գործերը, այժմ զէնքով ու մեր կեանքի գնով դուրս ենք եկել այս երկրի ուժեղների դէմ, միայն և միմիայն աշխատաւորութեան շահերը ի նկատի ունենալով։

Ուր էլ որ լինի, ինչ ազգի, ցեղի, կրօնի էլ որ պատկանի այդ գիւղացիութիւնը, նա մեր այսօրուայ մտրիկ կամ հեռու հարևանը, վաղը մեր բարեկամն ու զինակիցն է ընդդէմ բոլոր բռնապետների, հարստահարողների ու շահագործողների։

Կռուե՞նք ուրեմն այսօր մեր այդ հարևանների համար, պաշտպանենք նրանց, որ վաղը, ձեռք ձեռքի տուած, աշխատաւորի դատը պաշտպանենք, նրա իրաւունքների համար կռուենք։

Ընկերնե՞ր, ահա քանի ամիս է, ինչ մենք կռուում ենք այս երկրի սահմանադրական կարգերի համար, բազմաթիւ յաղթութիւններ ենք տարել, մեր թանկագին զինակիցներին ենք զոհել, երբէք չենք նահանջել ու միշտ մենք ենք եղել նախայարձակ։

Այժմ էլ կոչ ենք անում ձեզ, զինակից ընկերներ, Ազատութեան և Արդարութեան ապաներ լինել, չ՝արատաւորել ձեր անունը ընչաքաղցութեան և վեհերոտութեան արատով, եղէք միշտ անվեհեր և անշահախնդիր։

Մեզ քաջալեր թող լինի մեր նահատակ ընկերների անմահ յիշատակը։

Կռուենք անշահախնդիր հերոսների պէս և թող ոչ ոք չհրապուրուի թալանով։

Մենք թալանչիներ չենք, մենք աշխատաւոր ժողովրդի, գիւղացիութեան պաշտպաններն ենք։ Մենք չենք, որ պիտի գայթակղենք հարստանալու տենչով, մենք չենք, որ պիտի խլենք գիւղացու արիւն քրտինքով վաստակած աշխատանքը...

Ընկերներ, չլսե՞նք վատ թելադրումները, իմանա՞նք մեր արժէքը և անբիծ պահենք անուն ու պատիւ։

Թող կորչի՞ն մեր անունը արատաւորող մեծ ու փոքր թալանչիները.

Կեցցե՞ն գաղափարի զինուորները.

Կեցցէ՞ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

ԹԵՀՐԱՆԻ ԲԱՆԱԿԻ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԶԻՆԻՈՐՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Թեհրան
1912, մարտ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ

IV

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Պատմափիլիսոփայական ակնարկ.—Հակորհնութիւններ.—Հայաստան և Եւրոպա. — Կուլտուրական նմանութիւն. — Բնական միջավայրը, իբրեւ ցեղի պահպանութեան գրաւական. — Դուքանը եւ կարաւանը, իբրեւ հզօր խթաններ հայկական բաղամակրթութեան. — Բնութիւն եւ ոճիաստանիք.—«Միջնորդ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ».—«Յարմարելու» անսովոր ուժը եւ նրա սեւերոն կողմերը. — Հայ առեւտուրը միջին դարում. — Հայ վաճառականը՝ որպէս կուլտուրայի նախակարապետ. — Օտար վկայութիւններ. — Տուրքեր, ժողեր, Կարլ Ռիտտեր, Օլիվիէ, Լանգլուա, Համտհաուզէն, Ռեկլիւ եւ ուրիշներ. — Հայ ազգը միջին դարում. — Փոքրկումի նշանները. — Անհաստեների թաստերմուտը. — Մխիթար Աբբա եւ Իսրայէլ Օրի. —

Պատմութեան փիլիսոփայութիւնը մէկից աւելի հակորինութիւններ (*antinomie*) պիտի գտնէ հայ-

կական ճակատագրի բազմադարեայ էւօլիւսիօնի մէջ։

Մի կեանք, որ թաւալւել է անդուլ հալածանքի ու բնաջնջման ալիքներում—և սակայն, յարատևել է... մի անօրինակ, առեղծւածային կենսունակութեամբ։

Մի ժողովուրդ՝ այնքա՜ն քչւոր իր թւով, մի միջավայր՝ այնքա՜ն յաճախ ենթակայ աշխարհաւեր հեղեղների, մի բնութիւն՝ այնքա՜ն դաժան, անհիւրընկալ կլիմայական ու տեղագրական պայմաններով, կտրւած քաղաքակիրթ Արևմուտքից ահագին անջրպետներով,—և սակայն մենք տեսնում ենք այդ ամէհի և բքաշունչ բնութեան մէջ, այդ անհամբոյր և դժնդակ միջավայրում դեռ ամենահին ժամանակից պրոգրէսի, յառաջխաղացութեան զօրաւոր ցոլքեր, նիւթական և իմացական քաղաքակրթութեան շքեղ բողբոջներ, որոնք տասնեակ դարերի արիւնակուռ ու արտասւացող տարածութեան վրայ աստիճանաբար շեշտւելով ու փոխանցւելով սերունդներին, մղել են այդ ուշագրաւ ցեղը — տանջանքի և անդադրում մաքառումի ճանապարհով—դէպի ազգային ինքնաճանաչութիւն և դէպի ազգային-ազատագրական շարժումներ...

Հակօրինութիւնները շեշտւում են, աւա՜ղ, նաև բացասական, աղէտաւոր կերպարանքով։

Մի ժողովուրդ՝ որ ասիական խաւար ու միապաղաղ անշարժութեան հօրիզոններում, հնուց ի վեր եղել է միակ անկեղծ և խանդավառ բարեկամն ու կողմնակիցը եւրոպական աշխարհահայեացքի, որ եղել է—Վիկտոր Ֆերարի աջողակ արտայայտութեամբ—„եւրոպականացած ասիացիների մի համայնք“, *un peuple d'asiatiques européanisés*, մի ժողովուրդ՝ որ իր յորդ արիւնով իսկ, դեռ խաչակրաց արշաւանքների ժամանակից, փաստել է իր հզօր, բնազդային համակրութիւնը արևմտեան քաղաքակրթութեան համար,—այդ ժողովուրդը, սակայն, իր անլուր և անվախճան նահատակութեան շրջաններում, մահմեդական բարբարոսութեան մշտաճարակ դժոխքի մէջ, բնաւ երբէք չվայելեց քաղաքակիրթ Եւրոպայի առատաբուխ պարգևները, բնաւ երբէք չ'արժանացաւ նրա կենդանի և իրական աջակցութեան, թէպէտ և շա՜տ անգամ դիմեց նրան աղիողորմ գանգատներով ու աղերսանքներով, թէպէտ և շատ անգամ տեղացին արևմտեան հրամանատարների դահլիճներից վարդագոյն խոստումներ ու ոգևորիչ խրախուսանք... սկսած Իսրայէլ Օրիի առաքելութեան օրերից մինչև 1908 ազատարար թւականը...

Ինչո՞վ էր նա այնքան մօտ Եւրոպային. ինչո՞վ էր հայութիւնը այնքան սերտ շաղկապւած եւրոպական աշխարհայեացքի հետ։

Քրիստոնէութիւնը, անտարակոյս, իր տեղն ունի այդ մտային և հոգեկան նմանութեան մէջ, բայց այդ տեղը չպէտք է շատ չափազանցնել։

Հայ ժողովրդի քրիստոնեայ լինելու հանգամանքը մեծապէս, այո՛, նպաստել է նրա դարաւոր շփումներին եւրոպական ազգերի հետ. և միանգամայն ուշագրաւ ու հասկանալի է միջնադարեան կրօնասէր ու ջերմեռանդ Եւրոպայի հետաքրքրութիւնը այդ ժողովրդի ճակատագրով, միսիօնարների և այլ բարեպաշտ, հետազօտող ճամբորդների տենդային վազքը դէպի Արարատ և Էջմիածին, դէպի Ճորոխի և Արաքսի հովիտները, ուսկից նրանց հրապուրում էին բիբլիական յուշերը, „երկրաւոր դրախտի“ թովիչ առասպելները և „առաջին քրիստոնեայ ժողովրդի“ կենցաղն ու պատմութիւնը։

Սակայն, այդ ժողովուրդը ուրիշ տեսակ յատկանիշներ, ձիրքեր ունէր, որոնք նրան կապում էին—աւելի սերտ ու յարատև կապերով—քաղաքակիրթ Արևմուտքի հետ... ճիշտ այն յատկանիշները՝ որոնք, տարաբախտաբար, բացակայել են իրեն նեաճող և տիրապետող ցեղերի մէջ։ Այդ նեաստ և հեռաւոր ասիացին „եւրոպականացած էր“ այն պատճառով՝ որ իր պատմական գոյութեան առաջին դարերից ի վեր գրկել էր ճշմարիտ քաղաքակրթութեան, արդիւնարար, ստեղծագործող աշխատանքի դրօշը, զարգացրել էր համեստ չափով իր սառցապատ միջավայրում, իր խուժադուժ և բարբարոս դրացիների միջնոլորտում, քաղաքակրթութեան ամենանախնական ճիւղերը—երկրագործութիւն, առևտուր, արհեստ և արուեստ, գիր ու դպրութիւն—և այդ թանկագին ստացւածքներով օժտւած, այդ նիւթական և իմացական բագաժը շալակած, նա քայլել է դարերի խոր գիշերի մէջ, անցել է թոյլ, վեհերոտ շարժումներով թշնամիների լարած բիւրաւոր թակարդներից, մերթ ընդ մերթ ծածկւել է իր մրրկոտ ծովի ալիքների տակ, մերթ ընդ մերթ անէացել բարբարոսութեան գահավիժւող յորձանքներում, անդամալուծել իր թափը, սպառել իր կորովը, ապա վերստին դուրս նետւել դէպի մեծ ճանապարհը, սահել է խարխափելով միշտ դէպի վեր, դէպի առաջ, իր կարող և անվրէպ բնազդի թելադրութեամբ, մինչև որ հասել է, XIX դարու մէջ, այն փրկարար և մարտական ինքնագիտակցութեան, առանց որի չկայ ազգ այս աշխարհում։

Երկրագործութիւն և առևտուր—նախ և առաջ։ Երկուսն էլ քաղաքակրթութեան էւօլիւսիօնի մեծ հանգրուաններն են։ Մենք վեր հանեցինք նախորդ գլխի մէջ այն համատարած անտագոնիզմը, այն անհաշտ հակամարտութիւնը, որ եղել է հնագոյն ժամանակներից ի վեր սօցիալական երկու խոշոր տիպերի միջև—թափառական խաշնարածների և նստակեաց երկրագործների—մինը էապէս ռազմիկ ու յափշտակող, միւսը՝ խաղաղ, աշխատասէր և աշխարհաշէն։ Մինը կործանում է, միւսը շինում. մինը թարգման է վայրենութեան, միւսը թարգման է քաղաքակրթութեան։

Եւ մենք տեսնում ենք բազում դարերից ի վեր այդ երկու հակամարտ բնազդների չարաշուք ու յաւիտենական խաղը, տեսնում ենք երկու թշնամի հոսանքների անդուլ բազխումները մեր դժբախտ հորիզոններում... Մի կողմից՝ նոմադ և պատերազմիկ ցեղերի արշաւն է, որ գնում է ամենուրեք թափով ու շառաչով, աւերելով քաղաքներ, փճացնելով արդիւնագործութիւն ու առևտուր և ջնջելով մարդկային անհամար կեանքեր. միւս կողմից՝ դրա հետ զուգակցաբար—մի զարմանալի և հրաշագործ համբերողութեամբ ու տոկունութեամբ—ընթանում էր խաղաղ նստակեաց հասայնքի մրջունային աշխատանքը, նրա համեստ, քրթնաջան և շինարար ճիգը, որ շակում էր յաւերժօրէն առաջինների աւերածը, վերակենդանացնում էր հողը իր անխոնջ գութանով ու արօրով, վերաշինում էր քաղաքները իր հմուտ ճարտարարուեստով և իր խաղաղ ու լուիկ առևտրական կարաւաններով...

Գութան և կարաւան—երկու հզօր խթաններն են հայկական քաղաքակրթութեան, երկու ցայտուն ու պերճախօս յայտարարները ցեղի յամառ, ստեղծագործող և անպարտելի բնազդի։

Նրանք են, որ մացրել են աշխատանքի լայն բաժանում հայկեան համայնքի մէջ—որպիսին մենք չգտանք օսմանեան ու այլ թաթարական զանգուածներում — նրանք են, որ հնուց շերտաւորել են համայնքը դասակարգային բեղմնաւոր անջրպետներով և նետել են հայ ցեղը բարդ, այլատարր, քաղաքակիրթ հասարակութիւնների շարքը, զատելով այն՝ իրեն շրջապատող պարզ, համատարր և օրդային զանգուածներից։

Երկրագործութիւնը, հողի մշակոյթը (culture), այնքան նուրբ թելերով է հիւսուած քաղաքակրթութեան էութեան հետ, որ առաջադէմ ազգերի լեզուների մէջ երկու բառերը գրեթէ հոմանիշ են, սինոնիմ։ Երկրագործութիւնը, մարդկային օգտակար գործունէութեան ամենահին և ամենագլխաւոր ճիւղերից մինը, այն աստիճան կարևոր, ծանրակշիռ է, այն աստիճան սուրբ ու նուիրական, որ հնագոյն աւանդութիւնները տալիս են նրան աստուածային ծագում... Որովհետև հողի մէջ է, որ մարդկութիւնը գտնում է աղբիւրն իսկ իր գոյութեան. որովհետև հողն է, որ մատակարարում է ազգերի սնունդի ու կենցաղի համար առաջնագոյն անհրաժեշտութեան պէտքերը. հողն է, որ դարձնում, կերպարանափոխում է անօրգան զանգուածները ստեղծելով նրանցից — մարդկութեան ու անասնութեան համար—օրգանաւոր կենդանի նիւթեր, կրկնապատկելով ու բազմապատկելով անդադար. որովհետև, վերջապէս, հողի մշակութեամբ է, որ մի ցեղ դառնում է նստակեաց, ստեղծում է աստիճանաբար Հայրենիք։

Ահա թէ ինչու երկրի մշակոյթը դասւում է սովորաբար այնքան բարձր ու պատուաւոր աստիճանի վրայ, աւելի բարձր, քան շատ ուրիշ արուեստներ, աւելի բարձր, քան մարդկային աշխատանքի զարգացման մի քանի այլ հանգրուանները—խաշնարածութիւն, որսորդութիւն և այն։

Մի նուիրական արուեստ, որ ձեռք է բերուել հսկայական ճիգերով, անդուլ, յարաձուն աշխատասիրութեամբ, շարունակական դիտողութիւններով ու գիւտերով, որոնք փոխանցուել են ցեղի մէջ սերնդէ-սերունդ, կազմելով նրա մեծագոյն արժէքներից, ստացուածքներից մինը։

Մինչդեռ տիրապետող իսլամական ցեղերը—թիւրքը, քիւրդը—դեռ այսօր ևս տակաւին զանգուածօրէն չեն վարժուած, ընտելացած այդ թանկագին, անհրաժեշտագոյն արուեստին, հայութիւնը մղել է այն՝ անյիշատակ դարերից ի վեր։ Հայկական երկրագործութիւնը, ինչպէս և հայկական առևտուրը, կորչում են հնութեան գիշերի մէջ...

Տարաբախտաբար, մեր պատմագիրները շատ ժլատ են տեղեկութիւններով Հայաստանի երկրագործութեան վիճակի մասին. սակայն, կցկտուր վկայութիւններն էլ բաւական են հաւաստելու, որ աշխատանքի այդ ճիւղը աւանդօրէն յարգուած է եղել մեր ցեղի մէջ, որ հայութիւնը եղել է էապէս երկրագործ մի ժողովուրդ։ Դեռ Խորենացին վկայում է — փոքր ինչ թերևս չափազանցնելով — որ հայոց Արտաշէս թագաւորի օրով չէր կարելի գտնել անմշակ հողեր, ոչ դաշտային և ոչ լեռնային մասերում.

... Ի ժամանակս Արտաշէսի՝ ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային *)...

„Ղարսի նահանգում — ասում է Սիմ. Զաւարեան իր գիտական աշխատութեան մէջ — Բէշ-Քիլիսէի վանքի մօտիկ ժայռի վրայ ես գիտեցի 1894-ին հացահատիկներ ծեծելու մի գործիք, 12—14 սաժէն տրամագծով, շինուած կոկ, տաշուած քարի լաստերից, որ պահպանում է XIII—XIV դարից ի վեր և որ պարզ վկայում է, թէ որքան խորունկ ուշադրութիւն է ընծայել երբեմն հայ ազգաբնակութիւնը՝ երկրագործութեան։ Տարակոյս չկայ, որ այժմեան հայերի նախնիքների երկրագործական արուեստը չէր կարող ժառանգաբար չփոխանցել նրանց՝ մի քանի յատուկ գծեր, յատուկ բնազդ, ընդունակութիւն այդ տեսակի արդիւնագործութեան համար“ **)

Նոյն խորենացին հաւաստում է, որ „մերոնք յաճախ պտոյտներ էին գործում յունական (Միջերկրական) և կասպից ծովերի շուրջը“... անտարակոյս առևտրական նպատակներով։ Նոյնը վկայում է Ստրաբոն, վկայում են և շատ ուրիշ յոյն ու հռովմայեցի գրողներ։ Հայաստանը եղել է առևտրական յարաբերութիւնների մի

*) Հրատ. Ամստերդամ 1695 թ.։

**) Ս. Զաւարեան. Գիւղատնտեսութեան հետազոտութեան փորձ Երևանի և Ղարսի շրջանում (ռուսերէն) 1899 թ. էջ 241։

տեսակ կենտրոն Արևելքի և Արևմուտքի միջև։ Հերոդոտի ասելով, հայերը շինում էին նաւեր և լողում Եփրատի վրայից.

Հայերը օգտւում էին այդ երկու գետերից (Եփրատ և և Տիգրիս), պարսիկների հետ առևտուր մղելու համար։ Եփրատով նրանք գնում էին Բաբելոն պղնձէ կոլոր և թեթև նաւերի մէջ... Կասպից ծովը և Պոնտոսը մատակարարում էին հայերին ապրանքներ, որ նրանք վաճառում էին պարսիկներին։ Այդ ճանապարհով ոչ միայն Հիւսիսի առևտուրն էր մղւում Պարսկաստանի մէջ, այլ և Հնդկաստանինն ու Չինաստանինը, որոնց ապրանքները Օքսուս գետով իջնում էին դէպի Կասպից ծով, այնտեղից քռի վրայով տարւում էին դէպի Սև ծով, ուսկից նրանք տարածւում էին ամբողջ Եւրոպայում *)։

Երկրագործութեան հետ—առևտուր։ Մի այլ կարևոր ճիւղ մարդկային գործունէութեան, որի հետ կապած է ժողովրդական տնտեսութեան մի յատուկ ձև, մի յատուկ կազմակերպութիւն, միանգամայն տարբեր խաշնարած և զինւորական համայնքների տնտեսութիւնից։

Առևտուրը, վաճառականութիւնը, թէև ինքնին չի արտադրում, արդիւնաբերում, բայց խթանում է արդիւնաբերութիւնը, փոխադրում ու բաշխում է արդիւնքները ժողովուրդների միջև, կատարում է նոյն դերը, ինչ որ արիւնատար անօթները մարդկային, կենդանական օրգանիզմի մէջ։

Ահագին է, մանաւանդ, նրա ա ն ո ւ ղ ղ ա կ ի դ ե ր ը քաղաքակրթութեան տարածման ու առաջխաղացութեան տեսակէտից։ Առևտրականն է, որ զարկ է տալիս ժողովուրդների շփման, նա է, որ միշտ արտահանութեան վայրեր փնտրելով, ճանաչում է իւրաքանչիւրի պահանջները, կենդանացնում է ազգերի հաղորդակցութիւնն ու փոխադարձ ծանօթութիւնը և ապրանքների փոխանակութեան հետ առաջ է մղում գաղափարների փոխանակութիւն, մարդկանց և զանգւածների շարունակական փոխադրումներ, ներգաղթ ու արտագաղթ... Առևտրի հետ կապւած է, վերջապէս, քաղաքների ծագումը, — և հայոց „քաղաքակրթութիւն“ բառը միանգամայն թարգմանում է առևտրի, վաճառականութեան այդ առաջնակարգ պատմական կարևորութիւնը, իբրև էապէս կուլտուրաստեղծ, քաղաքակրթիչ ազդակի։

Եւ այդ ազդակը մշտնջենապէս շեշտւեց հայ ճակատագրի դարաւոր յեղյեղումների մէջ։ Նա ունեցաւ ահագին ներգործութիւն հայոց պատմութեան, հայկական պ ր օ գ ր է ս ի և հայ-ազգային ինքնաճանաչութեան վրայ։ Առևտրական հակումը, միացած երկրագործական, մշակողական բնազդի հետ, վաղուց ի վեր ամրապէս պաւաստեցին հայ արիւնի մէջ, դարձան նրա նուիրական և անբաժան սեփականութիւն։

Ինչպէ՞ս „դարձան“... Ո՞վ է պատասխանողը։ Ինչո՞ւ այդ երկու մեծագործ բնազդները չպատւաստեցին միւս, դրացի ցեղերի մէջ. և ինչո՞ւ նրանք այնքան զօրեղ սլացք առան հայութեան մէջ...

Բ ն ա կ ա ն մ ի ջ ա վ ա յ ր ն է, որ կռում է ցեղային նկարագիրը—փաստեցինք արդէն նախորդ գլխում։

Բնութիւնն է, մանաւորապէս կ լ ի մ ա ն է, Մօնտեսկիօի, Հերդերի և այլոց հռչակած կլիման՝ որ միացած հողի գծագրութեան, ապրուստի, սնունդի միջոցների հետ, որոշում է մի ցեղի առանձնայատուկ պատկերը։ Ո՞ր բնութիւնն է, որ կռել է հայութեան „ցեղային դէմքը“, նրա կորովի, քաղաքակրթիչ, մշակողական եռանդը... Այժմե՞նն է արդեօք, թէ նախկինը,— ա՞յն, որի մէջ ապրել է ցեղը երկար դարեր, նախ քան իր չուն դէպի Հայաստան...

Հասարակական պրոգրէսը (յառաջխաղացութիւն), ինչպէս ամեն բան բնութեան մէջ, ընթանում է նաւագոյն դիմադրութեան ճանապարհով. և այդ օրէնքի զօրութեամբ, քաղաքակրթութիւնը ծլում ու զարգանում է սովորաբար այն երկրներում, այն բնական միջավայրերում, ուր աշխատելու և արտադրելու պայմանները համեմատարար դիւրին են, ուր գ ո յ ո ւ թ ե ա ն պ ա յ ք ա ր ը տանելի է, ուր մարդիկ համեմատաբար սակաւ են ճիգ թափում՝ յաղթահարելու բնութեան խոչընդոտները և հայթայթելու իրենց նիւթական գոյութեան միջոցները։

Հայոց բնութիւնը, Հայաստանի կլիմայական պայմանները դժւար են յարմարւում սոցիոլոգիայի այդ հիմնական պահանջներին։ Այդ բնութիւնը, այդ կլիման, այդ վիթխարի ձիւնային և սառցային զանգւածները, այդ բքաշունչ լեռներն ու խորանդունդ ձորերը, որ կտրատում, բաժանում են երկիրը անթիւ կանտոնների, ձգելով նրանց միջև անանցանելի խրամատներ—թւում է, թէ այդ բոլորը չէր կարող այն հեռաւոր ժամանակներում նպաստաւորել, խթանել հայոց լեռնադաշտի ազգաբնակութեան կուլտուրական ճիգը, քաղաքակրթական ինիցիատիվը, մշակողական և առևտրական եռանդը։

„Հայկական Ալպերի հսկայ լաբիրինթը — ասում է մեծ աշխարհագէտ Էլիզէ Ռէկլիւ—որ ձգւում է քռի աւազանից մինչև Սև ծովն ու Բարձր Եփրատը, մինչև Վանայ լիճն ու պարսկական սահմանները... իր բարձրաբերձ կատարներով, լերկ, չորացած զառիվայրերով, կիրճերով ու խորխորատներով... մի վայրենի, գրեթէ սարսափելի տեսք է ընդունում իր մենութեան մէջ“ *)...

Ա՜հ, անշուշտ, այդ վիթխարի լեռնադաշտը, ուր թաւալել է հայոց տխուր, մրրկածուփ պատմութիւնը անյիշատակ օրերից ի վեր, ուր խաղացել է և մեր անանման, ողբերգական դիւցազնամարտը վերջին քառորդ դարու ընթացքում—այդ հոյակապ լեռնադաշտը ունի և իր դիւթիչ հրապոյրները, իր վայրենի և խոլական

*) *Huet, Histoire du Commerce et de la Navigation des anciens,* հրատ. 1716 թ. էջ 52—53։

* *E. Reclus, Asie Antérieure.*

գեղեցկութիւնը, իր վեհափառ, հսկայաբերձ գագաթները, իր յստակ, եդեմական ջրերը, իր պայծառ և լայնարձակ հորիզոնները, որոնք զմայլումի և պաշտամունքի խօսքեր են պոկել օտար ճամբորդների շրթներից, որոնք ստիպում են մի անգլիացի Լինչի՝ հետևեալ գովքն արտասանել, Հայաստանի մեծագոյն զաւակներից մէկի—Խրիմեանի դիմագծերը բնորոշելիս.

„Իր դէմքով, կազմուածքով և բնաւորութեամբ, նա անձնաւորումն էր իր երկրի բարձրագագաթ լեռնային զանգուածների, լայնածաւալ հեռապատկերների և վճիտ ու յստակ ջրերի, որոնց ոգին յաւիտենօրէն պիտի թրթռայ քնքոյշ և վեհափառ մեղեդիների պէս այն բոլոր ճամբորդների յիշողութեան մէջ, որ պտտել են Հայաստանում“...

Կան ուրիշ հրապոյրներ ևս. կայ բերրի, արգասաւոր հողը, որ Վիտալ Կինէի ասելով, բացնում է աշխարհի լաւագոյն ցորենը, որ չնայեած անտառների բացակայութեան, տալիս է առատօրէն նաև անթիւ ուրիշ բերքեր, 1500—2000 մետր բարձրութեան վրայ,—այդ հողը, որ Քսենոֆոնի և այլոց հիացմունքն է շարժել իր անսովոր բեղունութեամբ... Կան գետերը, ջրառատ, յորդահոս, որ աղբրում են Բարձր Հայքի լեռնադաշտից, ողողելով պատկառելի տարածութիւններ. կայ հարաւային Հայաստանը, Նրա մեծագոյն մասը, որ չնայեած Պոնտոսեան Ալպերի հսկայական պատնէշին, ենթակայ է անձրևային հոսանքների՝ հոսանքներ, որ գալիս են ծովից, ուղղելով դէպի Սեբաստիոյ լեռնավայրը և հասնելով մինչև Էրզրումի դաշտը։ Կայ այն բարեբախտ հանգամանքը, որ անգամ Վանի շրջակայքում 1400 մետր բարձրութեան վրայ, կարող են բսնել ֆրանսիական Côte d'Asure-ի սքանչելի պտուղները՝ կիտրոնը և նարինջը *)... Կան բազմաթիւ այլ բարիքներ ու առաւելութիւններ, — և այնուամենայնիւ, Հայաստանի բնութիւնը ընդհանուր առմամբ չի կարելի դասել, քաղաքակրթութեան տեսակէտից, „միջավայրային“ նպաստաւոր, բարեյաջող կատէգորիայի մէջ։

Ուրեմն ամեն։ Զիւնը թափւում է հսկայական առատութեամբ և իր թանձր շերտերի տակ ծածկում ամբողջ երկիրը։ Ճամբաները փակւում էին այն վաղեմի ժամանակներում, հաղորդակցութիւնը կտրւում էր։ „Կարաւանները յաճախ կորչում էին ձիւնի զանգուածների տակ“ — այսպէս են վկայում 17-րդ դարում Հայաստան պտտող տուրիստները։ Զիւնը թափւում էր այնպիսի քանակութեամբ—ասում է Վիտալ Կինէ—որ Էրզրումի մէջ տունէ-տուն անգամ կտրւում էր հաղորդակցութիւնը։ Ջերմաչափը իջնում է մինչև 30 աստիճան զէրօից ցած։ Զիւնը և բուքը — երբեմն նոյնիսկ յունիս ամսի մէջ։ Զիւնը տեսել են Էրզրումի մէջ—անգամ յուլիսին“—յարում է Էլիզէ Ռէկլիւ...

„Գարուն չկայ այնտեղ, աւելացնում է աշխարհահռչակ գիտնականը. կան կլիմայի ծայր-բևեռներ, մերթ կատաղի սառնամանիք, մերթ կիզիչ, տրոպիկական շոգ... և Թիւրքաց Հայաստանի ազգաբնակութիւնը մասնաւորապէս շատ է տառապել այդ սոսկալի կլիմայական ծայրայեղութիւններից...

Այդ բոլորը կայ, եղել է միշտ։ Եւ սակայն... Ճիգը չի մարել այդ բնութեան զարմանալի բնակիչների մէջ, ընդհակառակը. յամառ ու տոկուն աշխատասիրութեամբ՝ ցեղը մշտապէս հակազդել է իր զարհուրելի միջավայրի տարկանոնութիւնների դէմ։ Նա ցոյց է տուել յարմարումի (adaptation) մի արտակարգ կարողութիւն։ Մերկ, սառնաշունչ բնութիւնը մէկէն ի մէկ, ճակատագրապէս չի դժբախտացնում մարդկային ցեղերը, ինչպէս որ ձոխ, փարթամ բնութիւնն էլ միանգամայն չի երջանկացնում նրանց։ Օրինակը տեսանք արդէն նախորդ գլխում։ Շարունակական և բեղմնաւոր ճիգերով հայութիւնը աջողել է գէթ մասամբ յաղթահարել բնութեան այդ խոչերն ու սարսափները, աջողել է իր անառիկ, անանցանելի լեռներում իսկ՝ մի յայտնի մշուշմն տալ քաղաքակրթութեան գործին։ Նրա դաշտերը չորացել են երաշտից—նա առուներ է փոխադրել հեռաւոր վայրերից հազար ու մի դժուարութիւններով և ջրել է, արգասաւորել։ Նրա կարաւանները թաղւել են ձիւնի ու բուրանների մէջ — նա վերստին և անվհատ նորերն է կազմակերպել ու նետել ձիւնապատ անգունդների վրայից դէպի Պարսկաստան ու Միջերկրական։ Եւ այդ բոլորը ի՞նչ ահաւոր ռիսկերով, ի՞նչ սոսկալի քաղաքական ռէժիմների տակ, ի՞նչ դաժան անապահովութեան պայմաններում... Բ ն ո ւ թ ի ւ ն ը և բ ռ ն ո ւ թ ի ւ ն ը սեղմել են, կաշկանդել նրա թափը, բայց նրա յամառ, քրտնաջան աշխատանքը ի վերջոյ յաղթող է հանդիսացել։

Բ ն ո ւ թ ի ւ ն և աշխատանք... Թերևս սխալ չէր լինի ասել, որ մէկի շնորհիւ (գլխաւորապէս) հայ ցեղը ապրել է, յարատևել, միւսի շնորհիւ քաղաքակրթւել է ու առաջադիմել։ Ո՞վ գիտէ... Զլինէր հայկական բաշուշնչ լեռնաստանը, չլինէր այդ վիթխարի ու անառիկ „Լեռ-Կղզին“—ինչպէս անուանում է մի այլ մեծանուն աշխարհագէտ, Կարլ Ռիտտէր—գուցէ Հայաստանն էլ վաղուց արդէն փոշիանար, իբրև ազգ ու հայրենիք, ինչպէս որ փոշիացել են ուրիշ, հասակակից աւելի ևս քաղաքակիրթ ժողովուրդներ, որոնք մի մի հսկաների պէս անյիշատակ հնութեան մէջ հաստատուել էին ոչ հեռու նրա սահմաններից և իրենց շքեղ քաղաքակրթութեամբ շլացրել էին աշխարհը... Բաբելոն, Ասորեստան, Փիւնիկիա և այլն։

Կարլ Ռիտտէր առանձնապէս շեշտում է, որ ամենահին ժամանակից ի վեր հայ ցեղը, դրուած լինելով անդուլ արշաւանքների թատերավայրում, կարողացել է

*) E. Reclus, Asie Antérieure.

այնուամենայնիւ պահպանել իր ազգութիւնը... Եւ բացատրում է այդ հանգամանքը երկրի դիրքով։ „Բնականապէս պաշտպանուած հայ երկիրը—ասում է նա—իր հարիւրաւոր բարձրաբերձ հովիտներով... ապաստան է եղել շատ հալածեալների“ *)...

Այո, այդ ահաւոր բնութիւնը, որ իր անբաւ հարստութիւններով և աշխարհագրական իր դիրքով Արևելքի և Արևմուտքի միջև, հրապուրել է միշտ թշնամիների բնաջնջող հորդաները, որ իր դաժան կլիմայով, իր անհամբոյր պատկերով, աշխատանքի ու վաստակի իր դժուարին պայմաններով, միացած քաղաքական անտանելի հանգամանքներին, դարեր շարունակ խորթ մոր պէս քշել է իր սահմաններից իր հարազատ զաւակներին, որոնք գնացել, բուն են դրել աշխարհի չորս կողմերում, ստանալով հրէութեան պէս թափառական ցեղի հրոչակ—այդ աղէտաւոր բնութիւնը, միւս կողմից, պայման է եղել ցեղի անսահման ֆիզիկական յարատևութեան, նա պահպանել է ազգութեան կորիզը, սուբստանցը։ Երբ նա փորձել է դիմադրել թշնամու յորձանքներին, մրցման մտնել նրանց հետ, նրան կորուստով յետ են քշել, բայց չեն կարողացել բնաջինջ անել կամ յետ մղել, որովհետև նա միշտ ամուր ապաստան է գտել իր անառիկ լեռնավայրում... Հայոց ձմեռը, ասում են պատմագիրները, յաճախ է սարսափեցրել և նահանջի հարկադրել աշխարհակալող թշնամիներին։

Այլ դրական հանգամանք։ Գտնուելով հաղորդակցութեան մեծ ճամբու վրայ, Արևելքի և Արևմուտքի միջև, հայ երկիրը եղել է միշտ շարժման, փոխադրութեան թատերավայր ոչ միայն զրահապատ ու գիշատիչ լեգէոնների համար, այլ և ապրանքների՝ որոնք շարժուել են Ասորեստանից, Պարսկաստանից, արդիւնաբերութեան այլ վայրերից դէպի Սև ծով և այնտեղից դէպի Արևմուտք... Շարժուել են Հայաստանի վրայով ապրանքների հետ՝ և մաքերը, գաղափարները, շարժուել է, կարող ենք ասենք, ամբողջ հնագարեան կուլտուրան, քաղաքակրթութիւնը... Եթէ Հայաստանը փուած չը լինէր հին աշխարհի միջազգային հաղորդակցութեան այդ մեծ ճամբու վրայ, դժուար թէ նա ունենար արդէն երրորդ, չորրորդ դարում՝ պատկառելի քաղաքակրթութիւն. հայ տարրը դժուար թէ կարողանար ստանձնել որևէ կուլտուրական նախաձեռնութիւն և Մեսրոբների ու Սահակների, Եղիշէների ու Եղնիկների հայրենիքը դժուար թէ կազմակերպուէր...

Քանի՞ դարեր Միջերկրականը առևտրի ամենախոշոր զարկերակն էր, հաղորդակցութեան մեծ ուղին արևմտեան, արևելեան և հարաւային ազգերի համար։ Արևմուտքից, մշակուած ապրանքները հասնում էին ասիական եզերքներին, ապա այնտեղից շարունակում էին կարաւանային գծերով Կովկասի, Հայաստանի վրայով դէպի Պարսից ծոց, Հնդկաստան ու Չինաստան։ Միջին դարերում, ասում է Ռէկլիւ, ջենովացի վաճառականները անցնում էին Սև ծովի եզերքներից, մտնում էին Անդրկովկասի խորքերը, հասնում էին մինչև Կասպից ծով։ Եւ միաժամանակ եւրոպացի ճամբորդները, մասնաւորապէս իտալացիք, երթևեկում էին Փոքր Ասիոյ գծերով։

Այդպիսով բնութեան արհաւրալի և ընդհանրապէս անպատշաճ պայմանների հանդէպ—պրոգրէսի ու քաղաքակրթութեան տեսակէտից—մի անգնահատելի հատուցումն էր երկրի աշխարհագրական դիրքը... Հայ ժողովուրդը, Հայաստանը, դեռ հին դարերում գտնուելով կարաւանային զարկերակ-ճանապարհի վրայ, ծառայելով իբրև մի տեսակ մթերանոց, ուսկից անցել են հին աշխարհի ապրանքային հարստութիւնները, ինքն ևս նեռուել է, իբրև գործօն, հրահրող, արգասաւոր մի ազդակ, այդ նիւթական և միանգամայն իդէական շարժման յորձանքի մէջ. յանձին իր զանգուածային ընդհանրութեան՝ նա անձնատուել է երկրագործական աշխատանքներին, փարել է մի սրբազան աւիւնով ու գորովանքով իր մաճին ու արօրին, իր նուիրական, թէկուզ և յաճախ ողբալի, տնտեսութեան շուրջը, իսկ ի դէմս իր խիզախ ու ձեռնարկու փոքրամասնութեան՝ գրկել է առևտրի և արկածալի թափառումների ցուպը, դարձել է ժամանակի ընթացքում այն կարևոր և ազդեցիկ ուժը, որին աշխարհը տուել է մի նախանձելի, պատուաւոր տիտղոս—„միջնորդ Ասիոյ և Եւրոպայի միջև“...

Դանդ էր այդ ցուպը, սարսափելի արհաւիրքների միջից էր նա հարթում ճանապարհը, բայց քաղաքակրթութեան դրօշակակիր կարաւանը ընթանում էր անխռով և անվհատ, հայ վաճառականի առաջնորդութեամբ, չէզոքացնելով — կրաւորական, համբերատար դիմադրութեամբ — թէ բնութեան և թէ մարդկանց անհաշիւ խոչընդոտները... Քայլում էր „ռայեան“, հալածական և տրորուած ամենուրեք, հանդիպելով շարունակ հարուածներ ու անարգանքներ, բայց „կլլելով“ ու ու մարսելով անմռունչ, ստոկային համակերպութեամբ։

Զափազանց բնորոշ են Դ օ բ ե ր ի այս խօսքերը, որ վերաբերում են միջնադարեան հայ վաճառականների մասնութեան ու բարոյականին.

Նրանք տանում են ամենուրեք կարգի ու հնազանդութեան մի ոգի, որը սովորաբար տալիս է նրանց վարկ ու հարստութիւն։ Առաջինչ համարելով հոգսերը, յոգնութիւնը և անգամ ստրջացումն ու նախատինքը (*humiliation et outrage*), նրանք հաւաքում են պատկառելի հարստութիւններ, առանց մտածելու ամեն տեսակ վտանգների մասին, որոնք նրանց պաշարում են այդ երկիրներում *)...

Այո՛ — գերազանցապէս „յարմարուող“ մի ցեղ... Գոյութեան կռուի մէջ յարմարուողներն ու յարատևողները անպատճառ միայն ճիրանաւոր գիշատիչները չեն։ Բնութիւնը ամենուրեք չի դատապարտել

*) *Carl Ritter, Erdkunde*, X հատ. էջ 584։

*) *Jaubert, Voyage en Arménie*, էջ 110։

ոչ-ռազմասէր ժողովուրդներին։ Նայեած միջավայրին՝ նա զարգացրել է որոշ խաղաղ համայնքների մէջ, բռնակալական ազդեցութիւններով շրջապատուած ժողովուրդների — հայերի, հրէաների մէջ — ուրիշ կարգի բնահակումներ, սրել է նրանց միտքն ու հոտառութիւնը, զարգացրել է նրանց մէջ հնարագիտութիւն, խորամանկութիւն, յամառ ու կուռ դիմացկունութիւն, զարգացրել է, մի խօսքով „յարմարելու“ այլազան բնազդներն ու ընդունակութիւնները... Բնազդներ և ընդունակութիւններ՝ որոնք, աւա՜ղ, միշտ չեն ուղղուել դէպի ազնիւը, դէպի բարձրն ու առաքինին, այլ յաճախ ստորացրել են ցեղը, կաշկանդելով, անդամալուծելով դրական, ազնիւ մղումները, արծարծելով տիրապաշտութեան, ստրկամտութեան, մարդկային անարգ սերվիլիզմի յատկութիւնները, որոնց մասին ակնարկեցինք Բայրընի բերնով մեր առաջին յօդուածի մէջ և որոնք այնքան դանդաղութեամբ ու դժուարութեամբ են արմատախլուում, տարաբախտաբար, այդ ցեղերի գիտակցութիւնից...

Որքա՜ն դժուար է դատապարտողի և խարանողի դեր ստանձնել հանդէպ այդ բացասական յատկանիշների, այդ արատաւոր բնազդների, որ հայութիւնը վաստակել է իր պատմութեան երկարատև ու դժոխային պրոցէսի մէջ... Ինչպէս անհատի, այնպէս և ցեղի այս կամ այն յատկութիւնը՝ պէտք է քննադատել և գնահատել, կանգնելով այն ժամանակի տեսակէտի վրայ, ի նկատի առնելով այն դարերի ոգին ու բնոյթը, երբ առաջացել են այդ յատկութիւնները—մի տեսակ երկաթէ, ճակատագրական անհրաժեշտութեամբ...

Այդ մռայլ ու երկարաձիգ դարերի ընթացքում, փոքրիկ ցեղը արել է այն՝ ինչ որ արել են և կ'անեն միշտ բոլոր թոյլ ու իմացական համայնքները բռնակալութեան անագորոյն խարազանի տակ. գիտակցելով իր անել, հոգեվարքային վիճակը, չունենալով ոչ մի տեղից փրկութեան գրաւական, յուսոյ նշոյլ՝ նա խոնարհութեամբ ճկել է պարանոցը, քայլել է կորագլուխ ու անմռունչ՝ հալածանքների ու անարգանքներից միջից, քայլել է, առանց իրեն հաշիւ տալու, դէպի աւելի բարձր հանգրուաններ, դէպի աւելի յուսալի ժամանակներ, երբ ըմբոստացումի կայծերը պէտք է ցայտէին ազգային ինքնագիտակցութեան մեծ վառարանից...

Ցեղը „ապրել է“... Բացասական հակումներով բեռնաւորուած՝ նա կարողացել է քարշ տալ իր գոյութիւնը ժամանակի խոլ արկածների միջից. նա ապրել է... Եւ ապրելու այդ տիրական և անողոք հրամայականի, պօստուլատի առջև՝ յաճախ նսեմանում է—հաւաքական մարմինների, ազգերի աչքում—ամեն ուրիշ մտահոգութիւն... Եւս առաւել՝ որ բարոյականութիւնը հանդիսանում է առաձգական մի հասկացողութիւն, որ նրա պահանջները տարբեր են եղել հասարակական զարգացման տարբեր աստիճանների վրայ, որ այն պատմական հեռաւոր ժամանակներում բարոյական է համարուել ամեն բան, որ նպաստել է ցեղի պահպանման և ամեն բան, որ արգելք է եղել նրա բնաջնջման *)։

Զը մոռանանք և այն՝ որ որոշ յատկութիւններ հանդիսանում են յաճախ մի տեսակ երկսայրի սրեր, որ բացասականը ժամանակի ու տարածութեան ուրիշ ծայրերում՝ զարնուում է յաճախ, իր հակոտնիայի, դրականի մէջ... Այդպէս, օրինակ, ծայրայեղ համբերատարութիւնը բռնակալական-փաշայական ռէժիմի հանդէպ, դարաւոր ու անմռունչ համակերպումը մտրակի ու կախաղանի հարուածների տակ՝ մի կողմից մեղկացրել և ստրկացրել է հայութեան լայն զանգուածները, որոնք մինչև օրս էլ վերջնականապէս չեն թօթափել այդ ստրկական մղձաւանջը. բայց միւս կողմից, նոյն չարաբաստիկ յատկութիւնների մէջ կուել-կոփուել են այդ զանգուածները, վաստակել են պաղ, անխռով, ստոյիկեան անտարբերութեան այն ջիղը, որով ազգը արհամարհել է ճակատագրի անօրինակ փորձութիւնները և իր ծով տառապանքի միջից՝ միշտ յուսավառ, նշմարել է բնազդօրէն գալոց փրկութեան արշալոյսները...

Ի՜նչ փոյթ, թէ հայ առևտրականը հին ու միջին դարերի մէջ արծարծել է ամեն տեսակ արատներ, կեղծիք, վաշխառութիւն, սարրաֆութիւն ու անսանձ շահագործումներ—որոնք այսօր էլ տակաւին ծանրացած են անէծքի պէս ցեղի հոչակի վրայ... Առևտրականն այնուամենայնիւ, հանդիսացել է ասիական խորշերի մէջ քաջ ու անխոնջ նախակարապետը եւրոպական քաղաքակրթութեան։

Տեսէ՛ք թէ ինչպիսի ոգևորութեամբ է խօսում 17-րդ դարու ճամբորդը—հոչակաւոր Պիտտօն դը Տուրնը Ֆօր — կուլտուրայի այդ անվկանդ ռահվիրաների և ամբողջ ցեղի մասին... Չնայեած որ Էջմիածինը սաստիկ վշտացրել էր նրան՝ իր ժլատ և գձուձ հիւրընկալութեամբ.

Հայերը աշխարհի լաւագոյն մարդիկն են, ազնիւ, քաղա-

*) Հայ պահպանողականները չեն կարող կարդալ այս տողերի մէջ արդարացումը իրենց վաղեմի հակայեղափոխական քարոզչութեան, Նուրեանների և Աշրգեանների բռնած տակտիկի։ „Ազգային պահպանութեան“ գաղափարն էլ առաձգական է... Հայ յեղափոխականի համարեա ազգի պահպանումը—միջազգային համերաշխութեան դաւանանքով մրսին—գերագոյն հրամայականն է։ Միայն թէ... Նա ձրգտել է միշտ պահպանել ազգը, աստիճանաբար բարձրացնելով, ազնուացնելով այն։ Հակայեղափոխականների գեռնաքարշ, ուլթրանահաճոյ քաղաքականութիւնը 19-րդ դարի վերջերում՝ ազգապահպան չէր, այլ ազգակործան։ Նա տանում էր դէպի վերջնական այլասերումն, բնաւ չ՝ապահովելով հանդերձ ժողովուրդը ֆիզիկական բնաջնջումից — ինչպէս բազմիցս փաստուած է յեղափոխական գրականութեան մէջ։

քավարի և չափազանց ողջամիտ։ Եթե նրանց երջանիկ կը համարէի զէնքի անվարժ լինելու համար, եթէ անհրաժեշտ չլինէր երբեմնապէս զէնք գործածել. որովհետև գա միակ միջոցն է խուսափելու մարդկանց անգթութիւնից...

Հայերը միմիայն իրենց առևտրով են զբաղուած և նիրհում են նրան այն բոլոր ուշադրութեամբ՝ որին ընդունակ են։ Ոչ միայն նրանք տէր են Արևելքի առևտրի, այլ և մեծ մասնակցութիւն ունին եւրոպական ամենամեծ քաղաքների առևտրական յարաբերութիւնների մէջ։ Նրանք գալիս են Պարսկաստանից մինչև Լիվորնո։ Շատ ժամանակ չէ, որ նրանք հաստատուել են և Մարսելի մէջ. իսկ քանի՞սը կան Հոլլանդիայում և Անգլիայում։ Նրանք անցնում են և մօնգոլների մտ, դէպի Սիամ, Ջավա, ամբողջ Արևելք, բացի Չինաստանից։ Ջուլֆան — հայ վաճառականների կենտրոնատեղին"...

Պատմենք Տուրնըֆորի խօսքերով իսկ՝ Շահ-Աբբասի և հայերի փոխադարձաբար արած նշանաւոր ծառայութիւնները.

Կամենալով հարստացնել իր պետութիւնը և հմտացած, որ այդ կարելի է անել միայն առևտրով, նա ուղղեց իր ուշադրութիւնը մետաքսի վրայ — որպէս ամենաթանկ ապրանքի — և քանի որ իր միւս հպատակները շատ քիչ ձիրք ունէին առևտրի մէջ, նա գրաւեց հայերին։ Վերջինների պարզ ու չափաւոր կեանքը, խնայողութիւնը, շիտակութիւնը, ձեռնարկելու ուժը, մեծ ճամբորդութիւններ տանելու կարողութիւնները, — այդ բոլորը միանգամայն յարմար էր դարձնում հայերին՝ առևտուր մղելու համար... Իսկ նրանց քրիստոնեայ լինելը՝ դիւրացնում էր նրանց յարաբերութիւնը Եւրոպայի բոլոր ազգերի հետ... Մի խօսքով, երկրագործ վիճակից՝ հայերին նա դարձրեց (Շահ-Աբբասը) վաճառականներ — և նրանք դարձան երկրագնդի ամենահռչակաւոր առևտրականները (et ces marchands sont devenus les plus celèbres commerçants de la Terre)... Արևելքի բոլոր ապրանքները յայտնի եղան Արևմուտքում, և արևմտեան արդիւնքները նոր զարդ եղան Արևելքի համար։

Ամեն տեսակ գործակալներ ուղեկցում էին կարաւաններին դէպի հեռու երկիրներ. նրանք ևս հայեր էին...

Աշխատեն իրենց համար, կամ աշխատեն Ջուլֆայի վաճառականների համար — նրանք, այդ գործակալները, անխոնջ են ճամբորդութեան մէջ, արհամարհում են եղանակների խստութիւնները։ Մենք տեսել ենք նրանցից շատերին և ամենահարուստներին, թէ ինչպէս ոտքով անցնում էին մեծ գետերը, մինչև վիզը խրուած ջրի մէջ, որպէս զի վեր բարձրացնէին ընկած ձիաներին և ազատէին իրենց մետաքսի հակերը կամ թէ իրենց բարեկամներինը։ Որովհետև, թիւրքը սայլապանները շատ էլ չեն հոգում իրենց կրած ապրանքների մասին և ոչ մի պատասխանատուութիւն չեն ստանձնում... Գետերն անցնելու միջոցին, հայերը ոտքով ուղեկցում են իրենց ձիերին և չափազանց հրահանգիչ է տեսնել, թէ որպիսի գթութեամբ օգնում են նրանք փոխադարձաբար, կարաւանների մէջ, օգնում են և ուրիշ ազգերի ուղևորներին" *)...

Մի այլ տեղ Տուրնըֆոր, խօսելով Թիֆլիսի մասին.

Երկրի, ինչպէս նաև Շամախիի ու Գանջայի մետաքսը չի անցնում Թիֆլիսով... Հայերը գնում են առնելու տեղն ու տեղը և փոխադրում են Զմիւռնիա կամ Միջերկրականի այլ նաւահանգիստներ, ֆրանկներին (եւրոպացոց) վաճառելու համար... Ամեն տարի ղրկում են աւելի քան 2000 ուղտի բեռ, Թիֆլիսի շրջակայքից և մեացած Վրաստանից — դէպի Էրզրում, ուսկից փոխադրւում է դէպի Դիարբէկիր", և այլն **)։

*) *Tournefort, Relation d'un voyage au Levant,* 1730 թ. II հատ. էջ 389—393։

**) Նոյն հատորը, էջ 315։

Մի այլ տեղ, վերջապէս, նշանաւոր գիտնական-ճամբորդը, նկարագրում է հիացմունքով Երևանի և դաշտի մշակութիւնը հայերի ձեռքով.

Երևանը, պարսկական Հայաստանի մայրաքաղաքը, լեցուն է խաղողի և այլ այգիներով. մարգագետինները խճողուած են պտղատու ծառերով և խաղողով... չնայեած որ ցրտի պատճառով վերջինի մշակութիւնն ու զարգացումը հանդիպում է ահագին դժուարութիւնների... Դաշտը սոռոգուած է գեղեցիկ աղբիւրներով և գիւղական տները գրեթէ նոյնքան բազմաթիւ են, ինչպէս Մարսելի շրջակայքում։ Լաւագոյն հողերը ծածկուած են հացահատիկներով, բամբակով, բրինձով. վերջինը փոխադրւում է գլխաւորապէս Էրզրում...

Մի ուրիշ շատ հին ճանապարհորդ, միսիոնար Վիլլետ, որ ուղևորուել է դէպի Թիւրքիա և Հայաստան 1668 թուին, հետևեալն է գրում.

Առևտուրը, գլխաւորապէս մետաքսի առևտուրը մղւում է կարաւաններով դէպի Զմիւռնիա, այնտեղից դէպի Հալէպ, ապա դէպի Levant, ուսկից՝ դէպի Եւրոպա։ Հայ խաչը վաճառականները դարձրել են մետաքսը իրենց առևտրի մեծագոյն բաժիններից մինը։ Կան, որ ամբողջ կարաւաններ են բարձում մետաքսի հակերով *)...

Այդ միսիոնարի վկայութեամբ՝ կային միլիոնատերեր՝ հայ վաճառականների մէջ։

Միւս հինաւուրց ճանապարհորդը, Ամէդէ Ժոբերը նոյնպէս հիացմունքով է խօսում վաղեմի հայերի մշակողական և առևտրական ընդունակութիւնների մասին։ Նա նկարագրում է Վանի շրջակայքը...

Դաշտը պատած է այգիներով, ուր բարձրանում են գեղեցիկ վրաններ։ Չկայ ոչինչ աւելի կախարդիչ, քան այդ մրգաստանների տեսարանը, սոռոգուած անհաշիւ առուներով և շրջապատուած պարիսպներով։

Առևտուրը մղւում է լճի վրայով, կարաւանները գնում են Բաղդադից, Մոսուլից, Մարդինից և Դիարբեկիրից դէպի Թիֆլիս և հիւսիսային Պարսկաստանը...

Հայերը ցոյց են տալիս մեծ խելք և ազնուութիւն առևտրի մէջ։ Ինչպէս յոյները եւրոպական Թիւրքիոյ մէջ, նրանք իրենց ձեռքն են առած բոլոր հանրային եկամուտների գանձումները ասիական Թիւրքիայում... Նրանք տարածուած են Ասիայի գրեթէ ամբողջ մակերևոյթի վրայ, ուր ժողովում են պատկառելի հարստութիւններ **)..

Կարլ Ռիտտէր, խօսելով Հնդկաստանի հինաւուրց գաղութների մասին, յիշատակում է և հայերին.

Հայերը մտել ու հաստատուել են Դեկանի մէջ, իբրև առևտրականներ. նրանք շարունակական յարաբերութեան մէջ են հրէաների և սիրիական քրիստոնեաների հետ։

Տիբեթի Սիննինդ քաղաքի մէջ, 18-րդ դարի սկզբում եղել են հայ մուշտակավաճառներ... Լամա դերդաստանի հովանաւորութեան տակ՝ այլ և այլ համայնքներ գտնւում էին խաղաղ հաղորդակցութեան մէջ... Հ. Ռէգիս գտել է Տօպա վաճառանոցում Չինաստանի և արտասահմանի բոլոր ապրանքները... Առևտրականների մէջ, այդտեղ, նա գտել է նաև հայ կաթոլիկներ, որոնք ունեցել են մի վաճառատուն ամենագեղեցիկ մուշտակներով ***)։

Հարիւր տարի առաջ — ասում է Ռիտտէր — Արևելքի

*) *Villette, Voyage d'un missionnaire en Turquie, en Arménie.* Հրատ. 1730 թ. էջ 531։

**) *A. Jaubert, Voyage en Arménie et en Perse,* 1807 թ. էջ 110, 138.

***) *C. Ritter, Die Erdkunde, t.* 2, էջ 177։

քաջածանօթ մէկը, ֆրանսիացի De la Croix այսպէս էր ներկայացնում իր տեսած՝ Պոլսի և առաջաւոր Ասիոյ հայերին.

Նրանք շատ խելացի ու հասկացող են, ժուժկալ, խաղաղասէր, քաղցրաբարոյ, շատ աշխատասէր, տնտեսող և անխոնջ։ Առևտրի մէջ այնքան խելօք են, որ հրէաներին անգամ կը գերազանցեն։ Պոլսից և Զմիւռնիայից մինչև արևմտեան Եւրոպայի ամենահեռաւոր ծայրերը՝ նրանք ամենուրեք տանում են իրենց արժէքաւոր ապրանքները և ծախում են մի այնպիսի փորամանկութեամբ, որ գրեթէ անհնարին է չխաբուել նրանցից *)։

Նոյն ձևով է նկարագրում մի ուրիշ արևելագէտ.

Հայերը սովորում են թիւրը լեզուն աւելի կատարելութեամբ, քան որևէ այլ ժողովուրդ. ջանասիրութիւն, գիմացկանութիւն, չափաւորութիւն — հայկական բնաւորութեան գծերն են։ Բայց դրա հետ կայ և կոպտութիւն, անճաշակութիւն և այլն։

Նման գնահատութիւն անում է և Շարդէն **)։ Դրական գծերի հետ նա յիշատակում է մասնաւորապէս հայ հարուստների ստրկամտութիւնը, խաբէութիւնները, հլու սպասաւորութիւնը փաշաների հանդէպ և այլն։

Արգելքները — անհամար։ Զնայեած առատ կաշառքներին և ընծաներին, որոնցով հայ առևտրականը ձգտել է միշտ սիրաշահել փաշաների ու վալիների սիրտը—նա, այնուամենայնիւ, եղել է միշտ կաշկանդուած իր շարժումների մէջ։ Կաշկանդուած—անգամ Պոլսում, Եւրոպայի դրան մօտ։ Թւում է թէ Պերսիայի մէջ միայն նրանք վայելել են մի յայտնի ապահովութիւն։

Հարուստ հայերը, ասում է Օլիվիէ, եկան հաստատուեցին Պերսիայի թաղում, որպէս զի աւելի սակաւ ենթարկուին թիւրքերի կեղեքումներին ու անարգանքներին և որպէս զի մի քիչ աւելի ազատութիւն վայելեն եւրոպացիների ներկայութեան շնորհիւ։

Եւ ապա շարունակում է Օլիվիէ (խօսելով եւրոպական Թիւրքիոյ և մասնաւորապէս Պոլսի մասին).

Հայերը ամենքն էլ վաճառական են։ Նրանք են, որ մղում են ամենալայն առևտուրը և մղում են ամենամեծ խմացականութեամբ։ Նրանք հաւբերատար են, տնտեսող, անխոնջ։ Նրանք ճամբորդում են Ասիոյ ներսում և Հնդկաստանում։ Ունին վաճառատներ և թղթակիցներ՝ ամենուրեք։ Մեծամասնութիւնը կիրառում է մեքանիկ արուեստներ։ Բանկիրներ են, մատակարարներ, փաշաների ու այլ մեծերի գործակալներ։ Նրանց մեղադրում են այն բանի մէջ, որ անխտիր ամեն միջոց գործ են դնում, հարստանալու համար և որ խաբում ու կեղծում են ապրանքները, երբ կարող են։ Այսուհանդերձ, ձգտելով ըստ կարելւոյն շատ վաստակել, նրանք սակաւ են զանցառու լինում իրենց յանձնառութիւնների նկատմամբ և առհասարակ ճշտապահ են իրենց խոստումները կատարելու մէջ։ Խստաբարոյ և տգէտ ու նախապաշարուած՝ նրանք պէտք ունին միայն կրթութեան և փոքր ինչ արդար կառավարութեան, որպէս զի դառնան անսահմանօրէն յարգելի մի ժողովուրդ **)) (un peuple infiniment estimable)...

Տգէտ և նախապաշարուած—անշուշտ։ Բայց և այնպէս, Արևելքի ժողովուրդների մէջ ամենից աւելի աչքաբացը, ամենից աւելի կրթուածը։

Դիմենք դարձեալ օտար վկայութիւնների, որոնք աւելի անաչառ և օբ'եկտիվ լինելու հանգամանք ունին։ Ահա թէ ինչ է ասում նոյն, 1730 թուին Հայաստանի մէջ ճամբորդած միսիոնարը.

Արևելքի բոլոր ազգերի մէջ հայերը այն ազգն են, որ ամենից քիչ են հեռու եղել եւրոպացիներից և որ ամենից աւելի են ունեցել եռանդ՝ կրթելու, առաջադիմելու *))...

Վիկտոր Լանգլուա նկարագրում է միւս կողմից այն լայն առևտրական յարաբերութիւնները, որ ունեցել է Կիլիկիոյ հայութիւնը Արևմուտքի հետ, Ռուբինեանների ժամանակ.

Կիլիկեան վենետիկցիների համար մի ժամանակաւոր օթևան էր, ուր նրանք ունէին իրենց շուկաները... Իսկ ջենովացիների համար Հայաստանը գաղթականութեան մի երկիր էր, ուր հանրապետութեան վաճառականները ունէին իրենց առևտրական տները...

Կիլիկիոյ հայոց վաճառականութիւնը կայանում էր տեղական արդիւնքների և մի քանի օտար ապրանքների վաճառելու մէջ, որոնք կամ բերւում էին Հնդկաստանի ու Պարսկաստանի կարաւաններով, կամ թէ արևմտեան վաճառականների նաւերով... Հայերը փայտի առևտուր էլ էին անում, որ կորում էին Ցաւրոսի անտառներից, և մետաղների առևտուր, որ հանում էին լեռան հանքերից. վերջապէս աղի, հացի, իւղի, բամբակի առևտուր։ Ապա և թթենու մշակութիւն, շերամապահութիւն։ Բայց նրանց ապրուստի գլխաւոր աղբիւրներից մինն էլ՝ արևմտեան ապրանքների տարածումն էր Արևելքի խորքերում։ Լինելով գործունեայ, աշխատասէր և խելացի մարդիկ՝ նրանք յանձն էին առնում եւրոպացոց հաշուին տանելու արևմտեան բերքերը կարաւաններով մինչև Պարսկաստան և Թաթարստանի ու Հնդկաստանի սահմանները **))։

XIX-րդ դարու վերջերում, Էլիզէ Ռէկլիւ կրկնում է նոյն հինաւուրց նպաստաւոր կարծիքները հայ տարրի բազմակողմանի կուլտուրական հակումների մասին.

Թէ Էրզրում և թէ Պոլիս՝ հայերը տարբերւում են թիւրքերից աւելի բաց, հաղորդասէր և ազատ մտքով կրթելու, աւելի մեծ սիրով, աւելի մեծ նախաձեռնութեամբ առևտրի ու արդիւնագործութեան մէջ։ Վանի վիլայէթում չկայ մի հատիկ տուն՝ որ շինուած չլինի նրանց ձեռքով, չկայ տեղական մի պաստառ, որ նրանց մատների արդիւնք չլինի. հազիւ թէ գտնուի մի պտուղ, որ բուծ չլինի նրանց այգիներում ***))։

Վերջապէս, ահա և Հաքստհաուզէն, Խաչատուր Աբովեանի հռչակաւոր բարեկամը, որ այնքան ներհուն կերպով հետազօտել է Անդրկովկասը։

Նա խօսում է հայերի կոչման մասին՝ ասիական ժողովուրդների մէջ.

Կարելի է ասել, որ նրանք կազմում են մի տեսակ թթուալիճ (Sauerteig), որ նետւել է Ասիոյ խմբուող տարերքների մէջ, որպէս զի վերստին արթնացնէ և նորոգէ

*) Erdkunde, X հատ., էջ 634։

**) Chardin, Voyage en Perse.

***) Olivier, Voyage dans l'Empire Ottoman. էջ 15, 28։

*) Villette, Voyage d'un missionnaire, էջ 44։

**) V. Langlois, Le trésor des Chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens. Քաղ. „Փորձ"ի 1876 թ. No 1-ի մէջ, Ստեփ. Պալասանեանի մի յօդուածում։

***) Asie Antérieure, էջ 341։

մտաւոր կեանքի գրեթէ արդէն մեռած սաղմերը *)... (um die fast erstorbenen Keime des geistigen Lebens wieder zu erwecken)։

Մխիթարա՞ն, կազդուրիչ, ազգային հպարտութիւնը շոյող ու խթանող յայտարարութիւններ...

Որքա՞ն, սակայն, գորշ ու անփառ էր հայ-ազգային իրականութիւնը միջնադարեան այդ ահագին ժամանակաշրջանում...

Դարերը յաջորդում և նմանում էին իրար։ Կեանքը —մի հսկայ, անօրինակ տարտարոս, հիւսւած արիւնի և աւերածի անվերջ տեսարաններից։ Աշխատանքի պայմաններն էլ չէին փոխւում։ Երկրագործութիւնն ու առևտուրն էլ ենթակայ էին արևելեան քար անշարժութեան օրէնքին։ Կիւրոսից մինչև Զինգիզ և Թիմուր, մինչև նոր ժամանակները — ասիական ցեղերի արդիւնագործութիւնն ու ներքին հաղորդակցութիւնը՝ գրեթէ նոյնն է։ Քաղաքական արիւնազանգ փոթորիկներն ու վերիվայրումները չէին մտցնում էական փոփոխութիւն աշխատանքի և միջցեղային արդիւնաբերութեան ու առևտրի մեթոդների մէջ։ Նման էին և այդ քաղաքական փոթորիկները։ Հրաբխային ճակատագրականութեամբ պայթում էին նրանք, ցիկլօնի պէս սրարշաւ պտոյտներ գործում և ծածկում ընդարձակ տարածութիւններ աւերակների կոյտերի տակ։ Ապա նորէն վերածւում էին շէն, բարգաւաճ քաղաքները բարբարոսութեան մոխիրներից...

Ազգային ինքնաճանաչութեան մասին խօսք չէր կարող լինել։ Ազգը չկար։ Նա յաշոտուել էր, անդամալուծուել։ Կային նրա մի շարք հիմնական տարերքները։ Կար ընդհանուր հողը և ընդհանուր, արիւնակցական ծագումը։ Կար տանջանքի ընդհանրութիւնը՝ բռնութեան ռէժիմի տակ։ Կար աւանդութիւնների և առասպելների համեստ շտեմարանը։ Կար հաւաքական ստեղծագործող աշխատանքը, որ մեղմում էր անհիւրընկալ բնութեան արհաւիրքները և ապրեցնում համայնքը։ Կար ցեղի ուրոյն հանճարը, նրա յատուկ և շինարար ոգին, նրա յամառ և անվկանդ առաջխաղացութեան տենչը։ Կար, վերջապէս, եկեղեցին, որ իր տգէտ ու ողբալի կղերով հանդերձ, մեծապէս նպաստել է ցեղի պահպանութեան, իր ձեռքն առնելով նրա ճակատագրի ղեկը, քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ...

Չկար այդ բոլորը միացնող, ամբողջացնող ստեղծագործութիւնն ու ազդակը։ Չկար հաւաքական ժառանգութեան անհրաժեշտ մթերանոցը։ Չկար ազգային գրականութիւն, լեզու — նոր լեզու — և պատմութիւն։ Արդիւնաբերող աշխատանքը ստեղծում է ազգի նիւթական քաղաքակրթութիւնը, իսկ լեզուն և գրականութիւնը ստեղծում են իմացական։ Երկուսն էլ անհրաժեշտ են, նուիրական են։

*) *August F. V. Haxthausen, Transkaukasia*, հրատ. 1856. Լայպցիգ, հատ. *I* էջ 292։

Անգամ Էջմիածնում—հայութեան մտաւոր ու բարոյական կենտրոնավայրում—Տուրնըֆոր չի լսում հայկական բառբառ։ Տիրապետում էր պարսկերէնը։ Հայը մեծ մասամբ օտարախօս էր։ Նա սիրով ու դիւրութեամբ հոլովում էր տաճկերէնը, պարսկերէնը։ Կարաւանների հայ վաճառականները խօսում էին իտալերէն—ասում է Տուրնըֆոր։

Անգամ իտալերէն... 17-րդ դարում։ Եւ ի՞նչ զարմանք։ Մի ճարպիկ, հաղորդական, ընդունակ ցեղ, որ առևտրական կենդանի յարաբերութեան մէջ է Եւրոպայի, Իտալիայի վաճառաշահ կենտրոնների հետ՝ շտապում է իւրացնել նախ և առաջ հաղորդակցութեան անհրաժեշտ գործիքը...

Եւ դարձեալ—ուշագրաւ իրողութիւն—այդ կօսմոպոլիտ, օտարախօս դասակարգն էր, որ պիտի վառէր օտարութեան մէջ մի քանի աղօտ ճրագներ հայրենիքի վերածնութեան։ Այդ վերածնութեան սերմերը պիտի գային դրսից, քանի որ բուն հայրենիքը մի ցուրտ ու մառասպան դժոխք էր...

Գոյութեան այդ դաբեւոր կուի մէջ հայերը, հարկադրուած լինելով շարունակ իրենց ուշք ու միտքը և բոլոր բարոյական ու նիւթական զօրութիւնները կենտրոնացնել ինքնապահպանութեան՝ ազգերի այս ամենաթանկ սեփականութեան մէջ, ժամանակ չեն ունեցել, ի հարկէ, մտածելու մտաւոր և հոգևոր զարգացման վրայ, այսինքն առհասարակ կրթութեան և արուեստների բարգաւաճման վրայ...

Ճիշտ է ասում Պալասանեան *)։ Հայ վաճառականներ են, որ հիմնում են համեմատաբար ազատ Եւրոպայում՝ տպարաններ, հրատարակում են հայերէն լեզուով մի շարք գրքեր, փորձում են նոյնիսկ խզել կրօնական մարզանքների—աղօթագրքերի, սաղմոսների—աւանդութիւնը և աշխարհական ուղղութիւն ու աշխարհիկ լեզու տալ նորաբողբոջ գրականութեան։

Տպագրութիւնը — ասում է Լէօ — XVII դարի երկրորդ կիսում անընդհատ զարգանում է թէ արեւսի և թէ տպած գրքերի ներքին արժանաւորութիւնների կողմից։ Այդ առաջադիմութիւնը ամբողջովին հայ գաղթականութիւնների գործն է և վաճառական դասակարգի ջանքերով է պահպանւում... Հայ տպարանը դարձեալ թափառական է, ինչպէս նախորդ դարում, դարձեալ հեռու է մայր-հայրենիքից։ Նրա հետ թափառում է և հայ գրականութիւնը, որ կամ Ամստերդամ է լոյս ընկնում, կամ Մարսէյում, կամ թէ Լիվոռնօի ու Վենետիկի մէջ։ Այս թափառական դրութիւնը մեր գրականութեան մի մշտական յատկութիւնն է դառնում։ Մինչև այդ՝ գրագիտութեան և դպրութեան տեղերը Հայաստանի վանքերն էին. բայց տպարանը հանում է գրականութիւնը մայր-երկրից և տանում է իր հետ զանազան տեղեր, ուր կան հայ գաղթականութիւններ և ուր երկար կամ կարճ միջոցով վառւում է գրական լոյսը **)։

***

Հասարակութիւնները այնտեղ են միայն համեմատաբար արագ զարգանում և դառնում կուլտուրատիպ ազգութիւններ, ուր նիւթական և գաղափարային աշխատանքի լայնարձակ ասպարէզի մէջ շեշտւում է ան-

*) „Փորձ“, 1876 *No II*։

**) Հայկական Տպագրութիւն, հատ *I*, էջ 356։

Հատկան ինիցիատիվը, ձեռներեցութեան ոգին։ Իւրաքանչիւր ազգ — եթէ նա ազգ է բառի ճշմարիտ իմաստով և ոչ երամական ու մեքենական մի զանգուած—իւրաքանչիւր ազգ ունի իր մեծ անհատները, ունի իր խոշոր ինիցիատորները՝ թէ մտաւոր-հոգեկան և թէ քաղաքական վերածնութեան աշխարհում։ Հայ ժողովուրդն ևս, իր յօշոտուած, անդամալոյծ վիճակում իսկ, իր արիւնոտ փլատակների, լացի ու հեծեծանքների մէջ, չզլացաւ իր պատկառելի տուրքը ազգայնութեան և քաղաքակրթութեան այդ պահանջին։ Դարերի անդուլ շփումը արևմտեան համեմատաբար լուսաւոր կենտրոնների հետ—շփում տնտեսական, առևտրական, մտաւոր ու հոգեկան — և այդ շփման հետ կապուած հայկական աղօտ տենչանքները դուրս կոչեցին ցեղի մէջ մռայլ ու պատառոտուած ծոցից մի շարք կորովի և ձեռնարկու անհատներ, որոնք, այսպէս ասած, խրամատեցին, ճեղքեցին հայութեան միջնադարեան կեանքի պարիսպը, և որոնցից երկուսը, հրապարակ գալով 17-րդ դարու վերջում և 18-րդի սկզբում, վաստակեցին խոշոր հռչակ, նոյնիսկ Եւրոպայում։

Մինը մտաւոր վերածնութեան ռահվիրայ էր, միւսը—քաղաքական։ Մինը գնաց տնկելու Ադրիատիկեան ջրերի մէջ հայոց լեզուի, գրագիտութեան ու քաղաքակրթութեան դրօշը, ծանօթացնելու Եւրոպան հին ազգի կուլտուրական ժառանգութեանը և դարբնելու գաղափարային ազգակցութիւնը արևմտեան մտաւորականութեան հետ։ Միւսը գնաց բաղխելու Եւրոպայի իշխողների դռները, ազդարարելու, որ կայ այնտեղ, հեռուն, Արարատի շուրջը, „Եւրոպականացած ասիացիների“ ժողովուրդը, ենթակայ մահմեդական այլասեռող լծերի, որ այդ ժողովուրդն արժանի է քաղաքական ազատութեան, մարդավայել կենցաղի, որ նա իրաւունք ունի կոչ անելու քաղաքակիրթ աշխարհի աջակցութեան ու հովանաւորութեան, որ „Հայկական Խնդիրը“ դրուած է այն օրից իսկ, երբ այդ մի բուռն առաջադէմ համայնքը, իր „Կղզի-Լեռ“ հայրենիքում, արիւնարբու հօրդաներով շրջապատուած, հռչակել է քրիստոնէութիւնը և նրա հետ գրկել է արևմտեան քաղաքակրթութեան ջահը...

Երկու նշանաւոր ռահվիրաներն էին—Մխիթար Աբբա և Իսրայէլ Օրի։

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԴՐՕՇԱԿ“Ի
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

		Ֆր.	ս.
1.	**Ապատամբական ոգի** (սպառուած)	10	
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառ.)	5	
3.	**Դաղջի տպարան** (սպառ.)	5	
4.	**Դիտական սոցիալիզմ, Ֆ. ԷՆԳԵԼՍ** (սպառ.)	40	
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր** (Ի. տպագր.)	—	
6.	**Կուկունեան խմբի արշաւանքը** (սպառ.)	20	
7.	**Կարնոյ յիշատակին** (*Զորս հատուած*) (սպառ.)	50	
8.	**Հ. Յ. Դ. Ա-ոյ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը**	—	
9.	**Գրիժներ**, Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ (սպառ.)	20	
10.	**Սրիտաստարդներին**, Պ. ԿՐԱՊՈՏԿԻՆ, թարգմ. Մ. Վ. (սպ).	20	
11.	**Ազատութեան նահատակներին**, ՂԱՐԻԲ, Ա. (սպառ.)	30	
12.	„ „ „ Բ.	60	
13.	**Ամբոխային տրամաբանութիւն**, ԷԼԼԷՆ. (սպառ.)	50	
14.	**Ազատութեան նահատակներին**, ՂԱՐԻԲ. Գ.	30	
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա**	50	
16.	**Կովկասեան վէրքեր**, ԷՄԱՆՈՒԷԼ ԱԿՆՈՒՆԻ (սպառ.)	3	—
17.	**Հայրենիքի զաղափարը**, ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպ.)	1	—
18.	**Սազմակերգական կանոններ** (Բ. տպագր.)		—
19.	**Դէպի կռիւ**, Է. ԱԿՆՈՒՆԻ (սպառուած.)	2	—
20.	**Յեղափոխականներ**, Ս. ՆԻԿՎԱՆԵԱՆ (սպառ.)	20	
21.	**Նախագիծ Կովկասեան գործունէութեան** (Բ. տպ.)	20	
22.	Подвиги царизма, В. Араратскій	—	
23.	**Les tueries de Bakou,** A. ARAZI (սպառ.)	20	
24.	**Յեղափոխական դաշն** (սպառ.)	20	
25.	**Հ. Յ. Դ. Ա-ոյ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը**	—	
26.	**Կոչ Մահմէտականներին** (թուրքերէն)	10	
27.	**Les Plaies du Caucase,** AKNOUNI	2	—
28.	**Ազատութեան նահատակներին**, ՂԱՐԻԲ Դ. գրոյկ (սպ.)	40	
29.	**Մեծ մարդասպանի դէմ** (Դատավարութիւն)	50	
30.	**Վիսոսի բազէն**, ՎՏԱՐԱՆԴԻ	50	
31.	**Յեղափոխական մտքեր**, ՔՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ	1	—
32.	**Հայորդիներ**, ՍԻԱՄԱՆԹՕ	50	
33.	**Սասուն-Մուշի կռիւները**	10	
34.	**Հայոց տանջանքները եւ Եւրոպան** (դասախօսութիւն կարդաց. Բերլինում), Է. Դ. ԲԵՐՆՇՏԱՅՆ.	50	
35.	**Մարտական հրահանգներ**, ԱՆԴՐԱՆԻԿ	1	—
36.	**Միացէ՛ք**, կոչ թիւրքիոյ բոլոր ազգերին (թիւրքերէն)	10	
37.	**Թիւրքական բանտերը**, ՄԱՐ	25	
38.	**Տեղական կուսակցութիւններ Ռուսաստանում**, ԱՐԱՐԱՏՍԿԻ	50	
39.	**Հայաստան եւ Եւրոպա** (դա ախօսութիւն կարդացած Բերլինում), Գ. ԲՐԱՆԴԷՍ.	20	
40.	**Աղքիւր-Սիրոք** (Կենսագրական), Ս. Մ.	25	
41.	**Եւրոպ. կարծիքներ Հայ Դատի մասին.**	30	
42.	**Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան (1907)**	—	
43.	**Դ-ոյ Ընդհանուր Ժողովի որոշումներ (1907)**	—	
44.	**Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (1907)**	—	
45.	**Programme-minimum,** Հ. Յ. Դ.	—	
46.	**Rapport** (Տեղեկագիր) ներկայացուած Միջազգային սոցիալիստ. կոնգրէսին (Շտուտգարտ)	—	
47.	**Դէորգ Զաւուշ.**	20	
48.	**Déclaration du Congrès des Partis d'opposition de l'Empire Ottoman**	—	
49.	**Le Criminel sur le Trône,** E. AKNOUNI	10	
50.	**Յայտարարագիր Օսմանեան կայսրութեան ընդդիմադիր տարրերու կոնգրէսին**	—	
51.	**Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“** (Ռուսերէն)	—	
52.	**Սոցիալիստի նամակներ**, ԱՐԱՐԱՏՍԿԻ	1	—
53.	**Նախագիծ ժողովրդ. իմքնապաշտպան.**, ԴՈՒՄԱՆ	40	
54.	**Ընդհ. կրթութեան թեզիսներ**, Դր. Ժ. ՕԼԻՎԻԷ, թարգմ. ԱՏՈՄ.	50	
55.	**Ուղեցոյց ընկերներին**, ԱՐԱՐԱՏՍԿԻ.	30	
56.	**Համաժողովրդական բանակ**, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ.	30	
57.	**Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (1909)**	—	
58.	**Որոշումներ Հ. Յ. Դ. Ա-ոյ Ընդհանուր Ժողովի**	—	
59.	**Տեղեկագիր** (*Rapport*) ներկայացուած Միջազգային սոց.կոնգրէսին (Կոպենհագ), Մ. Վ.	—	
60.	**Նոյնը գերմաներէն լեզուով.**	—	
61.	**Վերածնող հայրենիքը եւ մեր դերը** (Դաշնակցութեան 20-ամեակի առիթով), ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ	3	—
62.	**Հոսանքներ** (Մարքսիզմ, Անարխիզմ, Սինդիկալիզմ), ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ	3	—